ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԼԵՀ ՌՈՒԲԻՆՅԱՆ
ԻՇԽԱՆԱՊԵՏ ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 854

Հրատարակվել է Երևանի պետական համալսարանի
աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի և
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և
հասարակագիտության ամբիոնի որոշմամբ:

Խմբագիրներ՝ պ. գ. դ., պրոֆ. **Ա. Եղիազարյան**,
պ. գ. թ., դոց. **Լ. Մկրտումյան**,
պ. գ. թ., դոց. **Դ. Թինոյան**,
Լեզվական խմբագիրներ՝ բ. գ. դ. **Փ. Մեյթիխանյան**,
բ. գ. թ., դոց. **Վ. Ավագյան**

Հովհաննիսյան Արամ
Հ 854 Մլեհ Ռուբինյան. իշխանապետ Կիլիկիո հայոց /
Ա. Հովհաննիսյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2022, 206 էջ:

Աշխատանքը նվիրված է Կիլիկյան Հայաստանի նշանավոր ռազմական և դիվանագիտական գործիչ Մլեհ Ռուբինյանի կյանքին և գործունեությանը:

Աշխատանքում մանրամասնորեն լուսաբանված են Մլեհի իշխանության գալու հանգամանքները, նրա վարած ներքին, արտաքին և եկեղեցական քաղաքականությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել հայոց իշխանապետի՝ Հալեպի տիրակալի հետ ունեցած համագործակցությանը, որի շնորհիվ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը հզորացավ, ընդարձակեց իր սահմանները՝ ամրապնդվելով Միջերկրական ծովի ափին: Աշխատանքը կարող է օգտակար լինել պատմաբանների, քաղաքագետների, դիվանագետների և հայոց պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2553-8

© ԵՊՀ հրատ., 2022
© Հովհաննիսյան Ա., 2022

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 5

Գլուխ առաջին

ՄԼԵՀ ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1137-1169 ԹԹ. 30

1.1 Մլեհ Ռուբինյանի մուտքը պատմական ասպարեզ 33

1.2 Կիլիկիայի հայոց իշխանապետությունը և Մլեհի գործունեությունը 1140-1150-ական թթ. 42

1.3 Մլեհի մասնակցության հնարավորությունը Հարիմի ճակատամարտին 49

1.4 Ռուբինյան եղբայրների հակամարտությունը և Մլեհի արտաքսումը Կիլիկիայից 53

1.5 Մլեհի ծառայության անցնելը Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի արքունիքում 57

Գլուխ երկրորդ

ՄԼԵՀԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 64

2.1 Կիլիկիայի Թորոս Բ իշխանապետի մահը և իշխանության գրավումը Մլեհի կողմից 64

2.2 Ռուբենի փախուստը Կիլիկիայից և նրա մահվան հանգամանքները 79

2.3 Մլեհի իշխանապետությունը 83

2.4 Մլեհ իշխանապետի պայքարը Լամբրոնի Հեթումյանների դեմ 86

2.5 Սիսը Կիլիկիայի հայոց իշխանապետության մայրաքաղաք 91

2.6 Մլեհի ընտանիքը 94

Գլուխ երրորդ

ՄԼԵՀ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 95

3.1 Մլեհի ուրացյալ լինելու հարցը 97

3.2 Մլեհի միջամտությունը 1173 թվականի հայոց կաթողիկոսի ընտրություններին 105

Գլուխ չորրորդ
ՄԼԵՀ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ 124
4.1 Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականության շրջադարձը 124
4.2 Կիլիկիայի պետության տարածքային ընդլայնման քաղաքականությունը 135
4.3 Մոսուլի աթաբեկության հետ դաշինքի վերացումը 151

Գլուխ հինգերորդ
ՄԼԵՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ 154
5.1 Մլեհի սպանության տարեթվի խնդիրը 154
5.2 Մլեհ իշխանապետի սպանության վայրը 158
5.3 Մլեհ իշխանապետի սպանության շարժառիթները 160

ՎԵՐՋԱԲԱՆ 171
ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 186

ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ 190
7.2 ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ 190
7.1 ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ 194
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 196
6.1 Ա. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ 196
6.2 Բ. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 198
6.3 Գ. ՀՈԴՎԱԾՆԵՐ 201

Նախաբան

Կիլիկիան իր բարենպաստ ռազմավարական դիրքի պատճառով գրեթե միշտ պայքարի թատերաբեմ է եղել տարածաշրջանի տարբեր պետությունների միջև: Մինչև 1080թ. այն գտնվում էր Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Այս նույն ժամանակաշրջանում հայերը Մեծ Հայքում կորցրին իրենց պետականությունը և սկսեցին զանգվածաբար գաղթել Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններ, այդ թվում և Կիլիկիա: Զանգվածային գաղթի պատճառով նրանք դարձան Կիլիկիայի բնակչության մեծամասնություն և պայքար սկսեցին սեփական պետության ստեղծման համար: Արևմուտք տեղափոխվեց նաև հայոց կաթողիկոսարանը: Կիլիկյան տարածաշրջանում ստեղծված հայկական մի քանի իշխանություններ գոյատևեցին մինչև իրենց հիմնադիրների մահը, սակայն մեր պատմության համար կարևոր դեր խաղաց 1080 թվականին իշխան Ռուբենի հիմնած հայկական իշխանությունը, որն ստացավ Ռուբինյան իշխանություն անվանումը, կարողացավ գոյատևել բավական երկար և 1198 թվականին վերածվեց թագավորության: Կիլիկիայի հայոց պետությունը ունեցավ տնտեսական, հոգևոր-մշակութային և քաղաքական ծաղկուն կյանք: Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ կարևորությամբ առանձնանում է իշխանապետության ժամանակաշրջանի և առանձնապես 12-րդ դարի երկրորդ կեսերի պատմության ուսումնասիրությունը. մի այնպիսի բարդ ժամանակաշրջան, երբ միջազգային իրավիճակը մերձավորարևելյան տարածաշրջանում մնում էր խիստ լարված, և բնականաբար շատ կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, թե ինչպիսի ընդունակությունների տեր քաղաքական գործիչ էր ղեկավարելու Կիլիկիայի հայոց պետությունը, և որի վարած

ներքին և արտաքին քաղաքականությունից էր կախված հայոց պետության հետագա ճակատագիրը:

12-րդ դարում Ռուբինյան տոհմից քաղաքական ասպարեզ իջան մի շարք անվանի գործիչներ, որոնք մեծագույն ներդրում ունեցան հայոց պետության կայացման և հզորացման գործում: Դրանց մեջ մասնավորապես կարելի է հիշատակել Թորոս Ա-ին (1100-1129), Թորոս Բ-ին (1145-1169), Լևոն Մեծագործին (1187-1198), ինչպես նաև Մլեհ[1] Ռուբինյանին (1170-1175), որին էլ նվիրված է մեր հետազոտությունը:

Նշենք, որ այս գործչի կառավարման տարիները պատմական մի ժամանակաշրջան էին, երբ մի կողմից Կիլիկիայի հայկական իշխանապետությունը շրջապատված էր բազմաթիվ թշնամական պետություններով, իսկ մյուս կողմից էլ կենաց ու մահու պայքար էր մղում՝ իր դիրքերը տարածաշրջանում ամուր պահելու համար: Վտանգավոր թշնամիների մեջ հատկապես պետք է առանձնացնել Բյուզանդական կայսրությանը, որի կազմում էր դեյուրե Կիլիկիայի հայոց իշխանապետությունը, որը փորձում էր ինքնիշխան դառնալ: Ընդհանրապես Բյուզանդիայում Կոմնենոսների դինաստիայի կառավարման դարաշրջանում (1081-1185) կայսրությունը հասավ տնտեսական և մշակութային զարգացման նոր մակարդակի և բարձրացավ այդ պետության միջազգային հեղինակությունը: Բացի այդ՝ այս դինաստիայի ներկայացուցիչները ձեռնարկեցին արշավանքներ թե՛ Եվրոպայում, թե՛ Աֆրիկայում և թե՛ Ասիական տարածաշրջանում: Բնա-

[1] Մլեհ անունը արաբական ծագում ունի, որը բառացի նշանակում է սիրուն, գեղեցիկ և սկսել է գործածվել հայերի մեջ Թ դարից: Այս անունը իհարկե չի ունեցել Հեթում անվան հաճախականությունը, բայց գործածությունը հասնում է մինչև ԺԴ դար: Տե՛ս Փ. Մեյթիխանյան, Հայոց անվանարանը, Եր., 2021, էջ 308:

կան է, որ Բյուզանդական կայսրությունն էլ նման իրավիճակում մշտապես ջանքեր էր գործադրում Ռուբինյանների կենտրոնախույս ձգտումները կասեցնելու համար:

Խաչակրաց իշխանապետություններից հայկական պետության համար առավել վտանգավոր էր Անտիոքի իշխանապետությունը, որը, լինելով Կիլիկիայի հայոց իշխանության սահմանակից պետություն, բազմաթիվ արշավանքներ էր կազմակերպում հայկական իշխանության դեմ, ծուղակներ էր լարում հայոց իշխանապետերի նկատմամբ, տարածքներ էր զավթում և ընդհանրապես նրա ղեկավարները երբեք չէին թաքցնում իրենց նկրտումները Կիլիկիայի հայոց պետության նկատմամբ: Այդ ագրեսիվ քաղաքականությունը սկսվեց 12-րդ դարի սկզբներից և շարունակվեց հետագա տասնամյակների ընթացքում: Մյուս կողմից էլ ժամանակ առ ժամանակ Կիլիկիայի հայոց պետության զորեղացմանը սպառնում էր նաև Արևելքի մյուս խաչակրաց պետությունը՝ Երուսաղեմի թագավորությունը, որը նույնպես ժամանակ առ ժամանակ սպառնում էր հայոց իշխանապետությանը: Ինչ վերաբերում է տարածաշրջանի մահմեդական պետություններին, ապա պետք է նշել, որ նրանք ևս հարմար առիթը բաց չէին թողնում Կիլիկիայի հայկական պետությունը թուլացնելու համար: Դրանց մեջ հատկապես կարելի է առանձնացնել Հալեպի աթաբեկությունը, Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Դանիշմանյան ամիրապետությունը և ուրիշներ: Նրանք ևս հնարավորության դեպքում կարող էին նեղել Կիլիկյան Հայաստանին, և բնականաբար հայկական պետությանը անհրաժեշտ էին այնպիսի քաղաքական գործիչներ, որոնք կկարողանային ճիշտ կողմնորոշվել քաղաքական բարդ իրավիճակներում և արժանի հակահարված տալ թշնամիներին:

Ընդհանրապես մեր պատմության մեջ շատ չեն այն քաղաքական դեմքերը, որոնք համարձակություն ունեցան դաշ-

նակցելու այլադավան իշխանավորների հետ՝ հանուն հայոց պետության ազատագրման և հետագա զարգացման: Այդ եզակի դեմքերից մեկն էլ Կիլիկյան Հայաստանի նշանավոր ներկայացուցիչ Մլեհ Ռուբինյանն էր: Հայոց այս իշխանապետին կարելի է բնորոշել որպես խելացի, հմուտ, հայրենասեր, գրագետ, բանիմաց, իմաստուն, բազմագիտակ գործչի, չնայած այն հանգամանքին, որ հայ կղերական գրականության մեջ վերջինս ներկայացվում է որպես ապիկար, անփառունակ և անարժան պետական գործիչ:

Մլեհ իշխանապետի մասին այս հետազոտության հիմքում դրվում է այն տեսակետը, որ Մլեհը առանձնացող և միևնույն ժամանակ եզակի քաղաքականություն իրականացրած պետական գործիչ է Կիլիկիայի հայոց պետության պատմության մեջ: Նա առաջինն էր կիլիկյան իրականության մեջ, որ ամբողջովին փոխեց հայոց պետության արտաքին քաղաքականության ուղեգիծը, ինչը բխում էր ժամանակի պահանջներից: Վերջինս համարձակություն ունեցավ դիմելու մի շատ կտրուկ, միևնույն ժամանակ իր համար վտանգավոր քայլի՝ թեքվելով դեպի Մերձավոր Արևելքի իսլամական աշխարհը, ինչը մի կողմից հզորացրեց Կիլիկիայի հայկական պետությունը, ընդարձակեց իշխանապետության սահմանները, բարձրացրեց հայոց պետության հեղինակությունը, բայց մյուս կողմից էլ առիթ դարձավ նրա սպանությանը: Ցավոք, միջնադարյան քրիստոնյա պատմիչների գերակշիռ մասը բացասական է խոսում հայոց իշխանապետ Մլեհի վարած քաղաքականության մասին, ինչը չի կարելի ասել նույն ժամանակաշրջանի մահմեդական աղբյուրների մասին: Նշենք նաև, որ ժամանակի ընթացքում Մլեհ իշխանապետի կյանքի և գործունեության պատմության առանձին էջերի մասին իրենց հետազոտություններում հպանցիկ անդրադարձել են թե՛ հայ և թե՛ օտարազգի մի շարք հետազոտողներ, սակայն մինչ օրս էլ նրանցից որևէ մեկը չի ուսում-

նասիրել Մլեհ Ռուբինյանի կյանքի և գործունեության ողջ պատմությունը: Այս աշխատությամբ մենք նպատակ ունենք լրացնել այդ բացը և տալ մի շարք չպարզաբանված հարցերի պատասխաններ:

Մեր ուսումնասիրության մեջ նպատակ ենք դրել վեր հանել Մլեհ Ռուբինյանի կյանքի և գործունեության պատմության մասին մի շարք դրվագներ ու հարցեր, որոնցից կարևոր ենք համարում.

1. Կիլիկիայում Մլեհի երիտասարդ տարիների գործունեության մանրամասները և հատկապես այն դեպքերը, որոնք մինչ այժմ դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից:
2. Մլեհ Ռուբինյանի խաղացած դերը 12-րդ դարի 40-ականների երկրորդ կեսին և նույն դարի հաջորդ տասնամյակին Կիլիկյան Հայաստանում սկսված ազատագրական պայքարում:
3. Մլեհ Ռուբինյանի մասնակցության չափը Հարիմի հայտնի ճակատամարտում:
4. Թորոս Բ իշխանապետի և Մլեհի հարաբերությունների բարդացման խնդիրները և դրանց արդյունքները:
5. Մլեհի և Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի միջև համագործակցության մանրամասները և գործունեությունը:
6. Թորոս Բ իշխանապետի մահվանից հետո Կիլիկյան Հայաստանում ստեղծված քաղաքական վիճակը և Մլեհի կողմից իշխանության գրավման մանրամասները:
7. Ռուբեն Բ-ի՝ (1169 թ. վերջ կամ 1170 թ. սկիզբ) Կիլիկիայից փախուստի մանրամասները, ինչպես նաև նրա սպանության հանգամանքները:
8. Հայոց իշխանապետի խաղացած դերը 1173 թվականին Հռոմկլայում հայոց կաթողիկոսի ընտրության հարցը:
9. Հայոց իշխանապետության արտաքին քաղաքականութ-

յան մեջ ունեցած հաջողությունների մանրամասները և մահմեդական պետությունների հետ համագործակցության խնդիրները:

10. Մլեհ Ռուբինյանի՝ մասնագիտական գրականության մեջ ուրացող լինելու հանգամանքները:
11. Մլեհ իշխանապետի կողմից Կիլիկիայի հայոց պետության տարածքային նվաճումների խնդիրը:
12. Հայոց իշխանապետի սպանության պատճառները, տարեթիվը, մանրամասները և մասնակիցները:

Մլեհ Ռուբինյանի կյանքի և գործունեության պատմությունը լուսաբանելու համար ուսումնասիրության աղբյուր են դարձել պատմական տարաբնույթ և բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնց մեծամասնությունը պատկանում է հայկական և արևելյան աղբյուրներին: Հայկական սկզբնաղբյուրներից վերը նշված խնդրի մասին ամենից արժեքավոր վկայություններ է պարունակում 13-րդ դարի Կիլիկյան Հայաստանի հայտնի քաղաքական գործիչ, սպարապետ Սմբատի աշխատությունը[1]: Այն ընդգրկում է 952 թ. մինչև 1272 թ. ընկած ժամանակաշրջանը: Հեղինակը, լինելով Կիլիկիայի պետության բարձրագույն ղեկավարներից մեկը, քաջատեղյակ է եղել դեպքերին և ավելի հանգամանորեն է շարադրել դրանք, քան մյուսները: Բացի այդ՝ Սմբատը կարողացել է մի շարք կարևոր դեպքերի մասին տալ շատ արժեքավոր վկայություններ, ինչը բացակայում է մյուսների մոտ: Մասնավորապես առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում Սմբատի կողմից Մլեհի և Թորոս Բ-ի բախման պատմությունը, որը եզակի սկզբնաղբյուր է: Ոչ պակաս արժեքավոր է նաև Սմբատի այն վկայությունը, որտեղ հեղինակը կարողա-

[1] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, **Սմբատայ Սպարապետի** եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց պատմութիւն յունաց ի Կոստանդնուպօլիս, Մոսկուա, 1856:

նում է մանրամասներ ներկայացնել Մլեհ իշխանապետի և Լամբրոնի Հեթումյանների փոխհարաբերությունների պատմությունից: Նա մանրամասնորեն նշում է բոլոր այն պատճառները, որոնց հետևանքով Կիլիկյան Հայաստանի այս երկու ճանաչված ընտանիքները բախվեցին միմյանց: Կարևոր են նաև Սմբատի հաղորդումները Մլեհ-Նուր ադ-Դին համագործակցության, հայոց իշխանապետի վարած ներքին և արտաքին քաղաքականության մասին՝ նրա սպանության որոշ հանգամանքների, ինչպես նաև պատմական այլ դեպքերի հետ կապված: Բացի այդ՝ Սմբատը պատմիչներից միակ հեղինակն է, ով հստակ խոսում է եղբոր որդու սպանությանը Մլեհի հնարավոր մասնակցության մասին:

Մեր աշխատության համար կարևոր նշանակություն են ունեցել նաև Սամվել Անեցու և նրա շարունակողների ժամանակագրական բնույթի աշխատությունները[1]: Այստեղ մեջ են բերվում բազմաթիվ ժողովուրդների պատմություններից չափազանց համառոտ տարեգրություններ, հայոց պատմությունից՝ սակավաթիվ դեպքերում համեմատաբար ընդարձակ քաղվածքներ: Սամվել Անեցին Ասողիկի նման հայ բացառիկ այն պատմագիրներից է, որ ամենայն բարեխղճությամբ նշում է իր օգտագործած աղբյուրները: Սամվել Անեցին և նրա շարունակողները, խոսելով Կիլիկյան Հայաստանի քաղաքական և եկեղեցական անցուդարձերի մասին, որոշ դեպքերում անդրադառնում են նաև Մլեհ Ռուբինյանին և նրա գործունեությանը: Ինչպես Սմբատ սպարապետի պարագայում, այս անգամ էլ օգտվել ենք վերը նշյալ հեղինա-

---

1 Տե՛ս **Սամուէլի քահանայի Անեցւոյ**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, նույնի՝ **Սամուել Անեցի** և Շարունակողներ, Ժամանակագրութիւն, Ադամից մինչև 1776 թվականը, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Եր., 2014:

կի երկու աշխատություններից, որը մեր կարծիքով ունեցել է դրական նշանակություն: Սամվել Անեցին մեզ հետաքրքրող մի շարք դեպքերի հետ կապված տալիս է շատ արժանահավատ տեղեկություններ, այդ իսկ պատճառով բավական օգտվել ենք նրա աշխատությունից: Մյուս հեղինակը Վահրամ Րաբունին է, մի անձնավորություն, ով 13-րդ դարի երկրորդ կեսերին երկար տարիներ Կիլիկյան Հայաստանում իրականացրել է խիստ կարևոր նշանակություն ունեցող կանցլերի (ջանցլերի) գործառույթ և քաջատեղյակ է եղել երկրում տեղի ունեցած շատ դեպքերի: Բացի պետական գործունեությունից՝ Րաբունին զբաղվել է նաև պատմագիտությամբ և փիլիսոփայությամբ: Թեև ժամանակագրական առումով Վահրամ Րաբունին ավելի ուշ շրջանի գործիչ է, քան Մլեհը, այնուամենայնիվ նրա աշխատության մեջ առանձին դեպքերի հետ կապված կան եզակի կարևորություն ունեցող տեղեկություններ, հետևաբար օգտվել ենք այս հետաքրքիր աշխատությունից ևս[1]:

Մլեհ իշխանապետի գործունեության պատմությունը շարադրելիս օգտավետ են եղել նաև 13-18-րդ դարերի մանր ժամանակագրությունները, ինչպես նաև հայերեն ձեռագրերի հիշատակարանները[2]: Որպես պատմական սկզբնաղբյուրներ դրանց առավելությունն այն է, որ հիշատակարանների և ժամանակագրությունների հեղինակների ճնշող մեծամասնությունը, ականատես լինելով նկարագրվող դեպքերին և իրադարձություններին, տվել է դրանց անաչառ գնահատականը: Դրանց մի մասը որոշ արժեքավոր տեղեկություններ է տալիս Մլեհ Ռուբինյանի մասին[3]: Մանր ժամանա-

---

1 Տե՛ս **Վահրամայ Րաբունւոյ** Պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859:

2 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դարերի, աշխատասիրությամբ **Ա. Մաթևոսյանի**, Եր., 1988:

3 Տե՛ս Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, կազմեց **Վ. Հակոբյանը**, հ. Ա, Եր., 1951, հ. Բ, Եր., 1956:

կագիրներից մեկը (Պատմութիւն ազգին Ռովբինեանց թէ որպէս տիրեցին Կիլիկիա աշխատության) այն քիչ հեղինակներից է, ով հստակ նշում է, որ Կիլիկյան Հայաստանում իշխանության գրավման Մլեհ Ռուբինյանի առաջին փորձը ավարտվել է անհաջող: Իսկ ահա հիշատակարանի հեղինակներից մեկը՝ կաստաղանցի ժամանակագիրը, առաջին հայ պատմիչն է, որ նկարագրում է Հարիմի ճակատամարտը (1164 թ.) և դրա հետևանքները: Ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ այս հեղինակը դրական է խոսում Մլեհ իշխանապետի մասին:

Վերջապես մեր հետազոտության համար կարևոր է նաև Ղևոնդ Ալիշանի «Հայապատում» աշխատությունը: Այստեղ ևս շատ կարևոր և եզակի աղբյուրագիտական տեղեկություններ կան, ինչը օգտակար է եղել մեր աշխատության ստեղծման համար[1]:

Հետազոտվող խնդրի կապակցությամբ ավելի քիչ օգտվել ենք միջնադարի այլ հեղինակների՝ մասնավորապես Կիրակոս Գանձակեցու[2], Վարդան Արևելցու[3], Մատթէոս Ուռհայեցու և նրա երկը շարունակող Գրիգոր Երեցի տարեգրություններից[4] և այլ հեղինակների աշխատություններից, որոնց գործերում նվազ տեղեկություններ կան հիշյալ ժամանակաշրջանի դեպքերի մասին: Մյուս կողմից կարելի է առանձնացնել Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները[5], Մխիթար Այրիվանեցու[1], Ավե-

---

1 Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901:

2 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961:

3 Տե՛ս **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, Վենետիկ, 1862:

4 Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898:

5 Տե՛ս **Ա. Մաթևոսյան**, Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1963, N 4, էջ 186-202:

տիք Տիգրանակերտցու[2] աշխատությունները: Ընդ որում՝ պետք է նշել՝ թե՛ Հեթում Անտուցը և թե՛ Վասիլ Մարաջախտը բարձր դիրքեր են գրավել Կիլիկյան Հայաստանի արքունիքում և բավական քաջատեղյակ են եղել հայոց պետության պատմությանը:

Մեր աշխատության մեջ օգտագործվել են նաև արևմտյան աղբյուրներ, որոնցից հատկապես շահեկան է եղել Վիլհելմ Տյուրացու հեղինակային աշխատությունը[3]: Նա բավական մանրամասնորեն ներկայացնում է 12-րդ դարի քաղաքական անցուդարձերի պատմությունը, որոնց մի մասը խիստ արժեքավոր է: Հեղինակը, լինելով դեպքերի ժամանակակից և ականատես, կարողացել է բավական առատ տեղեկություններ տրամադրել Կիլիկյան Հայաստանի, խաչակիրների, հայկական պետության և Բյուզանդական կայսրության փոխհարաբերությունների, տարածաշրջանի այլ երկրների պատմության մասին: Վիլհելմ Տյուրացու աշխատության բավականին մեծ հատված վերաբերում է նաև Մլեհ Ռուբինյանին: Ճիշտ է՝ Վիլհելմ Տյուրացին շատ կողմնակալ և տենդենցիոզ հեղինակ է, սակայն նա մի շարք կարևոր դեպքերի մասին տալիս է այնպիսի տեղեկություններ, որոնք բացակայում են մյուսների մոտ: Այսպես՝ հեղինակը խոսում է թե՛ հայոց իշխանապետի կողմից տարածքային նվաճումների, թե՛ Երուսաղեմի Ամորի թագավորի (1163-1174) դեմ պայքարի և թե՛ 1171 թ. խաչակիր Ստեփան Բլուացու ձեր-

---

1 Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, տպարան Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1860:

2 Տե՛ս **Ավետիք Տիգրանակերտցի**, Գիրք պատմութեանց որ կոչի Գավազանագիրք, համահաւաքեցեալ ի հին գաւազանագրաց եւ ի վիպաբանութեանց ի մի, բազմօք երկամբք, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. բ, Եր., 2007, էջ 559-573:

3 Տե՛ս **Guillaume de Tyr**, Histoire des Croisades, t.18, Paris, 1824.

բակալման և թալանման պատմության մասին: Բացի այդ՝ Վիլհելմ Տյուրացին որոշակի անդրադարձ է կատարում նաև հայոց իշխանապետի դավանանքային պատկանելության հարցին և զայրույթով նշում, որ հայոց իշխանապետը համագործակցում էր մահմեդական պետությունների հետ:

Արևմտյան մյուս պատմիչը, որին կցանկանայինք անդրադառնալ, Հովհաննես Դարդելն է, որի գրչին է պատկանում «Ժամանակագրություն հայոց» աշխատությունը[1]: Վերջինս 1377 թվականին՝ որպես ուխտավոր եկել է Երուսաղեմում և ճանապարհին այցելել Կիլիկիայի վերջին արքա Լևոն Լուսինյանին, որը գտնվում էր Կահիրեում: Արքայի խնդրանքով Հովհաննես Դարդելը դառնում է նրա խորհրդականը և խոստովանահայրը և հենց արքայի խնդրանքով էլ գրել է իր աշխատությունը, որն սկսում է առաջին դարից՝ Աբգար Ե արքայից, և հասցնում մինչև 14-րդ դարի երկրորդ կեսերը, այսինքն՝ Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը: Թեև աշխատության ամենից արժեքավոր հատվածը 14-րդ դարի պատմության մասին տեղեկություններն են, այնուամենայնիվ հեղինակը իր աշխատության մեջ որոշակի անդրադարձ է կատարում նաև 12-րդ դարի պատմության առանձին դեպքերին: Բացի վերը նշված հեղինակներից՝ օգտվել ենք արևմտյան այլ պատմիչների գործերից ևս, որոնք, մեր հետազոտության համար ունեցել են երկրորդական նշանակություն:

Մլեհ Ռուբինյանի կյանքի և գործունեության պատմության ուսումնասիրությանը մեծապես նպաստել են նաև արևելյան աղբյուրները (ասորական, արաբական և այլն). այդ հեղինակների մի մասը անձամբ է ականատես եղել կարևոր իրադարձություններին և արժեքավոր հաղորդումներ թողել

---

1 Տե՛ս **Հովհաննես Դարդել**, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891:

(դրանց մի մասը անգնահատելի արժեք ունի թե՛ Իկոնիայի սուլթանության, թե՛ Բյուզանդական կայսրության և թե՛ Կիլիկիայի հայոց պետության պատմության հետազոտության համար): Եվ բացի այդ՝ արևելյան և հատկապես արաբական աղբյուրների հեղինակները որոշ դեպքերում շատ կարևոր հաղորդումներ են տալիս քաղաքական այնպիսի կարևոր իրադարձությունների վերաբերյալ, որոնց մասին հայ և արևմտյան պատմիչները լռում են:

Մեր ուսումնասիրությանը նպաստել են 12-րդ դարի նշանավոր պատմիչ և հակոբիկյան եկեղեցու պատրիարք Միքայել Ասորու[1] և Բար Հեբրաուսի[2] (Աբուլ Ֆարաջ) աշխատությունները, որոնք միջնադարյան մատենագրության նշանավոր հուշարձաններ են: Դրանցում բավական հարուստ տեղեկություններ կան թե՛ տվյալ ժամանակաշրջանի՝ Կիլիկիայում և տարածաշրջանում տեղի ունեցող դեպքերի և թե՛ Մլեհ Ռուբինյանի կատարած մի շարք գործերի մասին: Պատահական չէ, որ վերը նշված պատմիչները մեծապես գնահատվում են ոչ միայն հայ, այլև արտասահմանյան մի շարք այլ հետազոտողների կողմից ևս: Միքայել Ասորին այն հեղինակն է, ում աշխատության շարադրանքը հասնում է մինչև 1195 թվականը և ներառում է թե՛ քաղաքական և թե՛ եկեղեցական անցուդարձերի պատմությունը: Վերջինս խոսում է Կուրիսում եղած ժամանակաշրջանում Մլեհի գործունեության, քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ կատարած չարագործությունների մասին, ինչպես նաև, թե ինչ պայմաններում Կիլիկիայի հայ վերնախավը համաձայնվեց իշխանությունը տրամադրել Մլեհին: Բավական կարևորութ-

---

1 Տե՛ս **Michel le Syrien**, Chronique de Michel le Syrien, v. III, Bruxells, 1963: Աշխատանքում հիմնականում օգտվել ենք հայերեն թարգմանությունից՝ **Միքայել Ասորի**, Ժամանակագրութիւն Հայոց, Յրուսաղէմ, 1870:

2 Տե՛ս **Bar Habraeus**, The Chronography, London, 1932.

յուն են ներկայացնում Միքայել Ասորու տեղեկությունները հայոց կաթողիկոսի՝ Գրիգոր Տղայի ընտրության վերաբերյալ: Նա միակ պատմիչն է, ով նշում է, որ Գրիգոր Դ Տղան (1173-1193) հայոց կաթողիկոսական աթոռին հայտնվել է Մլեհ Ռուբինյանի և Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի միջամտությամբ: Ոչ պակաս կարևոր է նաև նրա այն հաղորդումը, թե ինչպես իր հորդորով Մլեհը և Նուր ադ-Դինը Գրիգոր Ապիրատին հանձնեցին Տարսոնի թեմի առաջնորդությունը: Ինչ վերաբերում է մյուս ասորի հեղինակին՝ Բար Հեբրաուսին, ապա պետք է նշել, որ (Աբուլ-Ֆարաջ), թեև վերջինս լայնորեն օգտվել է Միքայել Ասորու երկից, այնուամենայնիվ իր գրքում կան բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ 12-13-րդ դարերի՝ թե՛ Կիլիկյան Հայաստանի և թե՛ Մլեհ իշխանապետի գործունեության և հատկապես մահվան հանգամանքների մասին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ժամանակի մահմեդական հեղինակները, ի տարբերություն քրիստոնյա պատմիչների, անդրադառնալով Մլեհին, գովաբանքով են խոսում նրա մասին: Նրանց մեջ առաջին հերթին պետք է առանձնացնել Իբն ալ-Ասիրին: Նա իր աշխատության համար օգտագործել է իրեն նախորդող արաբական պատմագրությունը: Վերջինիս հիմնական նպատակն է եղել պատմության մեջ շարադրել միայն մահմեդական պետությունների պատմությունը, իսկ ոչ մահմեդական երկրների մասին պատմում է այնքան, ինչքան դա կառնչվի մահմեդական աշխարհին: Իր աշխատության մեջ հեղինակը բավական խոսում է նաև Հայաստանի, հայերի և Կիլիկիայի մասին, ներկայացնում է Հայաստանում հաստատված սելջուկյան ամիրայությունների պատմությունը, 7-րդ դարում հայոց իշխանապետության, Բագրատունյաց թագավորության, Զաքարյանների իշխանապետության և Կիլիկիայի հայկական պետության մասին տեղեկություններ: Խոսելով Կիլիկիայի հայկական պետության՝ մի քանի տարով վերացման մասին՝ Իբն ալ-Ասիրը

նշում է, որ Ռումի թագավորը (Հովհան Բ Կոմնենոս 1118-1143), մտնելով կիրճերի տեր հայազգի Լևոնի որդու երկիրը, հպատակեցրեց նրան՝ շատ գանձեր վերցնելով: Չափազանց հետաքրքիր է մահմեդական պատմիչի վերաբերմունքը Կիլիկիայի իշխանապետ Մլեհ Ռուբինյանի քաղաքական կողմնորոշման մասին: Իբն ալ-Ասիրը հաղորդում է Նուր ադ-Դինի և Մլեհի համագործակցության մասին: Իր մեծարժեք աշխատության մեջ հեղինակը հիմնավորում է Հալեպի տիրակալի կողմից Մլեհին ծառայության վերցնելու անհրաժեշտությունը, Նուր ադ-Դինի հետ կնքած դաշինքը և համագործակցությունը, ինչպես նաև գովեստի խոսքեր ուղղում Մլեհ Ռուբինյանին[1], մատնանշում նրա իրականացրած նվաճումները և հաղթական պայքարը Բյուզանդական կայսրության դեմ: Նա այն սակավ հեղինակներից մեկն է, ով հստակ մատնանշում է, թե ինչպիսի հանգամանքներում հայոց իշխանապետը կարողացավ գրավել Դաշտային Կիլիկիայի գլխավոր քաղաքները:

Որպես աղբյուր օգտվել ենք նաև Անանուն Եդեսացու ժամանակագրությունից: Այն ընդգրկում է պատմական մեծ ժամանակաշրջան և նվիրված է Մերձավոր Արևելքում թուրքական ամիրայությունների հիմնադրման պատմությանը: Նրա երկում հավասարապես վեր է հանված նաև խաչակրաց արշավանքների և Ասորիքի խաչակրաց պետությունների կազմավորման պատմությունը: Հեղինակը անաչառ վերաբերմունք է դրսևորում նաև հայերի նկատմամբ: Անանուն Եդեսացին մի շարք արժեքավոր վկայություններ է ներկայացնում նաև Կիլիկիայի հայկական պետության մասին: Դրանցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկա-

---

1 Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, արաբական աղբյուրներ, Լիակատար պատմություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981:

պես Լևոն Ա իշխանի (1129-1137) ժամանակաշրջանի իրադարձություններին վերաբերող տվյալները: Որոշ տեղեկություններ էլ վերաբերում են Կիլիկիայի իշխան Թորոս Բ-ի և ֆրանկների ժամանակավոր դաշնակցությանը, երբ Թորոս Բ-ի գլխավորությամբ Կիլիկյան Հայաստանի զորամասերը մասնակցում էին Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինի դեմ կազմակերպված արշավանքին և մասնավորապես Հարիմի ճակատամարտին: Հեղինակը հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում նաև Մլեհ իշխանապետի դեմ նյութած դավադրության, նրա սպանության մանրամասների և մի շարք այլ կարևոր դեպքերի մասին[1]:

Կարևոր ենք համարում նաև նշել, որ Կիլիկյան Հայաստանի, խաչակիրների, Բյուզանդական կայսրության և ընդհանրապես Մերձավոր Արևելքի պատմության ուսումնասիրությունը միշտ էլ եղել է ինչպես հայ, այնպես էլ օտարազգի պատմաբանների ուշադրության կենտրոնում: Հայոց պետության պատմության և հատկապես 12-րդ դարի 70-ական թվականներին Մլեհի գործունեության առանձին դրվագներին անդրադարձել են նաև մի շարք հետազոտողներ: Այդ հետազոտությունները սկսվել են դեռևս 18-րդ դարի վերջերից և շարունակվում են մինչ մեր օրերը: Մլեհի գործունեության փոքրիկ դրվագներ առաջին անգամ պատմագիտական գրականության մեջ արտացոլվեցին Միքայել Չամչյանի կողմից, որի գրչին է պատկանում եռահատոր հայոց պատմությունը[2]: Այս հիմնարար աշխատության երրորդ հատորում Մ. Չամչյանը պարզաբանում է Կիլիկիայի հայկական պետության ներքին կյանքի որոշ մանրամասներ, ինչ-

---

[1] Տե՛ս **Անանուն Եդեսացի**, Ժամանակագրություն. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1982:

[2] Տե՛ս **Մ. Չամչյանց**, Հայոց պատմություն, (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Գ, Եր., 1984:

պես նաև տարբեր դեպքեր: Հեղինակը անդրադարձ է կատարել նաև Մլեհ իշխանապետի վարած ներքին և արտաքին քաղաքականության որոշ հարցերին:

Պետք է նշել նաև, որ Կիլիկյան Հայաստանի պատմության մասին հետազոտությունները շարունակվեցին նաև 19-րդ դարում, ընդ որում՝ թե՛ հայ և թե՛ օտար հետազոտողների կողմից: Այսպես, Արևմտյան Եվրոպայի հեղինակներից կարելի է հիշատակել ճանաչված գիտնականներ Վ. Լանգլուային[1] և Է. Դյուլորիեին[2], որոնք բավական հետաքրքիր տեսակետներ են հայտնում Կիլիկիայի հայոց պետության պատմության վերաբերյալ: Մասնավորապես Վ. Լանգլուան բազմիցս իր աշխատություններում անդրադարձել է Կիլիկիայի հայկական թագավորության պատմությանը, մասնավորապես հասարակական-քաղաքական հարաբերություններին, այլ երկրների հետ կապերին: Ինչ վերաբերում է Դյուլորիեին, ապա վերջինս էլ իր գործունեությամբ որոշակի քայլեր է ձեռնարկել Կիլիկիայի հայոց իշխանապետության հետազոտության զարգացման ուղղությամբ:

Հաջորդ նշանավոր անձնավորությունը, որն արժանի է հիշատակման, 19-րդ դարի երկրորդ կեսի բազմավաստակ հայագետ Ղևոնդ Ալիշանն է, ով իր մի շարք հիմնարար աշխատություններում[3] լուսաբանում է հայոց իշխանապետի գործունեության պատմության որոշ հատվածներ: Հեղինակը

---

[1] Տե՛ս **Langlois V**, Essai historique et critique sur la constitutions sociale et politique de l’ Arménie, St. Petersburg, 1860, Langlois V., Le trésor des chartes d’Arménie, Venise, Typographie Arménienne de Saint-Lazare, 1863.

[2] Տե՛ս **E. Dulaurier**, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859.

[3] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, նույնի՝ Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազար, 1873, նույնը՝ Յուշիկք հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869:

մեծ աշխատանք է կատարել՝ իտալական արխիվներում Կիլիկյան Հայաստանին վերաբերող բազմաթիվ կարևոր փաստաթղթեր երևան հանելով, որոնց օգնությամբ պարզաբանել է Կիլիկյան հայոց պետությունում տեղի ունեցող շատ դեպքերի մանրամասներ: Ինչպես «Սիսուանում», այնպես էլ մյուս արժեքավոր հետազոտություններում Ալիշանը օգտագործել է աղբյուրագիտական բազմաթիվ տվյալներ՝ մանրամասն շարադրելով Կիլիկիայի հայկական պետության տարբեր ժամանակաշրջանների պատմությունը: Մի շարք կարևոր դեպքերի հետ կապված հետազոտողը կարողացել է տալ շատ հետաքրքիր տեսակետներ և ափսոս, որ անվանի հայագետը իր աշխատություններում ցույց չի տալիս պատմական այն սկզբնաղբյուրները, որոնցից օգտվել է: Անցնում են տասնամյակներ, սակայն Ալիշանի թողած աշխատությունները մինչև օրս էլ արժանիորեն են գնահատվում համաշխարհային պատմագրության կողմից:

Վերը նշված ժամանակաշրջանում հայոց պետության հետազոտման բնագավառում աչքի ընկավ նաև ֆրանսիացի հայտնի հայագետ Ռընե Գրուսեն, ով իր աշխատությունների մեջ բավական ուշադրություն է դարձրել Կիլիկիայի հայոց պետության պատմությանը[1]: Հեղինակը անդրադարձ է կատարել նաև Մլեհի գործունեությանը՝ տալով որոշակի գնահատական: Գրուսեն բավական մանրամասն անդրադառնում է Մլեհի դավանանքային պատկանելիությանը, խաչակիրների նկատմամբ թշնամական քաղաքականությանը, Կիլիկիայի տարածքների ազատագրմանը, Ստեփան Բլուա-

---

[1] Տե՛ս **R. Grousset**, Histoire des Croisades et du royaume franc de Jérusalem, Vol I-III, Paris, 1936, **R. Grousset**, L’Empire Du Levant: Histoire De la question D’Orient, Paris, 1949: Օգտվել ենք նաև նույն աշխատությունների հայերեն թարգմանությունից**, Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց և Երուսաղեմի ֆրանկ թագավորության, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Եր., 2005, էջ 195-328, նույնի՝ Լևանտի կայսրությունը, նույն տեղում, էջ 329-361:

ցու գերեվարմանը, Երուսաղեմի թագավոր Ամորիի հետ բախմանը: Կարևոր է նաև Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» աշխատությունը, որը թեև հիմնականում նվիրված է Հայ առաքելական եկեղեցու պատմության մանրամասներին[1], այնուամենայնիվ հեղինակը, իր աշխատության տարբեր հատվածներում խոսելով Կիլիկիայի հայկական պետությունում տեղի ունեցող քաղաքական և եկեղեցական անցուդարձերի մասին, որոշակի անդրադարձ է կատարել նաև Մլեհ Ռուբինյանի գործունեությանը:

Կիլիկյան Հայաստանի պատմության վերաբերյալ հետազոտությունները մեծ թափով շարունակվեցին նաև 20-րդ դարում, ընդ որում՝ հետազոտություններ իրականացվեցին թե՛ Խորհրդային Հայաստանում և թե՛ արտասահմանում: Այսպես՝ հայ հետազոտողներից Կիլիկյան Հայաստանի պատմության մասին իր հետազոտությամբ աչքի ընկավ Կ. Բասմաջյանը, որի աշխատությունը թեև հիմնականում նվիրված է Կիլիկիայի վերջին արքա Լևոն Լուսինյանի գործունեությանը, այնուամենայնիվ հեղինակը իր աշխատության սկզբում որոշակի անդրադարձ է կատարում նաև Կիլիկիայի հայոց իշխանապետության պատմության առանձին դրվագներին և որոշակի դիտարկումներ կատարում[2]:

Առաջին մենագրությունը, որ նվիրված է Կիլիկյան Հայաստանի քաղաքական և տնտեսական պատմությանը, պատկանում է պատմաբան Գ. Միքայելյանին[3]: Վերջինս, օգտվելով եղած միջնադարյան աղբյուրներից և պատմագի-

[1] Տե՛ս **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա: Վերը նշված աշխատությունը առաջին անգամ հրատարակվել է Կ. Պոլսում, 1912 թվականին, սակայն օգտվել ենք 2001 թվականի Էջմիածնի հրատարակությունից, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001:

[2] Տե՛ս **Կ. Բասմաջեան**, Լեւոն Ե Լուսինեան, Վերջին թագաւոր հայոց, Պարիս, 1908:

[3] Տե՛ս **Г. Микаелян**, История Киликийского армянского государство, Ер., 1952, նույնի հայերեն թարգմանությունը՝ Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայոց պետության պատմություն, Եր., 2007:

տական գրականության մեջ եղած տեսակետներից, կարողացել է ամբողջովին նորովի ներկայացնել Կիլիկյան հայկական պետության պատմությունը: Այս աշխատության մեջ Գ. Միքայելյանի ուշադրությունից զերծ չէին մնացել նաև Մլեհ Ռուբինյանի գործունեության որոշ դրվագներ: Նա որոշակի անդրադարձ է կատարել Մլեհի կողմից իշխանության զավթման, Դաշտային Կիլիկիայի տարածքների ազատագրման և Կիլիկիայի հայկական պետության հզորացման պատմության փոքրիկ դրվագներին: Հեղինակը որոշակի անդրադարձ է կատարել նաև Մլեհ իշխանապետի ներքին խիստ քաղաքականությանը, ինչպես նաև սպանության հանգամանքներին: Ալիշանի «Սիսուանից» հետո Միքայելյանի աշխատությունը երկրորդ ծավալուն և բարձրարժեք հետազոտությունն է՝ նվիրված Կիլիկյան Հայաստանի պատմությանը:

Այս նույն ժամանակաշրջանում հրատարակվեց նաև Բակուրանի աշխատությունը, որտեղ Կիլիկյան Հայաստանի պատմության տարբեր խնդիրներ հետազոտելիս հեղինակը որոշ դեպքերում խոսում է նաև Մլեհ Ռուբինյանի իրականացրած ներքին և արտաքին քաղաքականության մասին[1]: Իհարկե, այս աշխատությունը զիջում է Միքայելյանի հետազոտությանը, այնուամենայնիվ նրանում էլ կան բազմաթիվ հետաքրքիր դիտարկումներ: Մեզ հետաքրքրող թեմայի մասին հետազոտությունները շարունակվեցին նաև 1960-1990-ական թվականներին, երբ աչքի ընկան մի խումբ ճանաչված հայագետներ, որոնցից նախևառաջ կարելի է առանձնացնել Ա. Բոզոյանին, ում ուսումնասիրությունների հիմնական մասը նվիրված է Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության փոխհարաբերությունների պատմությանը, Մլեհ Ռուբինյանի գործունեությանը[2]: Հետազոտողը որոշա-

---

[1] Տե՛ս **Բակուրան (Վ. Քիւրճեան)**, Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, Պէյրութ, 1959:

[2] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Եր.,

կի տեսակետներ է հայտնում նաև 1137 թվականի արշավանքից հետո Մլեհի և Ստեփանեի գտնվելու վայրի, հայոց իշխանապետի նվաճողական քաղաքականության և Լամբրոնի Հեթումյանների հետ բախման և այլ դեպքերի մասին:

Վերը նշված թեմայի ուսումնասիրություններով աչքի ընկան նաև այլ գիտնականներ, որոնցից կարելի է հատկապես առանձնացնել Տ. Յ. Տեր Ղազարյանին[1], Ե. Քասունուն[2], Ա. Գալստյանին[3], Ս. Բոռնազյանին[4], Ա. Սուքիասյանին[5], Մ. Հովհաննիսյանին[6], Մ. Զուլալյանին[1], Վ. Տեր-Ղևոնդյանին[2], Կ.

1988, նույնի՝ Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Եր., 1995, նույնի՝ Կիլիկիայի բյուզանդական կառավարիչները և Ռուբինյան իշխանությունը XII դարի 40-70-ական թվականներին, Պատմա-բանասիրական հանդես, 1984, թիվ 3, նույնի՝ Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների մասնակիցներն ու վավերագրերի թարգմանիչները (XII դարի 60-70-ական թվականներ), Պատմա-բանասիրական հանդես, թիվ 4, Եր., 1990:

[1] Տե՛ս **Տ. Յ. Տեր Ղազարյան**, Հայկական Կիլիկիա, Տեղագրութիւն, Անթիլիաս, 1966:

[2] Տե՛ս **Ե. Քասունի**, Ռուբէն Ա. Եւ Ռուբինեան իշխանութեան հիմնադրութիւնը, Պէյրութ, 1972, նույնի՝ Ռուբէն Գ իշխանապետ և իր կտակը, (1175-1187 թթ.), Պէյրութ, 1987:

[3] **Ա. Գալստյան**, Սմբատ Սպարապետ, Եր., 1961, նույնի՝ Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1964, թիվ 1, էջ 91-106, նույնի՝ Կիլիկյան հայոց թագավորության կործանման հարցի շուրջը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, թիվ 9, էջ 50-63:

[4] Տե՛ս **Ս. Բոռնազյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV-րդ դարերում, Եր., 1973, Հայ ժողովրդի պատմություն, ակադեմիական հրատարակություն, հ. Գ, Եր., 1976:

[5] Տե՛ս **Ա. Սուքիասյան**, Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Եր., 1978:

[6] Տե՛ս **Մ. Յովհաննէսեան**, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, Ս. Ղազար, 1989:

Մութաֆյանին[3], Ա. Հովհաննիսյանին[4], Դ. Թինոյանին[5], Վ. Թորոսյանին[6] և այլ հեղինակների, որոնց հետազոտություններով էլ նոր էջ բացվեց Կիլիկիայի պետության պատմության զարգացման մեջ: Այդ աշխատանքների մեջ հատկապես պետք է առանձնացնել Վ. Տեր-Ղևոնդյանի «Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին» աշխատությունը, որը չափազանց շահեկան է եղել մեր հետազոտության համար: Հեղինակը, հիմնվելով հայ և հատկապես արաբական աղբյուրնե-

---

[1] Տե՛ս **Մ. Զուլալյան**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Եր., 1990: Բացի վերը նշված աշխատանքից Զուլալյանի գրչին է պատկանում նաև հայ ժողովրդի պատմության ակադեմիական 3-րդ հատորի հետազոտության այն մասը, որը կապված է Կիլիկյան Հայաստանի ստեղծման և Ռուբինյանների տոհմի պայքարը բյուզանդական կայսրության դեմ, Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Եր,, 1976, էջ 671-687:

[2] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, Եր., 1994, նույնի՝ Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան երկրները (1171-1260), Եր., 2017, նույնի՝ Կիլիկյան Հայաստանը և Սիրիան XII-րդ դարի 40-70-ական թվականներին, Պատմա-բանասիրական հանդես, 1986, թիվ 2, նույնի՝ Ռուբինյան իշխանապետությունը և արաբական աշխարհը 12-րդ դարի երկրորդ կեսին, Գեղարվեստի ակադեմիայի «Տարեգիրք», Եր., 2016, N 4, էջ 215-223, Վ. Տեր-Ղևոնդյան և Վ. Թորոսյան, Հայ-լատին եկեղեցական հարաբերությունների քաղաքական ենթահողը (XII դ. 30-40-ական թթ.), Բանբեր մատենադարանի, 31, Եր. 2021:

[3] Տե՛ս **Կ. Մութաֆյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001:

[4] Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությունները Եգիպտոսի սուլթանության հետ 1250-1375 թթ., Եր., 2008:

[5] Տե՛ս **Դ. Թինոյան**, Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ., Եր., 2011:

[6] Տե՛ս **Վ. Թորոսյան**, Հայոց կաթողիկոսական իշխանությունը, (ԺԱ դարի կեսեր-ԺԲ դարի սկիզբ), Եր., 2018:

րի տեղեկությունների վրա, կարողացել է բավական հետաքրքիր մի հետազոտություն ներկայացնել: Վերը նշված աշխատության մեջ հետազոտողը անդրադառնում է Մլեհ Ռուբինյանի և Զանգիների պետության հետ համագործակցության պատմությանը, հայոց իշխանապետի արտաքին քաղաքականության բնագավառում ունեցած մի շարք հաջողություններին: Հեղինակը խոսում է նաև Մլեհի կողմից հայոց կաթողիկոսի պաշտոնի համար մղվող պայքարի, Դանիշմանների պետության գահակալական պայքարին ունեցած մասնակցության և մի շարք այլ դեպքերի մասին:

Պետք նաև նշել, որ 20-րդ դարում էլ Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրմամբ զբաղվեցին նաև օտարազգի հեղինակներ, որոնցից կարելի է առանձնացնել Թոմաս Շեռռեռ Բոասին[1], Ռուդ Կոլենբերգին[2], Ստիվեն Ռենսիմանին[3], Ֆրանսուա Տուրնեբիզին[4], Ժակ դը Մորգանին[5], Մարի-Աննա Շեվալիեին[6] և շատ ուրիշների: Ռուտ-Կոլենբերգի աշխատությունը մասնավորապես նվիրված է Կիլիկյան Հայաստանում իշխած Ռուբինյանների, Հեթումյանների և Լուսինյանների իշխած թագավորական դինաստիաների ծագման, հայ և օտար թագավորական և իշխանական տների հետ նրանց ունեցած ազգակցական կապերին: Թեև հետազոտողը չի անդրադարձել մեզ հետաքրքրող հարցերի

1 Տե՛ս **T. Boase**, The Cilician kingdom of Armenia, New York, 1978.

2 Տե՛ս W. H. Rudt-Collenberg, The Rubenids, Hethumids and Lusignans, The structure of the Armeno-Cilician dinasties, Paris, 1963.

3 Տե՛ս **S. Runciman**, A history of the Crusades, vol. A, London, 1951, vol B, London, 1952.

4 Տե՛ս **F. Tournebize**, Histoire politique et religieuse de l’ Arménie, Paris, 1910.

5 Տե՛ս **J. De Morgan**, The history of the Armenian people, Boston, 1965.

6 Տե՛ս **Մարի-Աննա Շեվալիե**, Կիլիկյան Հայաստանի և հոգևոր-ասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Եր., 2007:

մանրամասներին, սակայն նա շրջանառության մեջ է դրել Արևմտյան Եվրոպայի արխիվներում պահպանված բազմաթիվ վավերագրեր, աղբյուրներ և նորովի անդրադարձել Կիլիկիայի հայոց պետության պատմությանը: Եվ վերջապես շատ կարևոր է նաև Մարի Աննա Շեվալիեի աշխատությունը, որտեղ հեղինակը կարողացել է բավականին մանրամասն ներկայացնել Կիլիկյան Հայաստանում տաճարականների օրդենի ներկայության մի շարք հարցերին:

21-րդ դարի սկզբին էլ շարունակվեցին Կիլիկյան Հայաստանի պատմության մասին ուսումնասիրությունները, որոնց թվում արժանի է ուշադրության Լ. Տեր-Պետրոսյանի աշխատանքը[1]: Այս երկհատոր արժեքավոր աշխատությունը կարևոր է Կիլիկիայի պետության պատմության ուսումնասիրման համար, քանի որ հետազոտողը օգտագործում է հսկայական քանակի նոր աղբյուրներ, հետազոտություններ և գիտական հոդվածներ: Առաջին հատորում Լ. Տեր-Պետրոսյանը կատարել է բավական կարևոր և օգտակար աշխատանք՝ թարգմանելով եվրոպական ճանաչված հետազոտողներ Ռընե Գրուսեի, Ստիվեն Ռենսիմենի, Սիրարփի Տեր-Ներսիսյանի, Ֆերդինանդ Շալանդոնի և այլ եվրոպական ճանաչված հետազոտողների աշխատությունները, որոնք նույնպես իրենց աշխատություններում որոշակի չափով կանգ են առել ոչ միայն խաչակիրների և հարևան պետությունների, այլև Կիլիկիայի հայոց պետության պատմության առանձին խնդիրներին: Մեզ համար հատկապես կարևոր է վերոհիշյալ հեղինակների կողմից հայոց իշխանապետ Մլեհ Ռուբինյանի վարած ներքին և արտաքին քաղաքականության առանձին դրվագներին անդրադառնալը:

Աշխատության երկրորդ հատորում հեղինակը, հենվելով տարբեր պատմագրական աղբյուրների տեղեկությունների վրա (հայ, ասորական, բյուզանդական, արաբական, եվրո-

---

1 Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Եր., 2005, հ. Բ, Եր., 2007:

պական և այլն), քննում է Կիլիկիայի հայոց պետության գահաժառանգության իրավունքի և իշխանության լեգիտիմության խնդիրը, որ բավական հետաքրքիր է: Մյուս կողմից էլ սա մի բնագավառ է, որ երբևէ ուսումնասիրության ենթակա չի եղել: Հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է նաև Մլեհ Ռուբինյանի գործունեությանը, ընդգծում նրա՝ հայոց լեգիտիմ իշխանապետ լինելու հանգամանքը, շեշտում վերջինիս կողմից Կիլիկիայում իշխանության գրավմանը, իշխանների հետ պայմանավորվածությանը, նրա վարած ներքին քաղաքականությանը, Մլեհի սպանությանը Ռուբեն Գ-ի (1175-1185) ունեցած մասնակցության փաստերը:

Նույն ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանի պատմության մասին հետազոտությունները շարունակվեցին նաև արտերկրում: Վերջին օտարալեզու հրատարակություններ մեջ կարելի է առանձնացնել Ա. Ստյուրատի աշխատությունը, որ նվիրված է Կիլիկիայի հայկական թագավորության կարևոր ժամանակաշրջաններից մեկին, և հեղինակը կարողանում է բավական հետաքրքիր տեսակետներ արտահայտել[1]: Մյուս կարևոր աշխատանքը հեղինակել է հայագետ Ժ. Դեդեյանը, ով արդեն բավական երկար տարիներ զբաղվում է Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրմամբ[2]: Արժեքավոր մենագրություններից բացի՝ կիլիկյան շրջանի պատմության առանձին դրվագներին իրենց հոդվածներում անդրադարձել են մի շարք հեղինակներ, որոնցից կարելի է հիշատակել ականավոր միջնադարագետ

---

[1] Տե՛ս **A. Stewart**, The Armenian kingdom and the mamluks, war and diplomacy during the reigns of Hetum II (1289-1307), Brill, 2001.

[2] Տե՛ս **G. Dedeyan**, Les Arméniens entre Grecs, musulmans et croises. Etude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient meditérraneen (1068-1150), Lisbone, 2003, նույնի՝ Un projet de colonization armenienne dans le royaume latin de Jerusalem sous Amamaury Ier (1162-1174), le partage du monde: Paris, 1998, նույնի՝ Le temps de la Croisade (fin XI-fin XIV siecles), Histoire des Armeniens, Touluse, 1982.

Հ. Բարթիկյանին[1], Մ. Ճեվահիրճյանին[2], Վ. Ավետիսյանին[3], Ս. Պապիկյանին[4], Ս. Առաքելյանին[5], Վ. Ստեպանենկոյին[6] և շատ ուրիշների:

---

[1] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Միքայել Իտալիկոսի Ներբողյանը և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Եր., 2002, էջ 519-532, նույնի՝ Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Եր., 2002, նույնի՝ Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Եր., 2002:

[2] Տե՛ս **Մ. Ճեվահիրճյան**, Կիլիկյան Գաստոն բնակավայրը, Պատմա-բանասիրական հանդես, 1975, թիվ 4, էջ 140-146, նույնի՝ Այաս քաղաքնավահանգիստը Կիլիկիայում, Պատմա-բանասիրական հանդես, 1973, թիվ 1, էջ 97-110, նույնի՝ Դրվագներ Կիլիկիայի հայկական պետությունում XIV դարի հայ-վրացական հարաբերությունների, 1998, Էջմիածին հանդես, Բ-Գ, էջ 191-200:

[3] Տե՛ս **Վ. Ավետիսյան**, Քաղաքական ազդեցության հիմնահարցը Անտիոքի իշխանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններում, Բանբեր Մատենադարանի, թիվ 27, Եր., 2019, էջ 273-287:

[4] Տե՛ս **Ս. Պապիկյան**, Խաչակիրները և հայերը, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1965:

[5] Տե՛ս **Ս. Առաքելյան**, Մլեհի թագավոր դառնալու հնարավորության հարցը և դրա ձախողման դրդապատճառները, Ակունք, Իջևան, 2011, թիվ 1:

[6] Տե՛ս **В. Степаненко**, Равниная Киликия во взаимоотношениях Антиохийского княжества и княжества Рубенидов в 10-40-х годах XII в., Византийский временник т. 49, Москва, 1988, с. 119-126, **В. Степаненко**, Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., Византийский временник, Москва, 1991, т. 52, с. 127-135, **В. Степаненко**, Торос II Рубенид и Византийская администрация Равнинной Киликии 1158-1160 гг., Византийский временник, Москва, 1995, т. 56, с. 127-133, **В. Степаненко**, Княжество Рубенидов Киликии в Международных отношениях на Ближнем Востоке в 20-30-е годы XII в., Византийский временник, Москва, т. 55, 1994, с. 162-168, **В. Степаненко**, Цицилия, «Дама Тарса и Сестра Короля» (Равниная Киликия в составе Антиохийского княжества. 1108-1137 гг.), византийский временник, том 51, Москва, 1990, с. 119-123.

Գլուխ առաջին

ՄԼԵՀ ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1137-1169 ԹԹ.

11-րդ դարի կեսերից հայության մեծաքանակ զանգվածները քաղաքական անբարենպաստ հանգամանքների բերումով Հայաստանից սկսեցին տեղափոխվել դեպի արևմուտք՝ Բյուզանդական կայսրության խորքերը՝ Կապադովկիա, Կիլիկիա և այլ վայրեր: Դրա պատճառը մի կողմից Բագրատունիների և Արծրունիների թագավորությունների անկումն էր, իսկ մյուս կողմից՝ սելջուկ թյուրքերի արշավանքները: Ստեղծված պայմաններում հայերը փորձում էին հաստատվել առավել անվտանգ տարածքներում: Զանգվածային գաղթն այնպիսի մեծ չափերի հասավ, որ 11-րդ դարի երկրորդ կեսին հայերը, Կիլիկիայում կազմելով մեծամասնություն, պայքար սկսեցին պետականության ստեղծման համար: Շատ կարևոր է նաև նշել այն իրողությունը, որ Կիլիկիա գաղթում էր մեծ մասամբ նաև ազնվականությունը, որն էլ պետական ինստիտուտների ձևավորողն էր:

Սկզբնական շրջանում ստեղծվեցին մի քանի հայկական անկախ իշխանություններ, որոնցից կարելի է հիշատակել Փիլարտոս Վարաժնունու (1071-1090) և Գող Վասիլի (1082-1112) իշխանությունները, որոնք, սակայն, երկար կյանք չունեցան և վերացան իրենց հիմնադիրների մահվան հետ միաժամանակ: Այլ ընթացք ունեցավ Ռուբենի (1080-1095) կողմից ստեղծած հայկական իշխանությունը Լեռնային Կիլիկիայում, որն իր հիմնադրի անունով էլ կոչվեց Ռուբինյան:

1080 թվականին Լեռնային Կիլիկիայում Ռուբենի ստեղ-

ծած հայկական իշխանությունը վերջինիս ժառանգների օրոք կենաց ու մահու պայքարի մեջ է մտնում տարածաշրջանում թե՛ բյուզանդական կայսրության, թե՛ Իկոնիայի սելջուկյան սուլթանության և թե՛ Արևելքում հաստատված խաչակրաց իշխանությունների դեմ՝ պատվով դուրս գալով այդ փորձությունից: Այդ մասին պատմիչ Միքայել Ասորու հայերեն թարգմանության մեջ հետևյալն է նշվում. «և այժմ սկսան տիրել երկրին Կիլիկեցւոց. և թագաւորեալ արիական քաջութեամբ Ռոբէն նախ և՛ Կոստնդին եւ՛ Լեւոն և՛ Թորոս, և այլքն մի ըստ միոջէ»[1]:

1100 թվականին Կիլիկիայի հայոց իշխանապետ դարձած Թորոս Ա-ն (1100-1129) ընդարձակեց իր իշխանության սահմանները, ինչի մասին վկայում են միջնադարյան պատմիչները[2]:

Թորոս Ա-ի գլխավորությամբ Կիլիկիայի հայկական ռազմական ուժերը գրավեցին ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Սիս և Անարզաբա քաղաքները: Հայոց իշխանին հաջողվեց նաև հետ մղել սելջուկ-թյուրքերի հարձակումները:

1107 թվականին, երբ սելջուկ-թյուրքերը Տավրոսի կիրճերով ներխուժեցին Կիլիկիա, Թորոսը, Գող Վասիլի հետ դաշնակցած, Բերդուսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց թշնամուն և հետ շպրտեց երկրից[3]: Այս ճակատամարտը կանխորոշեց Լեռնային Կիլիկիայում Ռուբինյանների ժառանգական իշխանության ձևավորումը: Պետք է նշել նաև, որ Թորոս Ա իշխանի օրոք Կիլիկյան Հայաստանում ծաղկում ապրեց նաև մշակութային կյանքը. երկրի տարբեր վայրերում հիմնվեցին մի շարք դպրոցներ:

---

[1] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 411:

[2] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի,** էջ 269, **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 145**:**

[3] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 306:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Թորոս Ա-ին անվանում էին ամբողջ Կիլիկիայի իշխան[1]: Բացի այդ՝ վերջինս վարել է Բյուզանդական կայսրությունից միանգամայն անկախ քաղաքականություն, նրա իրականացրած կարևոր գործերից մեկն էլ Մանդալե եղբայրներին պատժելն էր, որն իրականացվեց 1111 թվականին: Վերջիններս հանդգնել էին սպանել Անիի վերջին թագավոր Գագիկ Բ-ին:

Հաջորդ նշանավոր իշխանը Լևոն Ա Ռուբինյանն էր (1129-1137), որի կառավարման ժամանակաշրջանում հայկական պետությունը նոր տարածքային աճ գրանցեց: Այսպես, եթե մինչ Թորոս Ա-ն հայկական պետությունը պայքար էր մղում լեռնային տարածքների նվաճման համար, ապա Լևոն Ա-ի օրոք սկըսվեց նաև Դաշտային Կիլիկիայի նվաճման գործընթացը. վերջինիս տարածքը շատ բարեբեր էր: Անշուշտ, այս տարածքների նվաճման փորձը պետք է հանգեցներ Բյուզանդական կայսրության և խաչակիրների դժգոհությանը և նրանց տաներ առճակատման: Մյուս կողմից էլ, սակայն, Կիլիկիայի հայկական իշխանության հարաբերությունները բարեկամական չէին հյուսիսային հարևանի՝ Դանիշմանյան ամիրության հետ:

1132 թվականին Լևոն Ա-ը ներխուժեց Դաշտային Կիլիկիա՝ գրավելով Մամեստիա, Ադանա և Տարսոն քաղաքները: Եվ հավանաբար դա էր պատճառը, որ, ըստ Միքայել Ասորու, Լևոնը կրում էր «դիադեմա» և իրեն հռչակել էր թագավոր[2]: Վերը նշված քաղաքների նվաճումով խիստ սրվեցին Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի լատին իշխանության փոխհարաբերությունները, և այդ անհաշտ պայքարը շարու-

---

[1] Տե՛ս **Michel le Syrien**, p. 227.

[2] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Միքայել Ասորու «Ներբողյանը և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը», Հայ-բյուզանդական հետազոտություններ, էջ 521:

նակվեց նաև հետագա տարիներին՝ մեծ վնաս հասցնելով երկու պետություններին:

Փաստորեն՝ 1129-1136 թվականներին հայկական իշխանությունը Դաշտային Կիլիկիային տիրելու համար ստիպված էր պայքարել տարածաշրջանի մի շարք պետությունների դեմ:

1137 թվականին բյուզանդական բանակը, ներխուժելով Կիլիկիայի սահմանները և հաղթահարելով հայերի համառ դիմադրությունը, գրավեց կարևոր կենտրոնները՝ Անարզաբան և Վահկան, որից հետո՝ ողջ Կիլիկիայի տարածքը: Նորաստեղծ հայկական իշխանապետությունը չկարողացավ դիմադրել Բյուզանդական կայսրության վիթխարի ուժին: Դրանից հետո Կիլիկիայի հայկական իշխանապետությունը որոշակի ժամանակ դադարեց գործելուց[1]:

1.1 Մլեհ Ռուբինյանի մուտքը պատմական ասպարեզ:

Կիլիկյան Հայաստանի պատմության ամենահետաքրքիր դեմքերից մեկը Մլեհ Ռուբինյանն է, ով միևնույն ժամանակ մեր պատմության ամենահակասական գործիչներից է: Նրա ծննդյան հստակ թվականը պատմիչների մոտ չի արձանագրվել: Չկան տեղեկություններ նրա մանկության և պատանեկության մասին: Հստակ է, որ Մլեհը Կիլիկիայի իշխան Լևոն Ա Ռուբինյանի որդիներից էր[2]: Մլեհի ծննդյան մասին որոշ տեսակետներ կան պատմիչների երկերում, ինչպես նաև գիտական գրականության մեջ:

---

[1] Տե՛ս Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, էջ 99-120, Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 107-109, Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 111-113:

[2] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, էջ 16:

Անարզաբա

Այսպես՝ Լևոն Ա իշխանի որդիների ծննդյան հաջորդականության մասին խոսում է 13-րդ դարի Կիլիկյան Հայաստանի պատմիչ և փիլիսոփա Վահրամ Րաբունին և նշում, որ նախ ծնվել է Թորոսը, այնուհետև Ստեփանեն և վերջում միայն Մլեհը.

Նախ զԹորոս՝ մեծըն կոչեալ,
Եւ զՍտեֆանէն ՝պսակադրեալ.
Ապա զՄլեհն՝ յառաջացեալ,
Եւ զՌուբէնն զհետ եղեալ…[1]

Թեև մյուս պատմիչները վերը նշյալ խնդրի կապակցությամբ տեղեկություններ չեն հաղորդում, սակայն Վահրամ Րաբունու հաղորդումն էլ կասկածելի է թվում: Հեղինակը, ով ապրել և ստեղծագործել է Ռուբինյան եղբայրների ծննդից մոտավորապես 150 տարի հետո, հավանաբար շփոթվել է: Այդ մասին են վկայում Կիլիկիայի պատմության հետազոտությամբ զբաղվող մի շարք այլ գիտնականներ:

Այսպես՝ առաջինն այդ մասին արձագանքել է Ղևոնդ Ալիշանը և իր մեծածավալ աշխատության մեջ կարծիք հայտնել, որ Լևոն Ա իշխանի ավագ որդիներն են Ռուբենը, ապա Թորոսը[2]: Մեր հետազոտվող խնդրի համար կարևոր է նաև Ռ. Կոլենբերգի տեսակետը, ով բավական ծավալուն հետազոտություն է կատարել՝ նվիրված Ռուբինյանների, Հեթումյանների և Լուսինյանների տոհմաբանությանը: Վերջինս Մլեհի ծննդյան թվականը համարում է 1120-ը, ապա ավելացնում, որ Լևոն Ա իշխանի որդիները ծնվել են հետևյալ հաջորդականությամբ՝ Կոստանդին, Ստեփանե, Մլեհ և Թորոս[3]: Վերոնշյալ խնդրին անդրադարձել են այլ հետազոտողներ ևս: Մասնավորապես Ժ. Դեդեյանը, խոսելով Լևոն Ա իշ-

---

1 Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 197:

2 Տե՛ս **Ղ. Ալիշան,** Սիսուան, էջ 51-52:

3 Տե՛ս **W. H Rudt de Collenberg**, նշվ. աշխ., p. 49-50.

խանի որդիների մասին, հայտնում է, որ Թորոսը, Ստեփանեն ու Մլեհը ծնվել են 1118 թվականից առաջ, այսինքն՝ Լևոն Ա իշխանի առաջին ամուսնությունից[1]: Ռուբինյան եղբայրների ծննդյան հաջորդականությանը անդրադարձել է նաև Ս. Դադոյանը, ով, իր աշխատությունում անդրադառնալով Մլեհին, չի նշում նրա ծննդյան տարեթիվը, սակայն կարծում է, որ նա Լևոն Ա իշխանի կրտսեր որդին էր[2]: Ռուբինյան եղբայրների ծննդյան հաջորդականության մասին խոսում է նաև Լ. Տեր-Պետրոսյանը, ով կարծում է, որ Թորոսը տարիքով ամենափոքրն է եղել և միայն հանգամանքների բերումով է բազմել Կիլիկիայում հայոց իշխանապետի աթոռին[3]:

Ինչպես նկատում ենք, ժամանակակից գիտական գրականության մեջ գրեթե բոլոր հետազոտողներն էլ կասկածի տակ են դնում Վահրամ Րաբունու տեղեկությունը: Այդ են վկայում նաև մի շարք պատմական դեպքեր և իրադարձություններ, որոնց մասին կխոսենք մեր աշխատության հաջորդ գլուխներում:

Փաստորեն միջնադարյան սկզբնաղբյուրների վկայությունները և ժամանակակից գիտական գրականության մեջ եղած տեսակետները մեզ բերում են այն համոզման, որ Լևոն Ա իշխանի որդիներից կրտսերը եղել է Թորոսը, իսկ նրան ավագ են եղել Մլեհը և Ստեփանեն:

Միջնադարյան աղբյուրներում և մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ Մլեհի անվանը հանդիպում ենք 1137 թվականին, երբ Բյուզանդական կայսրությունը

---

[1] Տե՛ս **G. Dedeyan**, Les Armeniens, p. 526-527.

[2] Տե՛ս **S. Dadoyan**, The Arménians in the medieval Islamic world, Paradigms of interactions seventh to fourteenth centuries, volume two, New Brunswick and London, 2013, p. 162:

[3] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 118-122:

Հովհան Բ Կոմնենոսի գլխավորությամբ մի խոշոր արշավանք ձեռնարկեց դեպի Կիլիկիայի հայկական պետություն և ձերբակալեց Լևոն Ա Ռուբինյանին ու նրա ընտանիքի անդամներին[1]: Ինչպես իրավացիորեն նշում է Ռընե Գրուսեն, երիտասարդ հայկական իշխանությունը ի վիճակի չեղավ դիմակայելու[2]:

Քաղաքական այդ դեպքերը ներկայացնելիս պատմիչները, խոսելով Լևոն Ա Ռուբինյանի և նրա ընտանիքի անդամների մասին, առաջին անգամ հիշատակում են նաև հայոց իշխանի որդիներից Մլեհին:

1137 թվականի արշավանքի մասին խոսում է Սմբատ Սպարապետը և նշում, որ բյուզանդական կայսրը գրավեց Կիլիկիան և ձերբակալեց Լևոն Ա իշխանին, նրա կնոջը և երեխաներին[3]: Նա հաղորդում է, որ Լևոնի հետ Կոստանդ-

---

[1] Տե՛ս **Nicetas Chonitaa**, Historia, Bon, 1835, p. 30, Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 125, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ, աշխատ. Ա. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 162, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, **Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ**, կազմեց՝ Հ. Նալբանդյանը, Եր., 1965, էջ 220: Այդ մասին տես նաև՝ **Ф. Успенский**, История Вузантийской империи, Т. 3, М-Л, 1948, с. 206, **T. Boase**, նշվ. աշխ., p. 11-12, **Մ. Չամչյան**, նշվ. աշխ., էջ 58-61, **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 105-106, Հայ ժողովրդի պատմություն, ակադեմիական հրատարակություն, հ. Գ, Եր., 1976, **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, էջ 99-120, **Վ. Տեր-Ղևոնդյան,** Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 36-38, էջ 680, **В. Степаненко**, Торос II Рубенид и Византийская администрация Равнинной Киликии 1158-1160 г., с. 127, **В. Степаненко**, Княжество Рубенидов Киликии в Международных отношениях на Ближнем Востоке в 20-30-е годы XII в., с. 162.

[2] Տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, էջ 258:

[3] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 160:

նուպոլիս տարվեցին Թորոսն ու Ստեփանեն[1]: Միջնադարյան մյուս պատմիչները նույնպես չեն նշում Մլեհի գերեվարման փաստը:

Սամվել Անեցին վկայում է, որ Մլեհին հաջողվեց իր եղբայր Ստեփանեի հետ խույս տալ գերությունից և փախչել Կիլիկիայից. «Իսկ Բ որդիք նորա՝ Ստեֆանէ և Մլէհն՝ ոչ պատահեցան յըմբռնել_հօրն իւրեանց քանզի առ կոմսն Ուռհայու էին գնացեալ, որ էր նոցա քեռի»[2]: Այս տեղեկությունը կարևորվում է նրանով, որ առաջին անգամ խոսվում է Մլեհ Ռուբինյանի և իր եղբոր մասին: Ինչպես տեսնում ենք, երկու պատմիչների տեղեկություններում կան որոշակի տարբերություններ: Սամվել Անեցու տեղեկությունը հաստատվում է 13-րդ դարի մանր ժամանակագիրներից մեկի մոտ. «Իսկ Ստեֆանէ և Մլեհն զերծեալք գնացին յՈւռհա առ քեռին իւրեանց..»[3]: Այդ մասին խոսում է նաև Վահրամ Րաբունին, ով մասնավորապես նշում է.

Սակայն Մլեհն ոչ պատահեալ,
Եւ Ստեֆանէն՝ անդ ոչ դիպեալ,
Յորժամ և Հայրն՝ իւրեանց գերեալ,
Քանզի յՈւռհայ՝ էին գնացեալ,
Առ կոմս երկրին՝ պանդխտացեալ,
Չի էր քեռի՝ իւրեանց եղեալ[4]:

Փաստորեն Վահրամ Րաբունու հաղորդումից պարզ է դառնում, որ Մլեհը և Ստեփանեն հանգրվանել էին իրենց մորեղբոր մոտ, որտեղ անշուշտ անվտանգ էր:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Ռուբինյան

---

1 Տե՛ս Նույն տեղում, էջ 176:

2 Տե՛ս **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 130:

3 Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Պատմութիւն ազգին Ռովբինէանց թէ որպէս տիրեցին Կիլիկիո, էջ 100:

4 Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 198:

եղբայրների՝ Ուռհա մեկնելու հանգամանքներին: Այս իրադարձության մասին կարևոր տեղեկություն կա նաև Ղևոնդ Ալիշանի աշխատության մեջ: Երբ բյուզանդական բանակը գրավեց Վահկան, Ստեփանեն ու Մլեհը Ջոսլին Բ-ի (1131-1150) մոտ էին գտնվում. «Ըմբռնեալ ի կապանս, երկու որդւովքն՝ Թորոսիւ և Ռուբենաւ, ոչ դիպեալ անդ Մլեհին և Ստեֆանէի, զի կային յՈւռհա առ կոմս նորին, որ էր քեռի ինքեանց…»[1]: Եթե վստահենք այս տեղեկությանը, կարելի է կարծել, որ երկու եղբայրներին նախօրոք են դուրս բերել Կիլիկիայի սահմաններից: Վերը նշված դեպքերի մասին խոսում է նաև Կիլիկյան Հայաստանի պատմության վերջին շրջանի պատմագիր Հովհաննես Դարդելը, ով հպանցիկ նշում է, որ բյուզանդացիները ձերբակալեցին նաև պարոն Թորոսին և Մլեհին՝ բանտարկելով Կոստանդնուպոլսում: Երբ Լևոն Ա-ն մահացավ, բյուզանդական կայսրը ազատեց եղբայրներին, սակայն թույլ չտվեց վերադառնալ Կիլիկիա: Ստեղծված պայմաններում Ստեփանեն և Մլեհը փախան Պոլսից. «Եւ ձերբակալ արարին զպարոնն Լևոն և զորդիս նորա զերկուսին, որ անուանեալ կոչէին պարոն Թորոս և Մէլէք (Մլեհ), տարան զերեսին զնոսա ի Կոստանդնուպոլիս և արկին ի բանտ, ուր մնացին նոքա զամս երիս: Եւ յետ այնորիկ մեռաւ պարոն Լևոն, և կայսեր արձակեալ ի կապանաց զորդիս նորա, եթող զնոսա ազատս ի քաղաքին Կոստանդնուպոլսի: Եւ գտեալ նոցա ժամ դիպող փախստեայ գնացին ի Հայս և զօրաժողով արարեալ՝ կալան զինուզօրութեամբ զամուրն Վահկայ....»[2]: Թեև Հովհաննես Դարդելը որոշակի տեղեկություններ է տալիս նշված դեպքերի մասին, սակայն կարծում ենք, որ մատենագրի մոտ որոշակի շփոթմունք կա Մլեհի մասին, և այն տարբերվում է մյուս պատմիչների տեղեկություններից:

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 345:

[2] Տե՛ս **Հովհաննես Դարդել,** էջ 12:

Խնդիրն այն է, որ Հովհաննես Դարդելը ավելի ուշ շրջանի հեղինակ է և այդ դեպքերի ականատես չի եղել: Այն, որ Լևոն Ա իշխանի հետ գերի էին տարվել նրա երկու որդիները դա փաստ է, սակայն խոսքը վերաբերում է ոչ թե Մլեհին, այլ Ռուբենին, ով Կոստանդնուպոլսի բանտում էլ մահացավ:

Նշված դեպքերի մասին կան որոշակի կարծիքներ նաև մասնագիտական գրականության մեջ: Այսպես՝ ըստ Գ. Միքայելյանի և Վ. Տեր-Ղևոնդյանի՝ Լևոն Ա-ն իր ընտանիքով Կոստանդնուպոլիս տարվեց[1], սակայն այս հետազոտողները չեն նշում՝ եղե՞լ է Մլեհը գերեվարվածների մեջ, թե՝ ոչ: Իսկ ահա Կ. Մութաֆյանը և Վ. Ստեպանենկոն, հավանաբար հենվելով Ալիշանի և այլ հեղինակների տեղեկությունների վրա, կարծիք են հայտնում, որ 1137 թվականի դեպքերի ժամանակ Մլեհը և Ստեփանեն Կիլիկիայում չէին. նրանց այդ արշավանքից առաջ ուղարկել էին Եդեսիայի կոմս Ջոսլին Բ-ի մոտ[2]: Մեզ հետաքրքրող խնդրի շուրջ որոշակի տեսակետներ են հայտնում նաև Հ. Բարթիկյանը[3], Գ. Ղազարյանը[4] և Ս. Տեր-Ներսիսյանը[5], որոնք թեև չեն նշում, որ Մլեհը և Ստեփանեն փրկվել էին, սակայն ընդգծում են այն փաստը,

---

[1] Տե՛ս **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 111, **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 38:

[2] Տե՛ս **Կ. Մութաֆյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 383, **В. Степаненко**, Цицилия, «Дама Тарса и Сестра Короля» (Равнинная Киликия в составе Антиохийского княжества. 1108-1137 гг.), с. 119.

[3] **Հ. Բարթիկյան**, Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը», Հայ-բյուզանդական հետազոտություններ, էջ 520:

[4] **Jacob G. Ghazarian**, The Armenian Kingdom in Cilicia During The Crusades, The integration of Cilician Armenians with the Latins 1080-1393, Curzon, 2000, p. 116.

[5] **Ս. Տեր-Ներսիսյան**, Խաչակիրները և հայերը, հատոր Ա, էջ 387:

որ Լևոն Ա իշխանի հետ գերվեցին նրա որդիներից երկուսը՝ Ռուբենը և Թորոսը: Վերջապես նշյալ խնդրին անդրադարձել է նաև հայ-բյուզանդական հարաբերությունների մասնագետ Ա. Բոզոյանը, ով մի շատ հետաքրքիր վարկած է առաջ քաշում, համաձայն որի՝ դեռևս 1136 թվականին Կիլիկիայի հայկական պետության և Անտիոքի դքսության բախումից հետո Լևոն Ա իշխանը գերվել էր Անտիոքի դուքս Ռայմոնդ Պուատիեի (1136-1149) կողմից, սակայն երբ Կիլիկիայում հայտնվում է այս երկու իշխանությունների (Կիլիկիա և Անտիոք) համար հավասարաչափ վտանգավոր Հովհաննես Բ Կոմնենոսը, ազատ է արձակում Ռուբինյան իշխանին և փոխարենը ստանում 60 հազար դահեկան, ինչպես նաև Մամեստիան, Ադանան, Սարվանդիքարը և պատանդ վերցնում նրա որդիներին[1]: Հետազոտողի կարծիքով՝ հիշատակված պատանդները չէին կարող լինել Լևոնի ավագ որդիներ Ռուբենը և Թորոսը, որոնք 1137 թվականի բյուզանդական արշավանքից հետո իրենց ծնողների և քույրերի հետ գերեվարվեցին Կոստանդնուպոլիս, այլ կրտսերները՝ Ստեփանեն և Մլեհը[2]: Լ. Տեր-Պետրոսյանը, անդրադառնալով վերը նշված խնդրին, կարծիք է հայտնում, որ այդ ժամանակ Ռայմոնդին չափազանց անհրաժեշտ էր Լևոնի բարեկամությունը՝ ընդհանուր թշնամու դեմ պայքարում, և որպեսզի Անտիոքի

---

[1] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, էջ 165: Այդ մասին տես նաև՝ **Վ. Ավետիսյան**, Քաղաքական ազդեցության հիմնահարցը Անտիոքի իշխանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններում, էջ 275: Լևոն Ա իշխանի գերեվարման մասին է խոսում նաև ժամանակակից հեղինակներից Անապատականը, սակայն վերջինս թյուրիմացաբար այս դեպքը դնում է 1138 թվականին, **Անապատական,** Համառոտ պատմութիւն հայ-լատինական հարաբերութեանց, սկիզբէն մինչեւ 1382, Անթիլիաս, 1981, էջ 82-83:

[2] Տե՛ս Նույն տեղում:

դուքսը վստահ լիներ հայ իշխանի լոյալությանը, իր մոտ պատանդ է պահում Լևոն Ա-ի որդիներին[1]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով միջնադարյան պատմիչների հաղորդած տեղեկությունները և գիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ կարող ենք եզրակացնել, որ Ա. Բոզոյանի և Լ. Տեր-Պետրոսյանի առաջ քաշած վարկածները մոտ են իրականությանը, և շատ հավանական է, որ Ռուբինյան երկու եղբայրները Կիլիկյան Հայաստանի սահմաններից դուրս հանվեցին 1137 թվականի արշավանքից բավական առաջ:

Անկախ նրանից, թե Մլեհն ու Ստեփանեն ինչ հանգամանքների բերումով էին դուրս եկել Կիլիկիայի սահմաններից (Լևոն Ա-ի հեռատեսությունը, թե Մլեհի ու Ստեփանեի պատանդությունը), նրանք հնարավորություն ստացան՝ շարունակելու պայքարը իրենց հոր և եղբոր մահվանից հետո և հասնելու հաջողության: Դա կարևոր նշանակություն ունեցավ նաև Կիլիկիայի հայկական իշխանապետության հետագա ընթացքի վրա:

1.2 Կիլիկիայի հայոց իշխանապետությունը և Մլեհի գործունեությունը 1140-1150-ական թթ.:

1137 թվականի բյուզանդական ավերիչ արշավանքից հետո Կիլիկիայի հայոց իշխանապետությունը մի քանի տարով դադարեց գոյություն ունենալուց: Հետաքրքիր է պարզել, թե ինչով է զբաղվել Մլեհ Ռուբինյանը այդ տարիներին: Հարկ է նշել, որ Եդեսիայում ապրած ժամանակաշրջանում վերջինիս մասնակցությամբ որևէ լուրջ իրադարձություն

---

1 Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 107: Շատ հավանական է, որ որոշ ժամանակ անց Ռուբինյան եղբայրներին Անտիոքից իր մոտ է տանում իրենց քեռին՝ Եդեսիայի կոմս Ժոսլին Բ-ն:

տեղի չի ունեցել. նա պարզապես սպասել է հարմար պահի՝ քաղաքական ասպարեզ իջնելու համար:

1140-ական թվականներին[1] Կոստանդնուպոլսի բանտում մահանում են Լևոն Ա իշխանը և իր որդին՝ Ռուբենը, իսկ Թորոսը կարողացավ փախչել, վերադառնալ Կիլիկիա և ղեկավարել ազատագրական պայքարը: Այդ մասին Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ հետևյալն է ասվում. «ՇՂԳ (1144) Թորոս որդին Լեւոնի եկն ի Կոստանդնուպոլսէ և էառ զՎահկան և նորոգեաց զիշխանութիւն»[2]: Թորոս Բ-ի՝ Կիլիկիա վերադառնալու և Կիլիկիայում ազատագրական պայքարը սկսելու մասին մեզ ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Սմբատ սպարապետը, ով մասնավորապես նշում է. «Վերջինս կարողացավ փախչել Կոստանդնուպոլսից և վերադարձավ Կիլիկիա: Նա սկզբում չհայտնեց իր ով լինելը, բայց հավաքեց ժողովրդին և կարճ ժամանակում աստծո օգնությամբ հետ գրավեց հայկական իշխանության մի շարք տարածքներ…»[3]: Երբ Ստեփանեն և Մլեհը տեղեկացան, որ իրենց եղբայր Թորոսը վերադարձել է Կիլիկիա և սկսել ազատագրական պայքար նրանք էլ վերադարձան Կիլիկիա և համատեղ ջանքերով սկսեցին վերականգնել Կիլիկիայի հայկական պետությունը: Հարց է առաջ գալիս, թե ինչու Մլեհը և Ստեփանեն, ովքեր մինչև Թորոսի վերադարձը գտնվում էին ազատության մեջ, որևէ քայլ չկատարեցին Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնման

---

[1] Մասնագիտական գրականության մեջ տարբեր թվականներ են նշվում Լևոն Ա իշխանի մահվան և Թորոսի վերադարձի մասին: Քանի որ այն դուրս է մեր հետազոտությունից, հետևաբար մենք մանրազնին կանգ չենք առնում այդ խնդրի վրա:

[2] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Եր., 2011, էջ 47, կամ նույնի մասին տես՛ Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Ա, էջ 75:

[3] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 164-165:

գործում և միայն Թորոսի վերադարձից հետո միացան նրան: Լ. Տեր-Պետրոսյանը, անդրադառնալով նշված խնդրին, գրում է.

1. Հավանական է այն տեսակետը, որ այդ պահին միգուցե Մլեհը և Ստեփանեն, չունենալով քաղաքական հոտառություն և համարձակություն, չեն զգացել բյուզանդական կայսր Հովհաննես Բ Կոմնենոս կայսեր մահից հետո առաջացած հնարավորությունը, որպեսզի մտնեին քաղաքական ասպարեզ և իրենց դրական դրսևորեին:
2. Հնարավոր է նաև, որ Մլեհին և Ստեփանեին զսպել է իրենց ազգական Ջոսլինը՝ չցանկանալով խնդիրներ ունենալ Բյուզանդական կայսրության հետ, ում խնամակալության տակ էին գտնվում Ռուբինյան եղբայրները: Սակայն Թորոսի վերադարձը խթանեց Ստեփանեին և Մլեհին միանալ վերջինիս[1]:

Համաձայն լինելով Լ. Տեր-Պետրոսյանի առաջ քաշած տեսակետին կցանկանայինք նաև ավելացնել, թե չի բացառվում որ Ռուբինյան եղբայրները չեն ցանկացել ապստամբություն բարձրացնել կայսրության դեմ, որպեսզի չզայրացնեն բյուզանդական կայսրին, քանի որ Կոստանդնուպոլսում գերության մեջ գտնվող իրենց հարազատները կարող էին մահապատժի ենթարկվել, իսկ հոր և Ռուբենի սպանությունից և Թորոսի փախուստից հետո այլևս չկար որևէ խոչընդոտ՝ նրանց կանգնեցնելու համար:

Ամեն դեպքում փաստ է մեկ հանգամանք, որ Կիլիկիայի իշխանապետության վերականգնման և տարածքների ազատագրման գործի մեծագույն մասը կապված է հենց Թորոս Բ-ի անվան հետ: Եվ ինչպես նշում է նորագույն ժամանակաշրջանի հետազոտողներից Վ. Ստեպանենկոն, 1144 թվականից սկսվում է Ռուբինյանների նոր պայքարը Բյուզանդա-

---

[1] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 122:

կան կայսրության դեմ[1], թեև այստեղ հետաքրքիր է այն փաստը, որ պատմիչները Կիլիկյան Հայաստանի ազատագրման գործի մեծ մասը կապում են Թորոս Բ-ի անվան հետ և նշում, որ նրան միացել և օգնել է Ստեփանեն: Եվ չկա խոսք, որ Մլեհը ևս մասնակցություն ցուցաբերած լինի այդ կարևոր իրադարձություններին, ինչը բնականաբար շատ կասկածելի է: Պատմիչ Սամվել Անեցին, անդրադառնալով այս դեպքերին, նշում է, որ Թորոսը եկավ Անտիոք, գտավ իր եղբայր Ստեփանեին և գրավեց Համուդը, իսկ հետո՝ ողջ երկիրը[2]: Նույնանման տեղեկության հանդիպում ենք նաև Վահրամ Րաբունու աշխատության մեջ[3]

Առանձնակի՝ զԹորոսն ելեալ,
Ի Կիլիկիա՝ անտի մտեալ:
Ստեֆանէ՝ անդէն գտեալ
Եւ միաբան՝ հնարաւորեալ.....:

Ինչպես նկատում ենք, թե՛ Սամվել Անեցին և թե՛ Վահրամ Ռաբունին չեն մատնանշում Մլեհին, բայց անժխտելի է այն փաստը, որ վերջինս նույնպես ակտիվ մասնակցություն է ունեցել Կիլիկիայի հայոց պետության ազատագրման համար մղվող գործընթացին: Շատ հետաքրքիր է նաև նշել, որ Կիրակոս Գանձակեցին ու Վարդան Արևելցին էլ մյուս պատմիչների նման չեն խոսում Մլեհի մասնակցության մասին,

---

1 Տե՛ս **В. Степаненко**, Равниная Киликия во взаимоотношениях Антиохийского княжества и княжества Рубенидов в 10-40-х годах XII в., с. 126. Վ. Տեր-Ղևոնդյանի պնդմամբ Ռուբինյանների նոր պայքարը Բյուզանդական կայսրության դեմ սկսվեց և հաջողությամբ ավարտվեց 1145 թվականին, Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 40, իսկ ըստ Ա. Բոզոյանի՝ 1148 թվականին, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, էջ 132-133:

2 Տե՛ս **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 136:

3 Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 202:

այլ Թորոսի հետ մատնանշում են միայն Ստեփանեին. «Այս Թորոս իշխան և եղբայր իւր Ստեփանէ որդիք էին իշխանին Լևոնի…Սոքա ընդարձակեցին զսահմանս իւրեանց քաջութեամբ՝ տիրելով բազում գաւառաց և քաղաքաց աշխարհին Կիլիկեցւոյ և Սուրացւոյ և այլոց բազմաց. առին զանուանի քաղաքս աշխարհին՝ զՏարսոն, զՍիս, և զԱտանա և զՍելևկիա, որ շուրջ զնոքօք գաւառք և քաղաքք..»[1]: Պատմիչների վերը նշված տեղեկություններից կարելի է հանգել հետևյալին: Կա՛մ հեղինակները հստակ տեղեկություն չեն ունեցել Մլեհի գործունեության մասին, կա՛մ էլ մի շարք այլ հեղինակների նման, չընդունելով Մլեհի գործունեության փաստը, չեն ցանկացել նշել, որ վերջինս նույնպես որոշակի մասնակցություն է ունեցել Կիլիկիայի հայոց պետության վերականգնման գործին: Ամեն դեպքում փաստ է, որ մի քանի տարվա համառ պայքարից հետո Ռուբինյան եղբայրներին հաջողվեց ազատագրել Լեռնային Կիլիկիայի մեծ մասը: Պատմիչներից բացի՝ վերոնշյալ խնդրին անդրադարձել է հետազոտողներից Յ. Տեր-Ղազարյանը, ըստ որի՝ Մլեհը մեծ դերակատարում է ունեցել Կիլիկիայի ազատագրական կռիվներին, և վերջինս իր եղբոր՝ Ստեփանեի հետ հազարավոր հույների է ջարդել և անխնա կոտորել[2]: Թեև հեղինակը ցույց չի տալիս այն սկզբնաղբյուրը, որից օգտվել է, սակայն մի այլ կարևոր տեսակետ է արտահայտում՝ նշելով, որ Թորոս Բ-ն իր քաջությամբ և նուրբ քաղաքագիտությամբ Կիլիկիայի պետության երկրորդ հիմնադիրը հանդիսացավ[3]:

Մոտավորապես 1158 թվականին Ստեփանեն ապստամբություն է բարձրացնում Թորոսի Բ-ի իշխանության դեմ, բայց պարտություն է կրում, որի մասին վկայում է Միքայել

---

[1] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 109, Յաւաքումն պատմութեան **Վարդանայ Վարդապետի**, էջ 125:

[2] Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 174:

[3] Տե՛ս Նույն տեղում:

Աօրին[1]: Ցավոք, միջնադարյան պատմիչները, որոնք խոսում են նշված շրջանի քաղաքական դեպքերի մասին, որևէ խոսք չեն ասում այն մասին, թե Մլեհը ինչ դիրք է գրավել և ում է աջակցել: Չի բացառվում, որ Մլեհը չեզոքություն է պահպանել: Նրա ոչ ակտիվ վիճակը հավանաբար պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ նույնիսկ այդ ապստամբության հաջողության պարագայում ինքը ոչինչ չէր շահելու, քանի որ Թորոսի գահընկեցությունից հետո Կիլիկիայի հայոց նոր իշխանապետ կդառնար Մլեհից տարիքով ավագ եղբայր Ստեփանեն:

Հայտնի է, որ Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնումից հետո Ստեփանեն և Մլեհը ղեկավարում էին Կիլիկիայի ռազմական ուժերը, սակայն որոշ ժամանակ անց Ստեփանեին հույները դավադրաբար սպանում են՝ կենդանի ընկղմելով կաթսայում եռացող ջրի մեջ: Անհրաժեշտ է նաև նշել, որ Մատթէոս Ուռհայեցին էլ, խոսելով Ստեփանեի մահվան մասին, ոչինչ չի նշում Մլեհի գործունեության մասին, միայն տեղեկացնում է, որ Ստեփանեի եղբայրները արյան վրեժը հույներից հազարապատիկ առան[2]: Թեև պատմիչը չի նշում եղբայրների անունները, սակայն պարզ է, որ խոսքը վերաբերում էր Թորոսին և Մլեհին, քանզի նրա մյուս եղբայրները վախճանված էին:

Պատմիչ Կիրակոս Գանձակեցին էլ, խոսելով Ստեփանեի մահվան մասին, նշում է, որ Ստեփանեի մահվան վրեժը լուծեց Թորոսը. «Իսկ Թորոսի առեալ զեղբորորդիս իւր զՌուբէն և զԼևոն, եդ զնոսա ի բերդ մի ամուր, և ապա էառ Թորոս զքէն վրիժուց արեան եղբօր իւրոյ ի հոռոմոց անտի, որ բնակեալ էին յաշխարհին...»[3]: Այս դեպքերը նկարագրող թերևս միակ պատմիչը, ով խոսում է Մլեհի մասնակցության մասին,

---

[1] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 441:

[2] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 428:

[3] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 110:

Սմբատ Սպարապետն է, համաձայն որի՝ Մլեհը և Թորոսը որոշեցին պատժել իրենց եղբոր սպանության մասնակիցներին և սպանեցին հազարավոր հույների. «Իսկ եղբայր նորա պարոն Թորոս և պարոն Մլեհն զայրացեալ ընդ գործ նորա՝ առին վրէժ արեան նորա հազարապատիկ յաւելուածով»[1]:

Ինչպես նկատում ենք, միջնադարյան աղբյուրներում վերը նշված դեպքի շուրջ կան որոշակի տարբերություններ և հակասություններ: Կարծում ենք՝ այս պարագայում Սմբատ Սպարապետի հաղորդումը կարող է ավելի մոտ լինել իրականությանը, քան Կիրակոս Գանձակեցունը և Մատթէոս Ուռհայեցունը, քանի որ նշյալ ժամանակահատվածում Մլեհը, ով Կիլիկիայի զորքերի սպարապետն էր, չէր կարող համակերպվել եղբոր սպանության փաստի հետ: Դեռ ավելին, հաշվի առնելով վերջինիս բնավորության կոշտ գծերը՝ հստակ կարող ենք արձանագրել, որ նա նույնպես ակտիվ կերպով մասնակցել է Ստեփանեի սպանության մեղավորների պատժին:

Հետագա տարիներին էլ Բյուզանդական կայսրությունը ոչ մի կերպ չէր համակերպվում Կիլիկիայի հայոց իշխանապետության վերականգնման փաստի հետ, և դա էր պատճառը, որ 1150-ական թվականներին Բյուզանդական կայսրության և հայոց իշխանապետության առճակատումը շարունակվեց, որի հետևանքով կայսրության զորքերը կարողացան մոտավորապես 1158-1160 թթ. Կիլիկիայի հայոց իշխանապետությունից գրավել Տարսոն, Ադանա և Մամեստիա քաղաքները[2]: Մյուս կողմից էլ սա պատմական մի ժամանակաշրջան է, երբ Կիլիկիայի հայկական իշխանապետության արտաքին քաղաքականության մեջ կարևոր դերակատարում են սկսում ունենալ երկու հզոր հարևանները՝ Իկոնիայի

---

[1] Տե՛ս **Սմբատ, Պատմութիւն**, էջ 86:

[2] Տե՛ս **В. Степаненко**, Торос II Рубенид и Византийская администрация Равнинной Киликии 1158-1160 гг., с. 128.

սուլթանությունը և Հալեպի աթաբեկությունը: Բացի այդ՝ 12-րդ դարի 60-ական թվականներին շարունակվում էր խաչակրաց իշխանությունների և Բյուզանդական կայսրության պայքարը՝ Արևելքի մահմեդական պետությունների դեմ: Եվ այս տարիներին Թորոս Բ-ն, ինչպես վկայում է Յ. Տեր-Ղազարյանը, դրսևորեց իրեն որպես հմուտ դիվանագետ: Հաշվի առնելով բարդ քաղաքական վիճակը՝ հայոց իշխանապետը, ով բազմաթիվ անգամ բախվել էր Անտիոքի իշխանապետության հետ, այնուամենայնիվ բարեկամացավ նրանց հետ և վերջիններիս զիջեց Բաղրասի ամրոցը[1]: Միևնույն ձևով հաշտվեց Իկոնիայի սուլթան Իզզ եդ-դին Կըլըչ Արսլան Բ-ի (1156-1188) հետ՝ նրան հանձնելով Բերդուս և Ջահան գավառները[2]: Այս քայլերի շնորհիվ՝ Թորոս Բ-ն կարողացավ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը գոնե առժամանակ զերծ պահել մեծ պատերազմներից և զարգացրեց՝ կառուցելով նորանոր բերդեր և ամրոցներ, վանքեր և այլ կառույցներ, որոնք նպաստեցին հայկական իշխանապետության հետագա զարգացմանը:

1.3 Մլեհի մասնակցության հնարավորությունը Հարիմի ճակատամարտին:

1164 թվականի օգոստոսի 11-ին Անտիոքից արևելք գտնվող Հարիմ բնակավայրի մոտ մեծ ճակատամարտ տեղի ունեցավ Հալեպի աթաբեկության և նրա քաղաքական հակառակորդների՝ Դաշտային Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ Կոստանդին Կալոմանի, Անտիոքի իշխան Բոհեմոնդի, Տրիպոլիի կոմս Ռայմոնդի, Կիլիկիայի բանակի, որը գլխավորում էին իշխանապետ Թորոս Բ-ն և իր եղբայր,

[1] Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 143:

[2] Տե՛ս Նույն տեղում:

սպարապետ Մլեհը[1]: Ճակատամարտը ավարտվեց Նուր ադ-Դինի զորքերի հաղթանակով և դաշնակիցներից շատերի գերությամբ: Միջնադարյան աղբյուրներում հակասական տեղեկություններ կան այն մասին, թե արդյոք Մլեհն ու Թորոսը մասնակցություն ունեցել են Հարիմի ճակատամարտին, թե՝ ոչ: Հայտնի փաստ է միայն, որ դաշնակիցների գրեթե բոլոր ղեկավարները, բացառությամբ Մլեհի և Թորոսի, ընկան շրջապատման մեջ ու գերվեցին: Բացառված չէ, որ Թորոսն ու Մլեհը վերջին պահին պարզապես չեն մասնակցել ճակատամարտին կամ էլ սպասողական դիրք են գրավել:

Այս ճակատամարտին անդրադառնում են միջնադարի տարբեր պատմիչներ: Բավական տեղեկություններ կան պատմիչ Անանուն Եդեսացու ժամանակագրության մեջ, որտեղ հեղինակը, առանց հիշատակելու Մլեհին, հայտնում է, որ ճակատամարտի վերջում կոմսն ու Թորոս Բ-ն կարողացան հեռանալ, իսկ հույների դուքսը, Անտիոքի տերը և ֆրանկ հեծյալների մեծ մասը գերի ընկան [2]: Այս ճակատամարտի մասին հայկական աղբյուրներից խոսում է միայն Ե-ԺԲ դարերի հիշատակագիրներից մեկը, որը մասնավորապես նշում է.

Զոր քրիստոնեայք իսպառ անկան
Անտիոքու զաւրքն հարան,
Եւ զաւրագլուխքն ըմբռնեցան,
Ի յաւգոստոս երեքտասան (13),
Չորեքշաբաթ աւր տխրական...
Բայց աջն Հաւր պահպանական
Պահեաց զիշխանն հայկական,
ԶԹորոս անունն յոյժ վեհական...[3]

---

[1] Տե՛ս **Տ.Runciman**, նշվ. աշխ., էջ 369, Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 55:

[2] Տե՛ս **Անանուն Եդեսացի**, էջ 122-123:

[3] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դարեր, էջ 189:

Վահրամ Ռաբունին Անանուն Եդեսացու նման նշում է ճակատամարտի մասնակիցների թվում միայն Թորոս Բ-ի անունը: Թեև վերը նշված պատմիչները չեն հիշատակում Մլեհին, սակայն դա չի նշանակում, թե Մլեհը չի մասնակցել Հարիմի ճակատամարտին: Ճակատամարտին Մլեհի մասնակցության մասին վկայում է արաբ պատմիչ Իբն ալ Ասիրը: Նա մասնավորապես նշում է, որ Հարիմի ճակատամարտում Թորոս Բ-ի հետ եղել է նաև նրա եղբայր Մլեհը[1] : Շարունակելով իր միտքը՝ հեղինակը նշում է, որ Մլեհը կարողացավ փրկվել միայն թուրքմենական ինչ-որ մի ցեղի օգնությամբ[2]: Մենք հավանական ենք համարում այս վկայությունը, քանզի նշյալ ժամանակաշրջանում Մլեհը Կիլիկյան Հայաստանի զորքերի սպարապետն էր և պետք է որ գտնվեր եղբոր կողքին ու առաջնորդեր զինված ուժերը:

Հարիմի ճակատամարտի և նրա անցքերի մասին որոշակի հետազոտություններ կան նաև մասնագիտական գրականության մեջ:

Ալիշանն էլ, անդրադառնալով Հարիմի ճակատամարտին, նշում է, որ Մլեհը մասնակցել է ռազմական գործողություններին և գերությունից փրկվել է միայն թուրքմենական զորքի աջակցության շնորհիվ. «Երբ անոնք մտիկ չըրին՝ ինքն իրեն ներովք դարձաւ. բայց իր եղբայրն Մլեհ մնաց անխոհեմներուն հետ...միայն Մլեհ օգնութեամբ Եիւրիւք Թիւրքմէնից, իր գնդին, և քանի մ ասպետաց հետ յաջողեցաւ պրծիլ ...»[3]: Թեև հայտնի հայագետը չի նշում այն աղբյուրը, որից օգտվել է, բայց չի բացառվում, որ օգտված լինի հենց արաբական աղբյուրներից և մասնավորապես Իբն ալ-Ասի-

---

[1] Տե՛ս The Chronicle of **Ibn al-Athir** for the crusading period, part two, the years 541-589/ 1146-1193, The age of Nur al-din and Saladin, translated by D. S. Richards, 2007, p. 135.

[2] Տե՛ս Նույն տեղում:

[3] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի եւ պարագայ, էջ 313:

րից: Ս. Բոռնազյանը խոսում է Հարիմի ճակատամարտի մասին, սակայն չի հիշատակում Մլեհի անունը[1]: Ի տարբերություն Ս. Բոռնազյանի՝ նշյալ խնդրին անդրադարձել է Ա. Բոզոյանը, որի կարծիքով՝ Մլեհը իր եղբոր հետ մասնակցել է հիշյալ ճակատամարտին[2]:

Այս ճակատամարտին անդրադարձել է նաև Վ. Տեր-Ղևոնդյանը, ով, հիմնվելով արաբ մատենագիրների վկայությունների վրա, նշում է, որ Հարիմի ճակատամարտի ավարտին Մլեհը փրկվեց մահմեդական ինչ-որ մի ցեղի կողմից, որոնց բարեկամն էր[3]: Կարելի է ենթադրել, որ Մլեհը վերը նշված ժամանակաշրջանում արդեն որոշակի կապեր է ունեցել նաև տարածաշրջանի մահմեդական իշխանություններ հետ: Վերջապես նշյալ ճակատամարտին անդրադարձել է նաև Ս. Դադոյանը և նշել, որ ըստ Անանուն Եդեսացու, նշյալ ճակատամարտից հետո միայն երկու կիլիկիացի եղբայրներին հաջողվեց փախչել[4]: Բնականաբար խոսքը վերաբերում է Մլեհին և Թորոս Բ-ին: Սակայն հետազոտողի մոտ որոշակի շփոթմունք կա, քանզի Անանուն Եդեսացու Ժամանակագրության մեջ հեղինակը չի նշում Մլեհի անունը, այլ արձանագրում է, որ կոմսը և Թորոսը ճողոպրեցին[5]: Եվ այստեղ կոմս ասելով պատմիչը նկատի է ունեցել Տրիպոլիի կոմս Ռայմոնդ Գ-ին (1152 թվականից ընդհատումներով մինչև 1187 թվականը) այլ ոչ թե Մլեհին:

Մենք նույնպես հակված ենք կարծելու, որ Մլեհը՝ որպես Կիլիկյան զորքերի հրամանատար, մասնակցել է եղբոր հետ Հարիմի ճակատամարտին:

---

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, էջ 683:

[2] Տե՛ս Հայոց պատմություն, հ. Բ, գիրք 2, էջ 339:

[3] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 58:

[4] Տե՛ս **S. Dadoyan**, նշվ. աշխ., էջ 162:

[5] Տե՛ս **Անանուն Եդեսացի**, էջ 123:

12-րդ դարի 50-60-ական թվականներին խաչակիրների թուլացումը Կիլիկիայի հայկական պետության ղեկավարներին բերեց այն համոզման, որ հայկական իշխանապետության և խաչակրաց իշխանությունների դաշնակցությունը հեռանկարային չէ:

1.4 Ռուբինյան եղբայրների հակամարտությունը և Մլեհի արտաքսումը Կիլիկիայից:

Հայտնի է, որ Մլեհը իր քաջությամբ և ռազմական ներուժով Թորոս Բ-ի վարած ռազմական գործողությունների ընթացքում մեծ աջակցություն էր ցուցաբերել, սակայն եղբայրները իրարամերժ քաղաքական կողմնորոշումներ են ունեցել, և հավանաբար դա է եղել պատճառը, որ շուտով նրանց հակասությունները հասնում են գագաթնակետին:

Սմբատի տեղեկության համաձայն՝ Մլեհը, մոտավորապես 1165 թվականին դժգոհ լինելով Թորոս Բ-ի կառավարումից, որոշեց ապստամբել եղբոր դեմ[1]: Հետազոտողներից Յ. Տեր-Ղազարյանը հետևյալն է նշում. «Թորոսը սիրալիր հարաբերություններ էր հաստատել ֆրանկ իշխանների հետ, հաշտություն կնքել Իկոնիայի սուլթանի հետ և որոշ հայկական հողեր՝ հանձնել էր նրանց: Եվ նույնիսկ բյուզանդական կայսեր հետ ևս բարեկամական հարաբերություններ հաստատեց, իսկ Ստեփանեն և Մլեհը, որոնք գլխավորում էին Կիլիկիայի ռազմական ուժերը, դեռևս նախորդ տասնամյակներից իրենց եղբոր մեղմ քաղաքականության դեմ դուրս եկան»[2]:

Անդրադառնանք այն հանգամանքներին, որոնք դրդեցին Մլեհին դուրս գալ եղբոր դեմ և գրավել իշխանությունը Կիլիկիայում:

---

1 Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 186-187:

2 Տե՛ս **Ս. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 174:

1. Առաջին հերթին Մլեհը իրեն էր տեսնում Կիլիկիայի հայոց իշխանապետի աթոռին:

2. Մյուս կարևոր պատճառը պայմանավորված էր Կիլիկիայի հայկական պետության կողմից տարվող արտաքին քաղաքականությամբ. հայոց իշխանապետը զիջումներ էր կատարում թե՛ խաչակիրներին և թե՛ Բյուզանդական կայսրությանը, իսկ Մլեհը, ով այդ ժամանակ հայոց զորքերի սպարապետն էր, դեմ է դուրս գալիս եղբոր այդ քաղաքականությանը, բայց քանի որ հաջողության չի հասնում, լքում է հայոց պետության սահմանները:
3. Չի բացառվում նաև այն, որ Ռուբինյան եղբայրների հարաբերությունները ավելի սրվեցին Հարիմի ճակատամարտից հետո, որովհետև եթե վստահենք արաբ պատմիչի վկայություններին, ապա Մլեհը մասնակցեց ճակատամարտին, իսկ Թորոսը՝ ոչ: Հայտնի փաստ է, որ ճակատամարտի ավարտից հետո բավական հայեր գերվեցին, և հետագայում Թորոս իշխանապետը մեծ դժվարությամբ կարողացավ ապահովել նրանց վերադարձը:

Ինչ՞ու Մլեհը հենց այդ պահին ապստամբեց եղբոր դեմ, չէ՞ որ նրա և եղբոր միջև որոշ տարաձայնություններ կային արդեն երկար տարիներ: Դրա հիմքում ընկած է այն գործոնը, որ Մլեհից տարիքով մեծ էր Ստեփանեն: Դրա մասին նշում է նաև Վահրամ Րաբունին.

Նախ զԹորոս՝ մեծըն կոչեալ
Եւ զՍտեֆանէն՝ պսակադրեալ
Ապա զՄլեհն՝ յառաջացեալ
Եւ զՌուբէն զհետ եղեալ[1]:

[1] Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 197: Ռուբինյան եղբայրների տարիքային տարբերության մասին մանրազնին հետազոտություն է ներկայացված Քոլենբերգի աշխատության մեջ, որտեղ հեղինակը հստակ ցույց է տա-

Այսինքն՝ եթե Ստեփանի կենդանության ժամանակ նույնիսկ Մլեհը իրականացներ հաջող դավադրություն և չեզոքացներ Թորոսին, միևնույն է, նա չէր կարող բազմել Կիլիկիայի հայոց իշխանապետի աթոռին, քանզի այն վերապահված էր Ստեփանեին: Եվ հենց դա էր պատճառը, որ Մլեհը գիտակցաբար եղբոր սպանության փորձը իրականացրեց Ստեփանի մահվանից հետո, որպեսզի իրեն բաժին հասնի իշխանությունը:

Միջնադարյան պատմիչների ճնշող մեծամասնությունը Ռուբինյան եղբայրների հակամարտության վերաբերյալ լռում է՝ բարդ իրավիճակի մեջ դնելով հետազոտողներին: Ու թերևս միակ հեղինակը, ով լույս է սփռում նշված դեպքերին, Կիլիկյան Հայաստանի սպարապետ, պետական ու քաղաքական գործիչ Սմբատ Սպարապետն է, որի մեծարժեք աշխատության մեջ բավական խորությամբ ներկայացված է Մլեհի բարձրացրած ապստամբության ընթացքը և մանրամասները: Այսպես՝ պատմիչը հետևյալն է հաղորդում այդ մասին: «Եւ յայսմ ժամանակի յաղթողն Թորոս որդին Լեւոնի, կայր քաջութեամբ և պահէր զլեռնակողմն Տաւրոսի որոց տիրեալ էր. Իսկ եղբայր նորա Մլեհն էր այր չարաբարու և անագորոյն, և խորհեցաւ սպանանել զեղբայրն իւր զԹորոս, և յարեաց յինքն այս ոմանս ի նոյն խորհուրդ, և յաւուր միոջ՝ մինչ գնային յորս երէոց ընդ Մսիս և ընդ Ատանա ի մէջ, և կամէր Մլեհն անդ սպանանել զեղբայրն, և Թորոս նախայիմաց եղեալ և զգաստացեալ կալաւ զՄլեհն, և առաջի զօրացն և իշխանացն հարցաքննեաց, թէ էր վասն կամէին զայս գործել. և առաջի նոցա պախարակեաց զՄլեհն և ամաչեցոյց. և յայնժամ ետ նմա բազում կարասի իշխանութեան, ձիս և ջորիս, զէնս և գանձս, և արտաքսեալ եհան զնա ի գաւառէ ի-

---

լիս, որ Ստեփանեն եղել է Մլեհի ավագ եղբայրը, **W. H. Rudt de Collenberg**, նշվ. աշխ., էջ 49-50:

լրմէ և այլ ոչինչ արար փոխարէն չարեաց նորա»[1]:

Փաստորեն, եթե վստահենք Սմբատ սպարապետի տեղեկություններին, ապա կարող ենք նշել, որ ավելի շուտ խոսքը վերաբերում է ոչ թե ապստամբությանը, այլ դավադրությանը, ինչը կանխվել է:

Վերը նշյալ հարցի կապակցությամբ գիտական հետազոտություններն առավել քիչ են: Մեզ հետաքրքրող խնդրին անդրադարձել է հետազոտողներից Յ. Տեր-Ղազարյանը, ով կարծիք է հայտնում, թե Թորոս Բ-ն սկզբում Մլեհին բանտարկեց Կոպիտառի[2] բերդում և միայն տարիներ անց ազատեց, իսկ որոշ ժամանակ անց էլ արտաքսեց երկրից[3]: Ցավոք, հեղինակը ցույց չի տալիս այն պատմական սկզբնաղբյուրը, որից օգտվել է:

Տարօրինակ է, որ Թորոս Բ-ն չսպանեց եղբորը, ինչի իրավունքը, կարծում ենք, ուներ հայոց իշխանապետը: Սա առաջին դեպքը չէր, որ նա իրեն դրսևորում էր նման կերպ, քանզի ժամանակին էլ նման ձևով էր վարվել իր մյուս եղբոր՝ Ստեփանեի հետ, երբ մոտավորապես 1158 թվականին նա ապստամբեց Թորոսի դեմ: Վերադառնալով Թորոսի Բ-ի և Մլեհի հարաբերություններին՝ պետք է նշենք, որ այս դեպքից հետո հայոց իշխանապետը կարող էր մտավախություն ունենալ, որ ով մի անգամ արդեն փորձել էր մահափորձ կատարել իր եղբոր նկատմամբ, նույնը կկրկնի նաև հետագայում: Խոսելով Թորոս Բ-ի մեծահոգության մասին՝ պետք է նաև ավելացնենք, որ նա ոչ միայն չսպանեց եղբորը, այլ

---

1 Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 186-187, նույնը՝ Պատմութիւն, էջ 86-87:

2 Տե՛ս Կոպիտառը Կիլիկիայի հին և նշանավոր բերդերից է, և գտնվում է դեպի Գամրաց աշխարհը տանող ճանապարհի ուղղությամբ, անմերձենալի մի դիրքի վրա, ամուր և անառիկ պարիսպներով; Այդ մասին տե՛ս **Մ. Յովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 189:

3 Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 175, 215:

նաև Կիլիկիայից վռնդելուց առաջ՝ «ետ նմա շատ ոսկի և արծաթ, ձի և ջորի, և եհան զնա յերկրէն, և այլ չար չարար փոխարէն նմա»[1]:

Ղևոնդ Ալիշանը, անդրադառնալով Մլեհի և Թորոս Բ իշխանապետի բախմանը, կարծիք է հայտնել, որ Մլեհը Կիլիկյան Հայաստանից հեռացել է 1165-1166 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում[2], ինչին համակարծիք ենք: Երբ ապստամբության պարտությունից հետո Մլեհը հեռացավ Կիլիկիայի սահմաններից, նրան միացան իր համակիրները, որի պատճառով Կիլիկիայի հայկական իշխանապետությունը բավական թուլացավ:

1.5 Մլեհի ծառայության անցնելը Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի արքունիքում:

Թորոս Բ-ն իշխանապետության վերջին 4-5 տարիներին բավական զգույշ քաղաքականություն էր վարում Հալեպի աթաբեկության նկատմամբ: Կարծում ենք՝ նա հաշվի էր առնում այն հանգամանքը, որ Մլեհը կարող էր իր դեմ տրամադրել Նուր ադ-Դինին և նրա օգնությամբ խլել Կիլիկիայի իշխանությունը: Տեղեկություն կա նաև այն մասին, որ մինչ Հալեպի աթաբեկի մոտ ծառայության անցնելը Մլեհը մի կարճ ժամանակով եղել է նաև տաճարականների միաբանության անդամ, սակայն հեռացել է նրանցից մեզ համար անհայտ պատճառներով: Վերջինիս՝ տաճարականների միաբանության անդամ լինելու մասին խոսում է միայն միջ-

---

1 Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, էջ 87: Հետևաբար սխալ է հետազոտողներից Յ Տեր-Ղազարյանի այն պնդումը, թե իբր Մլեհը կամովին հեռացավ Կիլիկյան Հայաստանի սահմաններից, այդ մասին տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան,** նշվ. աշխ., էջ 170-171:

2 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 319:

նադարյան պատմիչներից Վիլհելմ Տյուրացին[1]: Ինչ վերաբերում է գիտական գրականությանը, ապա պետք է նշել, որ, ցավոք, այդ մասին շատ քիչ տեսակետներ կան:

Ուսումնասիրողներից այդ մասին կարծիք է հայտնում Ղևոնդ Ալիշանը, ով նշում է, որ Մլեհը տաճարականների միաբանության անդամ եղած ժամանակաշրջանում մեծ քաջությամբ կռվում էր անհավատների դեմ. «Տաճարականաց կարգը մտնելով եղաւ քաջ ասպետ, այլ յետոյ ուրացաւ զկարգն ալ հաւատքն ալ»[2]: Նրա տեսակետը պաշտպանում է նաև ճանաչված գիտնական Ռընե Գրուսեն[3], իսկ Մ. Ա. Շևալիեն, ով հետազոտել է Կիլիկիայում հոգևոր ասպետական միաբանությունների գործունեության պատմությունը, կարծիք է հայտնում, որ Մլեհը տաճարականների միաբանությանը անդամակցել է՝ սկսած 1160-ական թվականներից[4], թեև այլ մեկնաբանություններ չի կատարում: Հավանաբար Մլեհը, մի որոշակի ժամանակաշրջան անդամակցելով տաճարականների միաբանությանը և շփվելով նրանց հետ, եկավ այն համոզման, որ միգուցե այդ միաբանությունը չունի այն ուժը և հնարավորությունները, որպեսզի կարողանա օգնել իրեն՝ բազմելու Կիլիկիայի հայոց իշխանապետի աթոռին:

Ինչո՞ւ Մլեհը որոշեց իր բախտը կապել հենց Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինի հետ: Անշուշտ, դժվար է միանշանակ գնահատական տալ, բայց Մլեհը այն քաղաքական գործիչն էր, որ հավանաբար գիտակցում էր, թե նշյալ ժամանակաշրջանում Հալեպի աթաբեկությունը այն կարող ուժերից մեկն էր տարածաշրջանում, որ կարող էր որոշակի դերակատա-

---

1 Հղումը կատարված է Լ. Տեր-Պետրոսյանի աշխատությունից, տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, էջ 275:

2 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 319:

3 Տե՛ս Նույն տեղում:

4 Տե՛ս **Մ. Ա. Շևալիե**, նշվ. աշխ., էջ 36:

րում ունենալ և օգնել իրեն՝ բաղձալի նպատակին հասնելու համար: Պատմությունը ցույց տվեց, որ վերջինիս քաղաքական հաշվարկները ճիշտ էին:

Տաճարականների միաբանությունից հեռանալուց հետո Մլեհը ծառայության է անցնում Նուր ադ-Դինի մոտ և ստանում Կուրիս (Գուրա) քաղաքը իր շրջակայքով: Այդ մասին վկայում է Սմբատը.« Իսկ նա գնաց առ սուլտանն, և եմուտ ի ծառայութիւն նորա...և նա ետ նմա Կիւրոս և զգաւառն իւր»[1], ինչպես նաև՝ Իբն ալ-Ասիրը[2]: Այդ քաղաքը գտնվում էր Այնթափից հարավ-արևմուտք և Կիլիկիայից բաժանվում էր միայն Ամանոսյան լեռներով: Այստեղ բավական քանակությամբ հայեր էին ապրում: Քաղաքը միաժամանակ Հալեպ-Այաս առևտրական ճանապարհների վրա գտնվող կարևոր կենտրոններից մեկն էր: Այն, որ Կուրիս քաղաքը սահմանակից էր Կիլիկիայի հայոց իշխանապետությանը, ձեռնտու էր ոչ միայն Հալեպի սուլթանին, այլև Մլեհին, քանի որ նա հարմար պահին կարող էր Կուրիսից ներխուժել Կիլիկիայի հայոց իշխանապետություն: Այս կարգավիճակում Մլեհը մնաց շուրջ հինգ տարի: Հետաքրքիր է նաև նշել, որ Նուր ադ-Դինն էլ տվյալ ժամանակաշրջանում փնտրում էր որևէ մեկին, որ այս շրջանի կառավարիչ նշանակեր: Եվ քանի որ հարմար առիթ էր, նա այդ տարածքների ղեկավար է նշանակում Մլեհին[3]: Դրա հիմքում կարող էին լինել հետևյալ պատճառներ.

1. Նուր ադ-Դինը Մլեհին նշանակեց այս տարածքների ղեկավար, քանի որ դրանք մեծ մասամբ հայաբնակ էին, և հայ զինվորականը կկարողանար հաջողությամբ իրականացնել կառավարումը:

---

[1] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, էջ 87:

[2] Տե՛ս **Ibn al-Athir**, p. 210.

[3] Տե՛ս **Սմբատ Սպարապետ, Տարեգիրք**, էջ 157:

2. Մլեհին Կուրիսի և նրա շրջակայքի կառավարիչ նշանակելու պայմաններից մեկն էլ այն էր, որ հայ զինվորականին Հալեպի տիրակալը կօգտագործեր խաչակիրների դեմ պայքարում:
3. Վ. Տեր-Ղևոնդյանն էլ ավելացնում է, որ դեռևս 1158-1159 թվականներին՝ Մանուել Կոմնենոսի արշավանքների ժամանակ, Նուր ադ-Դինը քանդել տվեց սահմանամերձ մի քանի ամրոցներ ու քաղաքներ, այդ թվում Կուրիսի պարիսպները՝ դրանք պաշտպանելու դժվարության պատճառով[1]: Շարունակելով իր խոսքը՝ հետազոտողը կարծիք է արտահայտում, որ հավանական է՝ մինչև 1165-1166 թվականները Կուրիսի պարիսպները դեռևս չէին վերականգնվել, իսկ Սիրիայի տիրակալը վստահ էր, որ Մլեհի պես եռանդուն ու նախաձեռնող իշխանը կարող է ոչ միայն կարճ ժամանակահատվածում վերականգնել դրանք, այլև հաջողությամբ պաշտպանել այն հնարավոր հարձակումներից[2]:

Ընդհանրապես Մլեհի՝ Կուրիսում գտնվելու ժամանակաշրջանի գործունեության մասին հայ պատմիչները գրեթե ոչինչ չեն հայտնում: Ի տարբերություն հայ պատմիչների՝ նրա մասին խոսում են օտարազգի հեղինակները, որոնց տեղեկություններում, սակայն, կան որոշակի տարբերություններ և հակասություններ:

Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության մեջ նշվում է. «Գնացեալ էր առ Նորադինն և ետ նմա զԿուրիս. և արարեալ յոլով չարիս քրիստոնէից ձեռնտութեամբ անօրինացն, գողացաւ և զՎանավեր ի հայոց և գերէր յանխնայ զհաւատացեալս ի՝ Քրիստոս, զորս ոչ կա-

---

1 Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 60-61:

2 Տե՛ս Նույն տեղում:

միջք ընդ գրով արկանել զաղետսն»[1]: Ինչպես նկատում ենք, Միքայել Ասորու եզակի տեղեկություններից պարզ է դառնում, որ Մլեհը, դառնալով Նուր ադ-Դինի վասալը Կուրիսում և նրա շրջակայքում, քրիստոնյաների նկատմամբ մեծ չարագործություններ է գործում և մեծ վնաս հասցնում: Եվ հավանաբար դրանք այնպիսի մեծ դժանություններ են եղել, որ պատմիչը անգամ չի կամենում գրով ներկայացնել այդ աղետը: Ծանոթ լինելով Մլեհի բնավորության գծերին և նրա գործունեությանը՝ կարծում ենք, որ Միքայել Ասորու տեղեկությունները կարող են մոտ լինել իրականությանը:

Նուր ադ-Դինի և Մլեհի համագործակցության մասին ուշագրավ տողեր ենք գտնում պատմիչ Իբն ալ-Ասիրի աշխատության մեջ, որտեղ հեղինակը հետևյալն է ասում.«Նուր ադ-Դինը այնքան էր սիրաշահում Մլեհին, որ նա որոշեց ծառայության մտնել նրա մոտ և մասնակցել նրա արշավանքներին, օգնել պատերազմում ընդդեմ ֆրանկների: Թերևս նա քրիստոնյա միակ իշխանավորն էր, որ երբևիցե արժանացավ նման պատվի»[2]: Բացի այդ, շարունակելով իր միտքը, հեղինակը նշում է, որ հայ իշխանին սիրաշահելը և նրան ընդդեմ ֆրանկների օգտագործելը վկայում էր Նուր ադ-Դինի հնարամտության և հեռատեսության մասին: Երբ Նուր ադ-Դինին հարցրին, թե ինչ իմաստ ունի նրան ծառայության ընդունելը և Ասորիքում տիրույթներ շնորհելը, վերջինս պատասխանեց, որ նրան օգտագործում է իր կրոնի մարդկանց դեմ պայքարելու համար, և այդ միջոցով իր զինվորների մի մասն ազատում է դրացի երկրների վրա հարձակվելու պատասխանատվությունից[3]:

Մլեհին մահմեդական պատմագիրներից անդրադարձել

---

[1] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 454:

[2] Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 454:

[3] Տե՛ս Նույն տեղում:

է նաև Իբն ալ-Աթիրը, ով խոսելով հայազգի գործչի մասին, նշում է, որ նա շատ աշխատասեր և ժրաջան անձնավորություն էր, պարտաճանաչ կերպով ծառայության ժամանակ իրականացնում էր իր առջև դրված պարտականությունները: Նա ուներ շատ առողջ դատողություն[1]:

Հայոց իշխանապետի և Նուր ադ-Դինի համագործակցության մասին գրում է նաև 14-րդ դարի արաբ պատմիչ Ալ-Դահաբին, համաձայն որի՝ Նուր ադ-Դինը, հիացած լինելով այս իշխանի խորամանկությամբ և աննկուն բնավորությամբ, նրա մեջ տեսնում էր դաշնակցի ֆրանկների դեմ պայքարում[2]:

Այսպիսով՝ պետք է արձանագրենք, որ թեև միջնադարի մի շարք քրիստոնյա պատմիչներ շատ բացասական են խոսում Մլեհի գործունեության մասին, բայց հակառակ նրանց՝ հայազգի գործչի մասին բավականին դրվատանքով են արտահայտվում մահմեդական մատենագիրները:

Փաստորեն՝ Մլեհը Նուր ադ-Դինի մոտ ծառայության ժամանակաշրջանում կարողացել էր արժանանալ Մոսուլի աթաբեկի վստահությանը, ինչի համար էլ արժանացել էր նման գնահատականի: Կարելի է համաձայնել արաբ մատենագիրների վկայություններին, քանզի պատմությունը ցույց տվեց, որ Մլեհը խիզախ է և բնականաբար ցանկացած երկրի միապետ, անկախ կրոնական պատկանելությունից, կցանկանար իր ենթակայության տակ ունենալ նման զինվորականի:

Շատ կարևոր է նաև նշել, որ Մլեհը երբեք Նուր ադ-Դինի կույր գործիքը չեղավ, այլ ինքն օգտագործեց Հալեպի սուլթանին՝ սեփական նպատակներին հասնելու համար:

---

[1] Տե՛ս **Ibn al-Athir**, էջ 210:

[2] Տե՛ս Հղումը կատարված է Վ. Տեր-Ղևոնդյանի Կիլիկյան Հայաստանը և Սիրիան XII դարի 40-70-ական թվականներին հոդվածից, էջ 127:

Հայտնի է նաև, որ Ռուբինյան եղբայրների հարաբերությունները թշնամական մնացին մինչև Թորոս Բ-ի մահը: Այդ է պատճառը, որ հայոց իշխանապետը մահվանից առաջ կարգադրեց, որ իր անչափահաս որդու խնամակալը դառնա ոչ թե Մլեհը, այլ իր ազգական Թումաս իշխանը: Ինչ վերաբերում է Մլեհին, ապա պետք է նշել, որ Թորոս Բ-ն նրան ամբողջությամբ զրկեց ժառանգությունից[1]:

[1] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 454, **Bar Habraeus**, էջ 292:

Գլուխ երկրորդ

ՄԼԵՀԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Կիլիկիայի Թորոս Բ իշխանապետի մահը և իշխանության գրավումը Մլեհի կողմից:

1168 թվականին շրջադարձային իրադարձություններ տեղի ունեցան Կիլիկիայի հայոց իշխանապետությունում: Կիլիկիայի իշխանապետ Թորոս Բ-ն որոշեց իշխանությունը հանձնել իր մանկահասակ որդուն՝ Ռուբենին, իսկ ինքը թողեց քաղաքական ասպարեզը և մտավ վանք, որտեղ էլ կարճ ժամանակ անց կնքեց մահկանացուն[1]: Մինչ որդու չափահաս դառնալը նրա խնամակալ նշանակվեց Թումասը, որը Թորոսի ազգականներից էր: Նա պետք է ժամանակավորապես դառնար Հայկական Կիլիկիայի տերը:

Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ հանդիպում ենք խնամակալության ինստիտուտի երևույթին: Մլեհը տեղեկանում է Թորոս Բ-ի մահվան և Կիլիկիայում տեղի ունեցող անցուդարձերի մասին: Գիտակցելով, որ եկել է իր նպատակին հասնելու ամենահարմար պահը, որոշում է անցնել վճռական գործողությունների: Միգուցե նրա փաստարկն այն էր, որ ինքն ազգակցական կապե-

---

[1] Տե՛ս **Բար Հեբրաուսի** տեղեկությունների համաձայն Թորոս Բ-ի մահը տեղի է ունեցել 1168 թվականի դեկտեմբերին, տե՛ս, **Bar Habraeus**, էջ 292. Թորոս Բ իշխանապետին թաղում են Դրազարկի վանքում, **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 267, **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 323:

րով ավելի մեծ է Ռուբենին, քան Թումասը, որին նշանակել էր իր եղբայրը: Հետաքրքիր է նաև նշել, որ պատմիչներից Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկն իր աշխատության մեջ չի հիշատակում Թորոս Բ-ի որդուն՝ Ռուբենին, այլ մատնանշում է, որ Կիլիկիայում Թորոս Բ-ից հետո իշխանապետ է դառնում նրա եղբայր Մլեհը. «Թորոս ի գերութենէ եւ գայ տիրէ բոլոր Կիլիկիոյ՝ եւ մասինն Սօրիոյ՝ կացեալ պարոն ամս ԺԴ մեռանի...Եւ նստի եղբայր նորա չարասիրտն Մլեհ...»[1]: Այն, որ իշխանությունը Թորոս Բ-ից անցել է նրա եղբորը՝ Մլեհին, վկայում են միջնադարի այլ հեղինակներ ևս, մասնավորապես նշյալ խնդրին անդրադարձել են նաև 13-րդ դարի հեղինակներ Վահրամ Րաբունին[2] և Հեթում Նղրեցին: Վերջինս գրում է. «Պարոն Հայոց Թորոս կրօնաւորեալ վաղջանեցաւ, եւ էառ զիշխանութիւն Մլհի եղբայր նորա»[3]: Երկու պատմիչների տեղեկությունները կասկած են հարուցում և լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Խնդիրն այն է, որ միջնադարյան պատմիչների գերակշիռ մեծամասնությունը վերը նշված դեպքի կապակցությամբ այլ տեղեկություն է մեզ հաղորդում:

Այսպես՝ 13-18-րդ դարերի ժամանակագիրներից մեկը՝ Ներսես Պալիենցը, խոսելով այդ դեպքերի մասին, տեղեկացնում է, որ սկզբում Կիլիկյան Հայաստանում իշխել է Թորոս Բ-ն, հետո՝ մեկ տարի՝ Ռուբենը, և միայն Ռուբենից հետո իշխանությունը անցել է Մլեհին.

Պարոն Թորոս որդի Լևոնի, ամս ԺԳ (13)

Պարոն Ռոբէն, որդի սորա, ամս Ա (1):

---

[1] **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 136: Ըստ Ալիշանի Թորոս Բ իշխանապետը մահացել է 1169 թվականի մայիսի 11-ին: Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 551:

[2] Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 210:

[3] **Հեթում Նղրեցի**, Խաչակիրները և հայերը, հատոր Բ, էջ 538:

Պարոն Մլեհ, եղբայր Թորոսի, ամս Է (7)[1] :

Այն, որ Կիլիկիայում իշխանությունը Թորոս Բ-ից հետո չի անցել Մլեհին, հիշատակում են նաև Սմբատ Սպարապետը, որը գրում է. «Ի թուին ՈԺԷ (617=1168) վախճանեցաւ մեծ Թորոս, որդի Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբինի, որ արութեամբ կալաւ զլեռնակողմն Տաւրոսի, և բազում գործս քաջութեան գործեաց ի բազում տեղիս, և բազում պատերազմաց յաղթեաց իւրով իմաստութեամբ, որում ողորմեսցի Տէր: Իսկ ի ժամ վախճանին դներ դաստիարակ տղային իւրոյ Ռուբինի՝ զիշխան Թումաս, որ կալաւ զաշխարհն Թորոսի զամ մի»[2], ինչպես նաև Միքայել Ասորու Ժամանակագրության մեջ. «մեռաւ մեծ իշխանաց իշխանն պարոն Թորոս, կեցեալ երեւելի փառօք և մեծաւ յաղթութեամբ ...Եւ ետ զիշխանութիւն որդւոյ իւրոյ յոյժ տղայոյ, և յանձնեաց զնա յիշխանն»[3]: Թորոս Բ-ից հետո Կիլիկյան Հայաստանում իշխանությունը Ռուբենին փոխանցելու հնարավոր իրողությանը համակարծիք են նաև նոր և նորագույն շրջանի գրեթե բոլոր հետազոտողները: Մենք ևս հակված ենք ընդունելու, որ իշխանությունը նախ անցել է Ռուբենին, իսկ հետո՝ նոր Մլեհին:

---

[1] Տե՛ս Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Բ, էջ 205: Ռուս հետազոտող Ստեպանենկոն իր հոդվածներից մեկում կարծիք է հայտնում, որ Թորոս Բ իշխանապետը իշխանական գահը թողել է Ռուբեն Գ-ին (**В. Степаненко**, Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., с. 131), որ կարծում ենք, չի համապատասխանում իրականությանը, քանզի Թորոս Բ-ի որդին պատմության մեջ հայտնի է Ռուբեն Բ անունով: Թերևս այստեղ սխալմունք է նաև Թորոսի Բ-ի տողում գրված 13 թվականը, որը հավանաբար կապված է նրա կառավարման տարիների հետ, քանզի իրականում պետք է լիներ 23 թվականը, քանի որ հայոց իշխանապետը հենց այդքան է կառավարել Կիլիկյան Հայաստանում:

[2] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 189:

[3] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 454:

Փաստորեն Մլեհը, տեղեկանալով Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցող դեպքերի, ինչպես նաև Թումասին Ռուբենի խնամակալ նշանակելու մասին, շատ զայրանում է և պատմիչ Բար Հեբրաուսի ժամանակագրության համաձայն՝ գնում է Հալեպի սուլթան Նուր ադ-Դինի մոտ, օգնական զորք վերցնում թուրքերից և մտնում Կիլիկիայի իշխանապետություն[1]:

Մեզ համար նախևառաջ կարևոր է քննել այն հարցը, թե որ թվականին է վերջինս ներխուժել Կիլիկիայի հայոց իշխանապետություն, ինչ պայմաններում է կարողացել համաձայնության գալ երկրի ղեկավարության հետ և սկսել իշխել:

Այս խնդրին անդրադարձել են տարբեր հեղինակներ: Մասնավորապես Մլեհի իշխանության գալու հանգամանքների մասին խոսում է պատմիչ Վահրամ Րաբունին[2], սակայն որևէ հստակ թվական չի նշում: Հետազոտվող խնդրի վերաբերյալ մեզ որոշակի տեղեկություններ է հաղորդում նաև Սմբատ Սպարապետը. նա Մլեհի վերադարձը Կիլիկիա և իշխանության զավթումը թվագրում է 1169 թվականով. «Ի թուին ՈԺԸ (618=1169) առնու Մլեհն եղբայրն Թորոսի օգնութիւն ի Նուրըտնէն, որ էր տէր Հալպայ, և բազում թուրքով եկն եմուտ յերկիրն Կիլիկեցւոց և տիրապետեաց իշխանութեան եղբօրն իւրոյ…»[3]: Թեև Սմբատ Սպարապետը արձանագրում է Մլեհի մուտքը Կիլիկիա թուրքական զորքի աջակցությամբ և իշխանության գրավումը, սակայն վերջինս չի նշում մի կարևոր հանգամանք: Արդյոք Մլեհը, մտնելով Կիլիկիայի հայոց իշխանապետության սահմանները, անմիջապես տիրացավ իշխանությանը, թե հաջողության հասավ որոշակի պայքարից հետո: Հետազոտվող խնդրին անդրադարձել է նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մե-

---

1 Տե՛ս **Bar Habraeus**, p. 292.

2 Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 110:

3 Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 189:

կը, ով շատ մանրամասներ չի հաղորդում Մլեհի գործունեության մասին, այլ պարզապես արձանագրում է նրա կողմից իշխանության գրավումը. «Եւ նստաւ յաթոռ նորինէ Մլհէ եղբայրն իւր ամս է»[1], սակայն մի այլ անգամ էլ նշում է, որ Մլեհը, լսելով եղբոր մահը, Նուր ադ-Դինից ստացավ բազմաքանակ զորք, եկավ և վերցրեց իշխանությունը[2]:

Ի տարբերություն Սմբատի և Սամվել Անեցու՝ Վիլհելմ Տյուրացին, որ բավականին տեղյակ է տվյալ ժամանակաշրջանի Կիլիկյան Հայաստանի և խաչակրաց պետությունների քաղաքական անցուդարձերից, այլ տեղեկություններ է մեզ հաղորդում: Մասնավորապես հեղինակը նշում է, որ Մլեհի մուտքը Կիլիկիայի պետություն տեղի է ունեցել 1170 թվականին[3]:

Ինչպես նկատում ենք, մեզ հուզող հարցին անդրադարձած պատմիչների մոտ կան հակասական տեղեկություններ:

Վերը նշված խնդրի մասին մասնագիտական գրականության մեջ էլ կան տարբեր տեսակետներ, որոնք կարելի է մի քանի մասի խմբավորել:

Հետազոտողներից Ռ. Գրուսեն և Ս. Տեր-Ներսիսյանը խոսում են Մլեհի իշխանության գալու պատմության մասին, սակայն չեն նշում նրա կառավարման սկիզբը[4]: Բակուրանը, ով որոշակի անդրադարձ է կատարել Կիլիկիայում տեղի ունեցող իրադարձություններին, Մլեհի իշխանության գրավման թվականի սկիզբը նշում է 1168[5], իսկ Ս. Պապիկյանը՝ 1169 թվականին[6]: Այս հարցում թերևս մասնագետների ճնշող մեծամասնությունը հավանական է համարում, որ Մլեհը

---

1 Տե՛ս **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 135:

2 Տե՛ս **Նույն տեղում**, էջ 218:

3 Տե՛ս **Guillaume de Tyr**, p. 386-387.

4 Տե՛ս **Ռ. Գրուսե**, Լևանտի կայսրությունը, էջ 336, **Ս. Տեր-Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 392-394:

5 Տե՛ս **Բակուրան (Վ. Քիւրճեան)**, նշվ. աշխ., էջ 14:

6 Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 271-272:

գրավել է իշխանությունը 1170 թվականին[1], որը, կարծում ենք, առավել ճշգրիտ թվական է:

Պատմիչ Սմբատն էլ հավաստում է, որ, իրոք, Մլեհը ռազմական ուժի օգնությամբ գրավեց իշխանությունը Կիլիկիայում և մեծ քանակի հարստություն տրամադրեց իրեն աջակցած թուրքական զորքերին. «Բազում թուրքով եկն յերկիրն Կիլիկեցւոց և տիրապետեաց իշխանութեանն եղբօրն իւրոյ, և բազոմ առ և աւար առին թուրքերն….»[2]: Բնականաբար հարց է ծագում, թե ինչու է Մլեհը Կիլիկիայի իշխանությունը զավթելիս օգտվել Հալեպի աթաբեկի տրամադրած ռազմական ուժից: Չի բացառվում, որ իշխանությունը գրավելը Կիլիկյան Հայաստանում հանգիստ չի ընթացել: Եվ եթե Մլեհը Կիլիկիա է ներխուժել զորքով, ապա պետք է ենթադրել, որ նա Կիլիկիայում բախվել է իշխող վերնախավի դիմադրությանը, որը չէր ցանկանում նրան տեսնել հայոց իշխանապետի աթոռին: Մլեհ Ռուբինյանի վերադարձը Կիլիկիա շատերի սրտով չի եղել, և դա մեկնաբանության կարիք չունի, քանզի այդքան էլ երկար ժամանակ չէր անցել այն ժամանակներից, երբ վերջինս հեռացել էր Կիլիկիայի հայոց իշխանապետությունից: Շատ բնական է, որ Թորոս Բ իշխանապետի կողմնակից իշխանները այդքան էլ հեշտությամբ

---

[1] Տե՛ս **Ա. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 28, Մ. Զուլալյան, Կիլիկիայի հայկական իշխանության առաջացումը և նրա պայքարը անկախության համար, ակադեմիական հրատարակություն, հ. Գ, էջ 683, **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, էջ 62, **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 395-396, **Ա. Բոզոյան**, Հայոց պատմություն, ակադեմիական հրատարակություն, հատոր Բ, միջին դարեր, Եր., 2014, էջ 340, **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 129, **Գ. Միքայելյան,** նշվ. աշխ., էջ 129, **Մ. Շևալիե**, նշվ. աշխ., էջ 128, **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 325-326, **В. Степаненко**, Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., с. 127.

[2] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, էջ 88:

չէին տրամադրելու Կիլիկիայի իշխանությունը՝ գիտակցելով, թե ինչ կարող է լինել ապագայում իրենց հետ:

Այդ է վկայում 13-18-րդ դարերի ժամանակագիրներից մեկը, որի խոսքով՝ Մլեհի առաջին փորձը՝ գրավելու Կիլիկիայի իշխանությունը, անհաջող է անցել. «Եւ յորժամ լուաւ զմահ եղբարցն եկն յաշխարհին Կիլիկիոյ, աւգնականութեամբ սուլթանին Հալպա, կամեցաւ տիրել աշխարհին և ոչ կարաց, այլ դարձաւ անդրէն ի Հալպ...Եւ միւս անգամ դարձեալ խնդրեց ի սուլտանէն զաւրս բազումս: Եւ շարժեցաւ գալ ի վերայ քրիստոնէիցն աւերել զաշխարհին և աւգնականութեամբ անաւրինացն տիրել երկրին»[1]: Այն, որ Մլեհի՝ իշխանության գալու առաջին փորձը անհաջող է անցել, և նա ստիպված է եղել երկրորդ անգամ ավելի մեծաքանակ ուժերով ներխուժելու Կիլիկիայի հայոց իշխանապետության սահմանները, խոսվում է նաև Վահրամ Րաբունու աշխատության մեջ.

Յորժամ զեղբարց՝ մահըն լուեալ,
Ի սուլտանէն՝ հեծեալ առեալ.
Եւ ի հայոց՝ երկիր մտեալ,
Որոց բազում՝ չար հասուցեալ:
Եւ զի տիրել ՝ ոչ կարացեալ,
Ապա ի Հալապ՝ յետս դարձեալ,
Եւ այլ բազում՝ զօր ժողովեալ,
Կրկին անգամ՝ եղև եկեալ:
Առ որ Հայոց՝ իշխանքն յղեալ,
Եւ զնա սիրով՝ պարոն կոչեալ[2]:

Փաստորեն Վահրամ Րաբունու և «Պատմութիւն ազգին Ռովբինեանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո» աշխատության տեղեկություններից պարզ է դառնում, որ իշխանությունը

---

[1] Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 102:

[2] Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 210-211:

գրավելու Մլեհի առաջին փորձն ավարտվում է անհաջող:

Այս առնչությամբ իրենց տեսակետներն են հայտնում նաև հետազոտողները: Ալիշանը, անդրադառնալով այս դեպքին, կարծիք է հայտնում, որ Մլեհը առաջին անգամ քիչ մարդկանցով եկավ Կիլիկիա՝ իշխանությունը վերցնելու. «… Որ եղբօրը մահը լսելուն՝ մէկէն քիչ մարդով փութացաւ մտաւ ի Կիլիկիա, պարոնութիւնը առնուլ…»[1]: Հավանաբար նա կարծում էր, որ Կիլիկիայի իշխանները հաշվի կառնեն այն հանգամանքը, որ ինքը Ռուբենի ամենամերձավոր ազգականն է, և վերջինիս խնամակալությունը կհանձնեն իրեն, սակայն, ինչպես նշում է նույն հետազոտողը, «Հայք՝ որ արդէն զզուած էին իրմէ՝ դէմ կեցան օգնութեամբ Անտիոքայ իշխանին և Երուսաղէմի թագաւորին, ու վռընտեցին»[2]:

Փաստորեն, Ալիշանի դիտարկմամբ՝ Մլեհի դեմ պայքարում Կիլիկիայի իշխաններին օգնել են նաև արտաքին ուժերը, մասնավորապես՝ Անտիոքի մեծ իշխան Բոհեմոնդ Գ-ն (1163-1201) ու Երուսաղեմի թագավոր Ամորի Ա-ն (1163-1174): Կարծում ենք, որ այդ տեսակետը կարող է մոտ լինել իրականությանը, և շատ հնարավոր է, որ այս հարցում Կիլիկիայի իշխաններին իրոք աջակցել են խաչակրաց պետությունների ղեկավարները, քանզի նրանց շահերից էլ չէր բխում Կիլիկյան Հայաստանի իշխանապետության աթոռին տեսնել Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի վստահելի մարդկանցից մեկին: Նման պարագայում թե՛ Անտիոքի իշխանապետությունը և թե՛ Երուսաղեմի թագավորությունը կկորցնեին իրենց որոշակի ազդեցությունը Կիլիկիայի հայոց իշխանապետության նկատմամբ:

Առաջին անգամ Մլեհի՝ շատ քիչ աջակիցներով Կիլիկիա գալը ենթադրում է, որ նա կարծել է՝ կարող է հեշտությամբ

---

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան, Շնորհալի** և պարագայ, էջ 324-325:

[2] Տե՛ս Նույն տեղում:

դառնալ Ռուբենի խնամակալը կամ էլ բացահայտ գրավել իշխանությունը:

Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչու Թորոսը խնամակալությունը տվեց Թումասին, այլ ոչ թե իր մյուս եղբոր՝ Ստեփանեի որդիներից մեկին՝ Ռուբենին կամ Լևոնին. եթե նա վստահություն չուներ Մլեհի նկատմամբ, ապա Ստեփանեի որդիներից մեկը կարող էր դառնալ մանկահասակ Ռուբենի խնամակալ: Չէ՞ որ նրանք էլ էին Ռուբինյաններ: Հավանաբար Թորոսը, որ բավական կյանքի ճանապարհ էր անցել, մտածում էր, որ Ստեփանեի որդիներին տալով իր որդու խնամակալությունը՝ վտանգի տակ կդներ որդու ապագան, քանզի նրանք՝ որպես Ռուբինյան տոհմի ներկայացուցիչներ, կարող էին ապագայում ասպարեզից հեռացնել Ռուբենին: Նույն խնդիրը առաջացավ նաև Մլեհի պարագայում: Իսկ Թումասի պարագայում նման վտանգը քիչ հավանական էր, քանզի նա Ռուբինյան դինաստիայից չէր և չէր կարող օրինական կարգով հավակնել Կիլիկիայի իշխանությանը:

Մլեհի՝ Կիլիկիա ներխուժման մասին շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում Բար Հեբրաուսը, համաձայն որի՝ հայոց իշխանապետը, թուրքական զորքի օգնությամբ ներխուժելով Կիլիկիա, գերեց 16 հազար մարդ (աղջիկներ, կանայք, տղամարդիկ) և տանելով Հալեպ՝ վաճառեց ու ստացած եկամուտը նվիրեց իրեն միացած թուրքերին[1]: Հըստակ կարող ենք նշել, որ մինչ այս Կիլիկիայի հայոց պետությունը չէր տեսել նման կարգի դաժան անձնավորություն հայ իշխանների մեջ, և այս արարքը հավանաբար վերջինիս կատարած ամենամեծ դաժանությունն է: Միգուցե Մլեհի այս քայլից ահաբեկված Կիլիկիայի վերնախավը որոշում կայացրեց երկիրը նոր փորձությունների չենթարկել և համաձայնության գալ վերջինիս հետ:

---

[1] Տե՛ս **Bar Habraeus**, p. 292:

Ինչպես նկատում ենք, Բար Հեբրաուսը Մլեհին մեղադրում է շատ ծանր հանցագործության մեջ: Սակայն պետք է նշել, որ միջնադարյան հայ և օտարազգի պատմիչներից և ոչ մեկն էլ չի հաստատում Բար Հեբրաուսի բերած վկայությունը: Թեև հանուն արդարության պետք է նշել, որ հաշվի առնելով Մլեհի բնավորության բարդ գծերը, չի բացառվում, որ վերջինս կատարած լիներ նման արարք, և պարզապես պատմիչը հավանաբար ուռճացրել է Հալեպի ստրկավաճառական շուկա քշված մարդկանց թվաքանակը:

Շատ կարևոր է նաև նշել, որ Մլեհի կողմից Կիլիկիայի հայոց իշխանապետության գրավումը ոչ մի կերպ չէր բխում ոչ միայն Բյուզանդական կայսրության, այլև Արևելքում ստեղծված խաչակրաց իշխանությունների շահերից, քանի որ նման պայմաններում այս պետությունները կզրկվեին Կիլիկիայում ազդեցության լծակներից: Սա պատմական մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ վերջիններս չէին կարող լուրջ մասնակցություն ցուցաբերել Կիլիկիայում ընթացող գահակալական պայքարին:

Առաջին անհաջողությունը չընկճեց Մլեհին, ով չէր կարող համակերպվել ստեղծված վիճակի հետ և պատրաստվում է մեծ ուժով գրավելու իշխանությունը: Շուտով օգնական զորք ստանալով Հալեպի տիրակալից՝ Մլեհը նորից մտավ Կիլիկիա և գրավեց իշխանությունը: Այս կարևոր իրադարձության մասին եզակի նշանակություն ունեցող տեղեկություն է հաղորդում Միքայել Ասորի պատմիչը. «Յետ այսորիկ իշխանքն Հայոց և Թումաս մանկակալ տղայոյն, առին ի նմանէ (ի Մլեհէ) երդումն՝ զի մի զրկեսցէ զեղբօրորդին իւր, և նոքա ացեն նմա զկէս երկրին և դարցի անդրէն. և նա երդուաւ և դարձաւ յերկիրն, և ոչ եկաց յերդումն, այլ մեծամեծ չարեօք զօրացաւ և տիրեաց ամենայն երկրին»[1]:

---

[1] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 454-455:

Թեև մյուս պատմիչների մոտ չկա նման տեղեկություն, սակայն մենք հակված ենք վստահելու Միքայել Ասորու հաղորդմանը, քանի որ նա չեզոք և օբյեկտիվ պատմիչ է, իսկ մյուս կողմից նրա տեղեկության ճշմարտացիությունը կարող ենք հիմնավորել այն հանգամանքով, որ Կիլիկիայի վերնախավի մեծ մասին ձեռնտու չէր ամբողջ իշխանությունը երկրում տրամադրել Մլեհին:

Արձանագրենք, որ Մլեհը, 1169 թվականին մտնելով Կիլիկիա, հաջողություն չի ունեցել և նահանջել է: Որոշ ժամանակ անց օգնական զորքեր ստանալով Հալեպի սուլթանից՝ կրկին ներխուժել է Կիլիկիայի հայոց իշխանապետության սահմանները, ինչին հաջորդել են հաշտության բանակցություններ, և չի բացառվում, որ դրանք տեղի են ունեցել 1170 թվականի սկզբին, և հենց այդ թվականն էլ կարելի է համարել Կիլիկյան Հայաստանում Մլեհ Ռուբինյանի կառավարման սկիզբը: Դրա օգտին էլ խոսում է նաև ժամանակակից հետազոտողների ճնշող մեծամասնությունը:

Կարծում ենք, որ պետությունը ավերածություններից զերծ պահելու համար Կիլիկիայի հայ վերնախավը համաձայնության եկավ Մլեհի հետ՝ ճանաչելով նրան իշխանապետ այն պայմանով, որ նա կիսելու էր իշխանությունը Ռուբեն Բ-ի հետ: Մլեհը Կիլիկիայի իշխանների առաջ երդվեց, որ մյուս կեսը մնալու է մանկանը, բայց հետո խախտեց երդումը և տիրեց ողջ երկրին, նրա բերդերին ու քաղաքներին:

Ինչպես նկատում ենք, Միքայել Ասորին շատ կարևոր տեղեկություն է հաղորդում ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ: Եվ Սմբատ Սպարապետը, որ տեղյակ էր Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցող մի շարք կարևոր անցուդարձերի, զարմանալիորեն ոչինչ չի խոսում Մլեհի և Կիլիկիայի իշխանների միջև կնքված պայմանավորվածության մասին:

Թեև մյուս պատմիչների աշխատություններում չկա նման վկայություն, սակայն կարծում ենք, որ դա կարող է

մոտ լինել իրականությանը, քանզի իշխանները չէին ցանկանա ամբողջ իշխանությունը տալ Մլեհին, քանի որ լավ էին գիտակցում, որ դառնալով Ռուբենի խնամակալը՝ Մլեհը չի բավարարվի դրանով և կարճ ժամանակ անց կխլի ողջ իշխանությունը: Բացի այդ՝ գուցե Կիլիկիայի վերնախավը դիմեց նման քայլի՝ հաշվի առնելով տարբեր պատճառներ, որոնցից մի քանիսին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ.

1. Հայկական իշխանապետության վերնախավը չէր ցանկանում, որ Մլեհը Հալեպի սուլթանի օգնական գնդերով մտնի Կիլիկյան Հայաստան և մեծ ավերածություններ կատարի:
2. Հնարավոր է, որ Կիլիկիայի իշխանների մի մասը ցանկացել է Կիլիկիայի իշխանապետության աթոռին տեսնել Մլեհին, որպեսզի հայկական պետությունը ուժեղանա, մանավանդ այն պայմաններում, երբ իրավիճակը տարածաշրջանում հանգիստ չէր, և Կիլիկիան կանգնած էր արտաքին մի շարք մարտահրավերների առաջ: Իսկ նրա՝ իշխանության գալով հայոց պետությունը նախևառաջ կունենար ուժեղ և խելացի ղեկավար, իսկ մյուս կողմից էլ հզոր դաշնակից՝ ի դեմս Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի:

   Շատ հետաքրքիր է նաև Ա. Բոզոյանի տեսակետը, համաձայն որի՝ 1170 թվականին բյուզանդական իշխանության վերջին մնացորդները մաքրելու նպատակով Կիլիկիայում տեղի ունեցավ հեղաշրջում[1]:

Ամեն դեպքում փաստ է, որ սկսած 1170 թվականից՝ Մլեհ Ռուբինյանը սկսեց կառավարել Կիլիկյան Հայաստանում և վարեց ներքին և արտաքին բավական ակտիվ քա-

---

[1] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Կիլիկիայի հայկական պետությունը իշխանապետությունից թագավորություն, էջ 88:

ղաքականություն: Նշենք, որ միջնադարյան պատմիչները տարբեր և իրարամերժ գնահատականներ են տալիս հայոց իշխանապետին և նրա վարած քաղաքականությանը:

Հայ պատմիչներից Վահրամ Րաբունին Մլեհին անվանում է չարասիրտ, ով իշխանության գալուց հետո աղտեղի գործեր կատարեց.

Այլ չարասիրտ՝ Մլեհն եղեալ,

Եւ աղտեղի՝ գործովք լցեալ[1]:

Ինչպես նկատում ենք, թեև պատմիչը նման բնորոշում է տալիս Մլեհ Ռուբինյանին, սակայն հստակ չի նշում, թե կոնկրետ ինչ արարքներ է կատարել վերջինս: Հայոց իշխանապետի կատարած բազում չարագործությունների և ժողովրդին նեղելու մասին է խոսում Սամվել Անեցին. «և բազում չար հասուցեալ աշխարհիս Կիլիկեցւոց, յորմէ նեղեալ բնակիչք և իշխանք աշխարհիս կամօք ձեռնտու եղեն նմա տիրեալ ի վերայ ինքեանց...»[2]: Իսկ ահա Սմբատը Մլեհին խիստ բացասական բնութագիր է տալիս. «Որ և զկանս պարկեշտ և համեստս խայտառակէր և աղտեղի պոռնկութեամբ և անամօթ լրբութեամբ ապականէր... Եվ էր սա այր գազանամիտ, չարաբարոււ և անողորմ, և ատէին զնա ամենեքեան և ցանկային զերծանել ի նմանէ, այլ ոչ գտանէին առժամային տեղի...»[3]: Վերջապես Ալիշանն էլ ավելացնում է, որ վերջինս բազմաթիվ չարագործություններ իրականացրեց երկրում, նեղեց բնակիչներին ու իշխաններին. «Եւ բազում չար հասուցեալ աշխարհիս Կիլիկեցւոյ, յորմէ նեղեալք բնակիչք և իշխանք աշխարհիս...»[4]:

Այն, որ Մլեհը դաժանաբար է կառավարել, կարծում ենք՝

---

[1] Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 211:

[2] Տե՛ս **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 218:

[3] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 190:

[4] Տե՛ս **Ղ. Ալիշան,** Հայապատում, էջ 347:

փաստ է: Նա ծավալել է նաև պետության հզորացմանն միտված գործունեություն, որին չգիտես ինչու պատմիչները կա՛մ չեն անդրադառնում, կա՛մ էլ շատ քիչ են անդրադառնում: Եվ շատ ճիշտ է նկատել Լ. Տեր-Պետրոսյանը, որ հայկական աղբյուրներից միայն երկուսն են Մլեհի մասին դրական արտահայտվում, որոնցից մեկը 1214 թվականի գրված մի հիշատակարան է, որտեղ նրան անվանում են «իշխանաց իշխան մեծն Մլեհ»[1]: Բնականաբար այն ունի իր բացատրությունը, քանզի ձեռագիրը ընդօրինակվել է Մեծքարի վանքում, որը հենց ինքն էր կառուցել, և որն այդ ժամանակ պատկանել է իր որդուն՝ Գևորգ իշխանին, ինչպես նաև Յիշատակարանք ձեռագրացում[2]:

Քրիստոնյա օտարազգի պատմիչներից Մլեհին անդրադարձել է Վիլհելմ Տյուրացին. նա հայոց իշխանապետին բնորոշում է որպես դաժան մարդ, և ավելացնում, որ նրա մեջ ստից ու նենգությունից բացի՝ այլ բան չի կարելի գտնել[3]: Ամենայն հավանականությամբ Վիլհելմ Տյուրացու բնորոշումները Մլեհի անձի նկատմամբ պայմանավորված են այն հանգամանքով, որ նա կաթոլիկ քահանա էր և տեղյակ էր, թե ինչպիսի ատելությամբ էր հայոց իշխանապետը լցված նրա դավանակիցների և ընդհանրապես խաչակրաց իշխանությունների, Արևելքում հաստատված հոգևոր ասպետական միաբանությունների նկատմամբ:

Մլեհի կատարած չարգործությունների մասին խոսում է նաև Բար Հեբրաուսը և ավելացնում, որ նա մարդկանց մեծ տանջանքների ենթարկելուց հետո շատերին գցում էր վայրի գազանների առաջ[4]: Հայոց իշխանապետի մասին բացասա-

---

1 Տե՛ս **Լ. Տեր-Պետրո**սյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 145:

2 Տե՛ս **Գ. Հովսեփյանց**, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 769-772, ինչպես նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ժգ դար, էջ 87-89:

3 Տե՛ս **Guillaume de Tyr**, p. 352-353.

4 Տե՛ս **Bar Habraeus**, էջ 292:

կան երանգներով է խոսում նաև Միքայել Ասորին իր Ժամանակագրության մեջ[1], համաձայն որի՝ քրիստոնյաները տառապում էին վերջինիս վարած քաղաքականությունից: Եվ վերջապես նշյալ խնդրին անդրադարձել է նաև պատմիչ Անանուն Եդեսացին, համաձայն որի՝ հայոց իշխանապետը, ում անունն էր Մլեհ, բռնությամբ ու դաժանությամբ էր կառավարում, և նա իր ամբարշտությամբ գերազանցեց ոչ միայն քրիստոնյա անօրեն իշխաններին, այլ նույնիսկ մահմեդական և հեթանոս բռնակալներին[2]:

Փաստորեն, ասորի պատմիչների տեղեկությունները նման են հայկական հեղինակների տեղեկություններին:

Ի տարբերություն հայ և քրիստոնյա մի շարք պատմիչների, ինչպես արդեն նշել ենք, Մլեհի մասին շատ դրական են արտահայտվում մահմեդական պատմիչները: Մասնավորապես՝ Իբն ալ-Ասիրը, ում վկայության համաձայն Մլեհը շատ աշխատասեր և ժրաջան անձնավորություն էր և ծառայության ժամանակ հաջողությամբ կատարում էր իր առջև դրված հանձնարարությունները[3]: Նույն հեղինակի պնդմամբ Մլեհը նաև քաջ ռազմիկ էր[4]: Մլեհ Ռուբինյանի մասին շատ դրական է խոսում նաև ալ-Դահաբի պատմիչը իր տարեգրության մեջ, որի խոսքերը ներկայացված են Կ. Մութաֆյանի հետազոտությունում: Այստեղ պատմիչը նշում է, թե ինչպես Մլեհը ջախջախեց բյուզանդացիներին, ապա ավելացնում, որ Նուր ադ-Դինը, ապշելով այդ իշխանի իմաստասիրությունից և աննկուն բնավորությունից, հանձին նրա տեսավ ֆրանկների դեմ պայքարում դաշնակցի:

Կասկածից վեր է այն հանգամանքը, որ եթե Մլեհը՝ որպես գործիչ և զինվորական, չունենար բարձր հատկանիշ-

---

1 Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 454-455:

2 Տե՛ս **Անանուն Եդեսացի**, էջ 135:

3 Տե՛ս **Ibn Al-Athir**, էջ 210:

4 Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 362:

ներ, ապա դժվար թե նրա մասին դրական խոսեին մահմեդական պատմիչները:

2.2 Ռուբենի փախուստը Կիլիկիայից և **նրա մահվան հանգամանքները:** Ինչպես արդեն նշել ենք, Մլեհը, գալով Կիլիկիա, պետք է իշխանությունը կիսեր իր եղբոր որդու՝ Ռուբենի հետ, սակայն կարճ ժամանակ անց նա դրժում է իր խոստումը և ամբողջ իշխանությունը կենտրոնացնում իր ձեռքում: Իրավիճակը այնքան է բարդանում, որ խնամակալ Թումասը և Ռուբեն Բ-ն ստիպված էին լքել Կիլիկյան Հայաստանի սահմանները:

Սմբատ սպարապետի վկայմամբ՝ Թումասը ապաստանեց Անտիոքում, իսկ Ռուբենին տարան Հռոմկլա՝ հայոց կաթողիկոսի մոտ. «Իսկ յորժամ տիրեաց Մլեհն իշխանութեան եղբօրն իւրոյ, փախեաւ Թովմասն և գնաց յԱնտիոք: Եւ զտղայն Թորոսի առաքեցին ի հայրապետական աթոռն Հռոմկլայն առ կաթողիկոսին...»[1]: Իսկ ինչու՞ Ռուբենը Թումասի հետ չմնաց Անտիոքում, որը հավանաբար առավել անվտանգ վայր կարող էր լինել: Կարելի է ենթադրել, որ Անտիոքի վերնախավը հավանաբար չի ցանկացել բարդացնել իր հարաբերությունները Կիլիկյան Հայաստանի ու Հալեպի աթաբեկության հետ, և դրա համար էլ վերջինիս տեղափոխել են Հռոմկլա, որը գտնվում էր Հալեպի աթաբեկության սահմաններում:

Փաստորեն նման վարքագծով Թումաս պայլը հրաժարվել է Ռուբեն Բ-ի նկատմամբ խնամակալությունից՝ վերջինիս թողնելով բախտի քմահաճույքին: Համենայն դեպս Հռոմկլայում մի որոշ ժամանակ մնալուց հետո շատ կասկածելի հանգամանքներում Ռուբենին գտնում են մահացած: Հարց է ծագում, թե ինչու Ռուբենին ուղարկեցին հենց Հռոմկլա: Այդ մասին աղբյուրներում չկա որևէ բացատրութ-

---

[1] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 190:

յուն: Բերդաքաղաքը մի կողմից հայոց հայրապետի նստավայրն էր և բավական անվտանգ վայր կարող էր լինել Ռուբենի համար, բայց մյուս կողմից էլ այդ տարածքը Հալեպի աթաբեկության տիրապետության տակ էր և Մլեհին հեշտ կլիներ հասնել Ռուբենին: Իսկ միգուցե Ռուբենին դիտավորյալ են ուղարկել Հռոմկլա՝ մի տարածք, որը մի կողմից հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալու նստավայրն է, իսկ մյուս կողմից էլ՝ Հալեպի աթաբեկության ենթակա վայրը: Ցավոք, այս խնդրի պատասխանը միջնադարյան պատմիչների երկերում չի գտնվել:

Ռուբենը դժվար թե մահացած լիներ իր բնականոն մահով: Այս միջադեպի վերաբերյալ կան տարբեր տեղեկություններ և կարծիքներ թե՛ միջնադարյան պատմիչների երկերում, թե՛ կարծիքներ գիտական գրականության մեջ: Պատմիչներից առաջինն արձագանքել է Սմբատ Սպարապետը: Նա նշում է .«Եւ զտղայն Թորոսի առաքեցին ի հայրապետական աթոռն Հռոմկլայն առ կաթողիկոսն, և անդ մեռաւ...»[1]:

Սմբատը Ռուբենի մահվան մասին որևէ մեկնաբանություն չի տալիս: Այդ մասին խոսում է նաև Վահրամ Րաբունին և նշում է, որ վերջինս սպանվել է ամբարիշտ մարդկանց ձեռքով.

Սակայն Թումաս՝ ըն փախուցեալ,
Ի յԱնտիոք՝ ուստի եկեալ,
Եւ զԹորոսի՝ որդին առեալ,
Ամբարշտաց՝ և սպանեալ[2]:

Այն, որ Ռուբենը, հնարավոր է, սպանվել է, կարծում ենք կարող է մոտ լինել իրականությանը, և դրա հետ համակարծիք է նաև Ալիշանը. «Եւ զորդի Թորոսի ամպարիշտք ոմանք

[1] Նույն տեղում:
[2] **Վահրամ Րաբունի**, էջ 211:

կալեալ սպանին»[1]: Վերը նշյալ խնդրի մասին որոշակի վկա-յություններ կա «Պատմութիւն ազգին Ռովբինեանց, թէ որ-պէս տիրեցին Կիլիկիո» ժամանակագրությունում, որը նույն-պես հաստատում է, թե Թորոսի որդին սպանվում է ամբա-րիշտ մարդկանց կողմից.«… Եւ զԹորոսի որդին կալան ամ-բարիշտ ոմանք և սպանին…»[2], ինչպես նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկի մոտ[3]:

Փաստորեն, պատմիչների ճնշող մեծամասնությունը վստահ է, որ Ռուբենը չի մահացել բնականոն մահով, այլ սպանվել է:

Այժմ տեսնենք թե ինչ տեսակետներ կան մասնագիտա-կան գրականության մեջ: Մ. Զուլալյանը[4], Գ. Միքայելյանը[5], Վ. Ստեպանենկոն[6] նշում են, որ Ռուբենը Հռոմկլայում մա-հացավ՝ չմանրամասնելով, թե ինչպես: Ի տարբերություն վե-րը նշված հետազոտողների՝ Ս. Տեր-Ներսիսյանը, անդրա-դառնալով Ռուբենի մահվան հանգամանքներին, նշում է, որ նրան սպանել են Մլեհի կողմնակիցները[7]: Նրա տեսակետը պաշտպանում է նաև Կ. Մութաֆյանը[8]: Հետազոտողներից Յ. Տեր-Ղազարյանն էլ ավելացնում է, որ Թորոսի որդու մահը թունավորման հետևանք էր[9]: Իսկ Մ. Օրմանյանը նախ նշում

---

1 **Ղ. Ալիշան,** Հայապատում, էջ 347:

2 Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 103: **Յ. Տեր-Ղազարյանը** իր աշխատության մեջ Թորոսի Բ-ի սպանված որդուն անվանում է Լևոն, (էջ 171), որ չի համապատասխանում իրականությանը և հավանաբար թյուրիմացության արդյունք է:

3 Տե՛ս **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 218:

4 Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, էջ 683:

5 **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 129:

6 Տե՛ս **В. Степаненко**, Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., с. 131.

7 Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 393:

8 Տե՛ս **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 395:

9 Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 171:

է, որ Ռուբենը Հռոմկլայում մահացավ, և մի քանի տող ներքև էլ զարմանք է ապրում, թե ինչպես կարող էին չարագործները կատարել այդ ոճիրը մի անձնավորության նկատմամբ, որը գտնվում էր կաթողիկոս Ներսես Շնորհալու պաշտպանության ներքո[1]:

Առավել հավանական ենք համարում, որ այդ սպանության հետևում պետք է կանգնած լիներ այն անձնավորությունը, ում ամենից շահեկան էր այդ մահը: Տվյալ դեպքում դա Մլեհն էր, քանզի նա կարող էր մտավախություն ունենալ, որ Ռուբենը, չափահաս դառնալով, կարող է վերադառնալ Կիլիկիա և պահանջել իշխանությունը: Այս քայլով Մլեհը փորձում էր վերացնել ապագայում Կիլիկիայի գահի օրինական հավակնորդին: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Մլեհը իր իշխանապետության տարիներին ձեռնպահ մնաց իր մյուս եղբոր՝ Ստեփանեի որդիների նկատմամբ որևէ քայլ կատարելուց: Այդ մասին գրեթե բոլոր պատմիչները լռում են, ու թերևս բացառություն է կազմում միայն Անանուն Եդեսացին, որը, խոսելով Մլեհի և նրա սպանության հանգամանքների մասին, կարճ նշում է, որ հայոց իշխանապետի եղբոր որդին՝ Ռուբենը, փախել էր Մլեհի չարագործությունների պատճառով: Ցավոք, հեղինակը այլ տեղեկություն չի տրամադրում: Թեև այդ տեղեկությունից կարելի է երկու եզրահանգման գալ.

1. Ռուբենը, տեսնելով հորեղբոր չարագործությունները մոր և եղբոր հետ ապաստան է գտել քեռու ամրոցում՝ մտավախություն ունենալով, որ ինքը ևս կարող է արժանանալ Ռուբենի ճակատագրին:

2. Հավանական նաև, որ Մլեհը ցանկություն ունենար ասպարեզից հեռացնել նաև Ստեփանեի որդիներին, սակայն դա նրան չի հաջողվել:

---

[1] Տե՛ս **Մ. Օրմանյան**, հ. Ա, սյուն 1660:

Փաստորեն, Ռուբեն Բ-ի սպանությամբ Մլեհը Կիլիկյան Հայաստանում դառնում է միանձնյա կառավարիչ:

2.3 Մլեհի իշխանապետությունը:

Գրավելով իշխանությունը Կիլիկիայում՝ Մլեհը սկսեց միանձնյա կառավարել երկիրը: Ալիշանի վկայմամբ՝ նա բռնակալական մեթոդներով էր կառավարում. «Յոր ի յուզման եկեաց և վարեաց սա զբռնակալ իշխանութիւն, զամս վեց կամ եօթն. ատելի ընտանեաց և ահարկու օտարաց. ոչ առնլով ակն բարեկամի և թշնամւոյ...»[1]: Նա շատ խիստ է վարվել իր քաղաքական հակառակորդների հետ, լինեին նրանք աշխարհիկ, թե հոգևոր տիրակալներ: Պատմիչներիի վկայությամբ՝ նա հանում էր որոշ մեծամեծների աչքերը, կտրում ընդդիմախոսների ձեռքերն ու ոտքերը, քրիստոնյաներին վաճառքի հանում Հալեպի շուկայում: Կիլիկիայի հայոց իշխանապետության պատմության մեջ նա ամենադաժան կառավարիչն էր, ով իր նպատակներին հասնելու համար պատրաստ էր ցանկացած քայլի[2]: Այդ բռնարարքներով նա թուլացնում էր նաև իր հակառակորդների տնտեսական կարողությունները: Հետազոտողներից Ռընե Գրուսեն մի տեսակետ է հայտնում, համաձայն որի՝ Մլեհը Կիլիկիայում իշխանությունը գրավեց Նուր ադ-Դինի և թուրքերի աջակցությամբ և նրանց շնորհիվ էլ պահպանում էր իր իշխանությունը[3]: Այն, որ Մլեհը Հալեպի աթաբեկության աջակցությամբ գրավեց իշխանությունը, դա հասկանալի է, սակայն դժվար է համաձայնվել Գրուսեի այն դիտարկմանը, թե իբր հետագա

[1] **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 56: Հ. Ոսկյանի բնորոշմամբ Մլեհը ծանոթ է եղել իբրև սև դեմք, **Հ. Ոսկյան**, նշվ. աշխ., էջ 246-247:

[2] Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 189-190, նույնի՝ Պատմութիւն, էջ 88-89, Անանուն Եդեսացի, էջ 135:

[3] Տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, էջ 275:

տարիներին հայոց իշխանապետը նրանց օգնությամբ էր պահպանում իր իշխանությունը[1]: Համենայն դեպս սկզբնաղբյուրներում նման տեղեկություն չկա, և հայոց իշխանապետը Կիլիկիայում ունեցել է իր համակիրների խումբը:

Ներքին քաղաքականության մեջ Մլեհի հաջորդ քայլը ուղղված էր տաճարական միաբանության դեմ, որին հայոց իշխանապետը չէր վստահում: Դրա հիմքում հավանաբար ընկած էր այն հանգամանքը, որ տարիներ առաջ նա կարճ ժամանակով անդամակցել էր այս միաբանությանը և մոտիկից տեղյակ էր դրա գործունեությանը: Հայոց իշխանապետը սկսեց ճնշումներ գործադրել տաճարականների նկատմամբ՝ «յարքունիս» գրավելով նրանց գույքը: Այս մասին խոսում է նաև Ղևոնդ Ալիշանը և նշում՝ Մլեհը, ժամանակին լինելով նրանց միաբանության անդամ, թշնամացած էր վերջիններիս հետ. «Առաւել ևս ոխացեալ ընդ Տաճարական ասպետս երբեմն իւր կարգակիցս՝ իսպառ հալածեաց յերկրէ իշխանութեանն իւրոյ, գրաւելով զկալուածս նոցին...»[2]: Մ. Աննա-Շևալիեն ավելացնում է, որ հայոց իշխանապետը Կիլիկիայից արտաքսեց տաճարականներին, որի հետևանքով հայկական իշխանապետության և տաճարականների միջև երբևէ իրապես դաշինքը չի վերահաստատվել[3]:

Մլեհը նաև խլում է շատ իշխանների կալվածքները և սահմանափակում եկեղեցու միջամտությունը պետական գործերին[4]: Հայոց իշխանապետը կարողանում է սանձել կենտրոնախույս ձգտումներ ունեցող ուժերին՝ մեկը մյուսի

---

1 Տե՛ս Նույն տեղում:

2 Տե՛ս **Ղ. Ալիշան**. Սիսուան, էջ 56: Իր մյուս աշխատության մեջ Ալիշանը հայտնում է, որ Մլեհը խլեց տաճարականներից այն տարածքները, որ Թորոսն էր պարգևել վերջիններիս, **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 326:

3 Տե՛ս **Մ. Աննա-Շևալիե**, նշվ. աշխ., էջ 10-11:

4 Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 7, **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 148:

հետևից շնորհազրկելով և արտաքսելով կենտրոնախույս ազնվականներին: Այս դաժան քաղաքականությունը ինքնանպատակ չէր, այլ հեռատեսության ու սառը դատողության արգասիք: Սխալ է Բակուրանը, որ կարծում է, թե Մլեհը գործում էր լոկ հակաքրիստոնեական ոգով[1]: Հետազոտողներից Ս. Պապիկյանը, խոսելով Մլեհի ներքին քաղաքականության մասին, կարծիք է հայտնում, որ նա դաժան բռնապետ էր, և հավանաբար դա էր պատճառը, որ նրանից վախենում էին նույնիսկ բարեկամները[2]: Երբ Մլեհը դարձավ իշխանապետ, Ստեփանեի կինը իր երկու որդիների հետ ապաստանեց եղբոր՝ Պապեռոնի տիրակալ Բակուրանի մոտ[3], որտեղ տվյալ պահին առավել անվտանգ էր: Մենք համակարծիք ենք Գ. Միքայելյանին, որ գրում է, թե այդ քայլերով հայոց իշխանապետը փորձում էր ուժեղացնել իր իշխանությունը[4]:

Մլեհը իր բոլոր բացասական հատկանիշներով հանդերձ, դրեց Կիլիկիայի պետության անկախ քաղաքականության հիմքերը: Եվ հենց նրա օրոք էր, որ Կիլիկիայի հայոց իշխանապետությունը տարածաշրջանում դարձավ լուրջ դերակատար, խաչակրաց իշխանությունները և Բյուզանդական կայսրությունը զրկվեցին Կիլիկիայի հայոց իշխանապետության ներքին գործերին խառնվելու հնարավորությունից, ինչը կարևոր ձեռքբերում էր: Մեծ կարևորություն տալով երկրի զինված ուժերին՝ իր կարճատև գահակալման ընթացքում նա կարողացավ ստեղծել բավական մարտունակ բանակ, որն ընդունակ էր ամեն պահի լուծել իր առջև դրված խնդիրները և արժանի հակահարված տալ հայոց պետության թշնամի-

---

[1] Տե՛ս **Բակուրան (Վ. Քիւրքճեան),** նշվ. աշխ., էջ 15:

[2] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 275:

[3] Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 15:

[4] Տե՛ս **Գ . Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 130:

ներին: Հայոց իշխանապետը կարողացավ ստեղծել հզոր ու կենտրոնաձիգ իշխանություն: Նա քայլեր ձեռնարկեց նաև ներքին և արտաքին առևտրի զարգացման ուղղությամբ: Դրա վառ արտահայտությունը Մլեհի հատած դրամներն էին[1]: Ալիշանը կարծիք է հայտնում, որ հայոց իշխանապետը նույնիսկ Նուր ադ-Դինի հետ համատեղ դրամ է հատել. «Ի նշան միաբանութեան դրամ ալ կոխած են »[2]: Եվ քանի որ Մլեհը գրավել էր Դաշտային Կիլիկիայից որոշ տարածքներ, դա նույնպես սկսեց վիթխարի եկամուտներ ապահովել Կիլիկիայի հայոց պետությանը:

2.4 Մլեհ իշխանապետի պայքարը Լամբրոնի Հեթումյանների դեմ:

Մլեհի կառավարման ժամանակաշրջանում կարևոր էր նաև պայքարը Լամբրոնի Հեթումյանների դեմ, որոնք բյուզանդացիների դաշնակիցն էին և բավական ժամանակ արդեն գտնվում էին Ռուբինյանների հետ առճակատման մեջ: Ղ. Ալիշանը, խոսելով Մլեհի կատարած քայլերի և իշխանների հնազանդեցման մասին, կարծիք է հայտնում, որ Լամբրոնի տիրակալները Կիլիկիայի այն սակավաթիվ իշխողներից էին, որ դեռևս մնում էին Բյուզանդական կայսրության ազդեցության տակ.«Սակաւ բերդորայք միայն մնացին ի Կիլիկիա ընդ իշխանութեամբ Բիւզանդացւոց յորաց մի և գլխաւոր էր ամուրն Լամբրուն, յառաջագոյն և յերկարագոյն հակառակորդ տանն Ռուբինեանց.»[3]: Հանգամանք, որի հետ չէր կարող համակերպվել Կիլիկիայի նոր առաջնորդը: Նա չէր կարող հանդուրժել, որ Կիլիկիայի պետության ներսում

---

[1] Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 7, **Ալիշան,** Շնորհալի և պարագայ, էջ 326:

[2] Տե՛ս **Ղ. Ալիշան**, նույն տեղում:

[3] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 57:

Լամբրոնի Հեթումյանները շարունակեն իրենց կիսանկախ քաղաքականությունը և չենթարկվեն իրեն: Շուտով առաջացավ հարմար առիթ՝ Հեթումյանների կենտրոնախույս նկրտումները սանձելու համար: Մլեհը, օգտվելով այն հանգամանքից, որ Լամբրոնի տիրակալը շատ անարդարացի է վարվել իր եղբոր՝ Թորոս Բ-ի դստեր նկատմամբ, պաշարում է Լամբրոնը[1]:

Այս կարևոր իրադարձության մասին միջնադարյան գրեթե բոլոր պատմիչները լռում են, ու թերևս բացառություն է միայն Սմբատ Սպարապետը, ով կարևոր մանրամասներ է հաղորդում: Այսպես՝ պատմիչը նշում է հետևյալը. «Բախման պատճառը այն էր, որ Լամբրոնի տիրակալի՝ Օշինի անդրանիկ որդին՝ Հեթումը, ամուսնացած էր Մլեհի եղբոր՝ Թորոս Բ իշխանապետի դստեր հետ, բայց չէր սիրում նրան: Քանի դեռ Թորոս Բ-ն կենդանի էր, վերջինս չէր համարձակվում որևէ քայլ ձեռնարկել, բայց երբ հայոց իշխանապետը մահացավ, Լամբրոնի տիրակալը բաժանվեց Թորոսի աղջկանից և վտարեց նրան: Իմանալով այդ մասին՝ Մլեհը շատ զայրացավ և զորքերն ուղղեց Լամբրոնի տիրակալի դեմ, որ ուներ անառիկ ամրոց»[2] և շատ դժվար էր այն ռազմական ուժով գրավել: Հայոց իշխանապետը Լամբրոնի տիրոջ համար բարդ խնդիրներ առաջացրեց, իսկ հույներն էլ չհամարձակվեցին օգնական զորքեր ուղարկել իրենց դաշնակցին[3]:

---

1 Տե՛ս **Ն. Ակինյան**, Ներսես Լամբրոնացի, Արքեպիսկոպոս Տարսոնի, Կեանքն եւ գրական վաստակները. Հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց, Վիեննա, 1956, էջ 118:

2 Տե՛ս Լամբրոնի ամրոցը Հայկական Կիլիկիայի նշանավոր և պատմական հիշողություններով լի բերդերից մեկն է, որը գտնվում է Տարսոնից 145 կիլոմետր հեռավորության վրա, դեպի արևմուտք, **Մ. Յ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 67:

3 Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 190, նույնի՝ Պատմութիւն, էջ 89-90:

Լամբրոն

Ցավոք, միջնադարյան պատմիչները չեն նշում, այս բախման թվականը: Հետազոտողներից միայն Ղևոնդ Ալիշանը կարծիք է հայտնում, որ այն տեղի է ունեցել 1173 թվականին[1], ինչը հավանական ենք համարում, քանզի 1172-1173 թվականները Մլեհ իշխանապետի գործունեության ամենաբուռն և իրադարձություններով լի տարիներն էին:

Հայոց իշխանապետը բավական ժամանակ պաշարված պահեց բերդը ու թեև չկարողացավ գրավել, այնուամենայնիվ մեծ նեղություն տվեց Լամբրոնի պաշտպաններին՝ հրով և սրով ապականելով բերդի սահմանակից տարածքները: Նշված միջադեպի մասին որոշակի տեսակետներ կան նաև մասնագիտական գրականության մեջ:

Մ. Օրմանյանը, անդրադառնալով այս դեպքերին և հավանաբար հիմնվելով Սմբատ Սպարապետի վկայություններին, կարծիք է հայտնում, որ Թորոս Բ իշխանապետի դստեր և Լամբրոնի տիրակալի միջև կայացած ամուսնությունը ավելի շատ քաղաքական էր[2]: Դրան է վկայում նաև Ն. Ակինյանը[3]:

Կարծում ենք, որ Մ. Օրմանյանի և Ն. Ակինյանի տեսակետները շատ ճշգրիտ են, քանզի նախկինում էլ այս երկու իշխանական ընտանիքները հաճախ բախվում էին իրար, և ժամանակին հայ հոգևորականության և մի քանի այլ իշխանների միջնորդությամբ խաղաղություն էր կնքվել, որն էլ ամրապնդվեց վերոնշյալ ամուսնությամբ: Շատ հավանական է, որ Լամբրոնի տիրակալը, ժամանակին տեղյակ լինելով Մլեհի և Թորոս Բ-ի միջև եղած թշնամությանը, կարծել է,

---

1 Տե՛ս Նույն տեղում:

2 Տե՛ս **Մ. Օրմանյան**, սյուն, 1674:

3 **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, Արքեպիսկոպոս Տարսոնի, կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց, Վիեննա, 1956, էջ 118:

որ հայոց իշխանապետը չի սատարի եղբոր դստերը, դրա համար որոշակի քայլեր է իրականացրել և ընկել ծանր դրության մեջ: Հետազոտվող խնդրի առնչությամբ իր տեսակետն է արտահայտում նաև Ս. Տեր-Ներսիսյանը: Նա կարծում է, որ Հեթումի կողմից կնոջ վտարումը պարզապես պատրվակ է եղել հայոց իշխանապետի համար՝ ռազմական գործողություններ սկսելու[1]:

Կարծում ենք, որ Մլեհի նման արարքը խոսում է նաև նրա մարդկային արժանիքների մասին, հանգամանք, որ միգուցե տվյալ ժամանակաշրջանում ոչ բոլոր իշխանները կկատարեին: Թեև չի բացառվում, որ բացի եղբոր դստեր կողքին լինելուց՝ Մլեհը ցանկանում էր նաև պատժել իր տոհմի պատիվը ոտնահարողին: Մյուս կողմից էլ Լամբրոնի պաշարումը առաջին հերթին հայոց իշխանապետի խիստ կենտրոնացման քաղաքականության ապացույցն էր: Նրա նպատակը Կիլիկիայում բոլոր այն ուժերին ոչնչացնելն էր, որոնք չէին ընդունում իր իշխանությունը և դաշնակից էին բյուզանդացիներին: Եվ սա շատ պատեհ առիթ էր:

Մենք չունենք տեղեկություններ կայացված հաշտության մանրամասների մասին, թեև շատ հավանական է, որ Հեթում իշխանը, գիտակցելով պահի լրջությունը, բավական ծանր գնով կարողացավ հաշտություն կնքել: Հետազոտողներից Ա. Բոզոյանը կարծիք է հայտնում, որ Մլեհը ստիպեց իշխան Հեթումին ճանաչել Ռուբինյանների գերիշխանությունը[2]: Վերը նշված խնդրին անդրադարձել է նաև Ղևոնդ Ալիշանը, որ Մլեհ իշխանապետի և Լամբրոնի Հեթումյանների միջև հաշտությունը կայացել է Գրիգոր Դ Տղայի միջնորդությամբ[3], որն էլ հավանական ենք համարում[1]:

---

[1] Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 393:

[2] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Կիլիկիայի հայկական պետությունը իշխանապետությունից թագավորություն, էջ 88:

[3] **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 57:

2.5 Սիսը Կիլիկիայի հայոց իշխանապետության մայրաքաղաք:

Հայոց իշխանապետը իր կառավարման ժամանակաշրջանում զբաղվել է նաև տնտեսական և մասնավորապես շինարարական հարցերով, որոնք պետության համար ունեին ոչ պակաս կարևորություն: Թերևս դրանց մեջ պետք է առանձնացնել նոր մայրաքաղաքի հիմնադրումը: Հայտնի փաստ է, որ մինչև Մլեհը Ռուբինյան իշխանները Կիլիկիայում չեն ունեցել իրենց հաստատուն նստավայրը: Առանձին տարիներին հայ իշխանները նստել են Կոպիտառում, Բարձրաբերդում, Վահկայում, Անարզաբայում և Մամեստիայում: 12-րդ դարի 70-ական թվականներին Կիլիկիայի հայոց իշխանապետությունը օր օրի հզորանում և զարգանում էր, ուստի և կարիք ուներ մի նոր հաստատուն կենտրոնի, որն իրար կկապեր բարդ ռելիեֆ ունեցող շրջանները: Հայոց իշխանապետը որոշեց նախապատվությունը տալ Սիս քաղաքին (հնում Փլավիապոլիս), որի դիրքը բավական հարմար էր: Այն գտնվում էր մոտավորապես երկրի կենտրոնում և ավելի լավ պաշտպանված էր հարձակումներից՝ ունենալով դժվարամատչելի դիրք, որը բնական պաշտպանություն էր քաղաքի համար:

---

[1] Տե՛ս Կիլիկիայի Ռուբինյան դինաստիայի պայքարը Լամբրոնի տիրակալների դեմ շարունակվեց նաև հետագա տասնամյակներում: Մասնավորապես Մլեհի հաջորդ Ռուբեն Գ-ն ևս պաշարեց Լամբրոն բերդը և պատմիչների վկայմամբ երեք տարի պաշարած պահեց, սակայն հաջողություն չունեցավ, և միայն Լևոն Մեծագործը խելամտորեն կարողացավ գրավել Լամբրոն ամրոցը: Այդ մասին տե՛ս Ա. Հովհաննիսյան, Լևոն Մեծագործի և Լամբրոնի Հեթումյանների հարաբերությունների պատմությունից, Տարեգիրք աստվածաբանության ֆակուլտետի, 2014 Թ, էջ 226-236:



Սիս

Ի վերջո Մլեհ իշխանապետը որոշեց այն վերաշինել և դարձնել հայոց Կիլիկիայի պետության մայրաքաղաք[1]: Այդ կարևոր իրադարձությունը տեղի ունեցավ 1173 թվականին: Այդ մասին Մ. Օրմանյանը հետևյալն է նշում. «Մլեհի գործն եղաւ Ռուբինեանց իշխանութեան տեւական կեդրոն մը կազմել, զնորաշէն քաղաքն Սիս, որ հին Փլաբիուպոլիս քաղաքին տեղը շինուած կը կարծուի, եւ իր լաւ դիրքովը յարմարագոյնն էր իշխանութեան մայրաքաղաքն ըլլալու»[2]: Այդ ժամանակից սկսած մինչև 1375 թվականը՝ այս քաղաքը մնաց որպես Կիլիկիայի հայոց պետության մայրաքաղաք: Շուտով հայոց իշխանապետի հրամանով մայրաքաղաք Սիսում կառուցում են առևտրական կենտրոններ: Բացի այդ՝ քաղաքը զարդարում են բազմաթիվ գեղեցիկ շենքերով, ապարանքներով, տաճարներով, հյուրանոցներով և այլ շինություններով[3]: Նրա՝ մայրաքաղաք դառնալը նպաստեց քաղաքի՝ արագ տեմպերով զարգացմանը: Սիսը ոչ միայն վարչաքաղաքական, այլև առևտրատնտեսական առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում՝ հավասարվելով և գերազանցելով Կիլիկիայի խոշոր քաղաքներին (Տարսոն, Ադանա, Մամեստիա, Անարզաբա)[4]: Անշուշտ, մայրաքաղաք Սսի բարեկարգումը և զարգացումը շարունակվեց նաև Կիլիկիայի հայկական թագավորության հաջորդ ղեկավարների օրոք:

---

[1] Սիսը գտնվում էր Պիրամոս գետի աջակողմյան վտակներից մեկի վրա և հայտնի էր իր ամրությամբ: Առանձնապես նշանավոր էր նրա միջնաբերդը, որը տեղադրված էր մի բլրի վրա, **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, (Ուրվագծեր), երկրորդ հրատարակություն՝ լրացված և բարեփոխված, Եր., 1968, էջ 352:

[2] **Մ. Օրմանյան**, նշվ. աշխ., սյուն 1674:

[3] Տե՛ս **Թ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 352:

[4] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Ռուբինյան տոհմը արաբ պատմագրության մեջ, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, պատմա-բանասիրական ակնարկներ, Եր., 2016, էջ 155:

2.6 Մլեհի ընտանիքը:

Մլեհի ընտանիքի մասին միջնադարյան աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Հստակ հայտնի չէ, թե երբ է ամուսնացել Մլեհը, սակայն կարող ենք շեշտել, որ Մլեհի ամուսնությունը կայացել է նրա տաճարականների միաբանությունը լքելուց հետո, քանի որ հոգևոր-ասպետական այս միաբանությունների կանոնադրությամբ անդամները պետք է կուսակրոն լինեին: Հայտնի է, որ նա ամուսնացած էր Վասիլ Պահլավունի իշխանի դստեր՝ Սիրուհու հետ, ով հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի քույրն էր: Թե քանի երեխա է ունեցել հայոց իշխանապետը, հայտնի չէ, սակայն պատմիչների տեղեկություններից իմանում ենք, որ նա ուներ Գևորգ անունով մի զավակ: Տասնամյակներ անց նա Կիլիկիայի հայկական թագավորությունում դարձավ քաջ և հեղինակավոր անձնավորություն և Կոստանդին Հեթումյանի[1] հետ պայքարում էր սպարապետության պաշտոնի համար: Ցավոք, հետագայում Լևոն Մեծագործի հրամանով նրան կուրացրին[2]: Մլեհ Ռուբինյանի ընտանիքի անդամներին և որդիներին անդրադարձել է նաև հայտնի հետազոտող Ռ. Կոլենբերգը: Նա կարծիք է հայտնում, որ հայոց իշխանապետը ունեցել է մի քանի այլ որդիներ ևս[3], որոնց մասին սակայն տեղեկություններ չունենք:

---

1 Ապագա հայոց սպարապետը, Հեթում Ա-ի հայրը:

2 Լևոն Մեծագործի և Գևորգ իշխանի հարաբերությունների պատմության մանրամասնությունները տես **Ա. Հովհաննիսյան,** Լևոն Մեծագործի և Գևորգ իշխանի հարաբերությունների պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 2016, թիվ 2, էջ 45-50:

3 Տե՛ս **W. H. Rudt de Collenberg**, նշվ. աշխ., էջ 49-50:

Գլուխ երրորդ

ՄԼԵՀ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կիլիկիայի հայկական պետության և մասնավորապես հայոց եկեղեցու պատմության մեջ առանձնահատուկ է 12-րդ դարի 70-ական թվականների առաջին կեսի, հատկապես իշխանապետ Մլեհի կառավարման ժամանակաշրջանի ինչպես քաղաքական, այնպես էլ եկեղեցական պատմությունը: Հայտնի է, որ Հայոց կաթողիկոսարանը 1149 թվականին երկարատև դեգերումներից հետո հաստատվեց Կիլիկիայի սահմանագլխին՝ Հռոմկլա բերդաքաղաքում[1]: Բնական է, որ Հռոմկլայի կաթողիկոսարանի և Ռուբինյան իշխանապետության միջև առկա էին սերտ կապեր:

12-րդ դարի 70-ական թվականների առաջին կեսերի եկեղեցական դեպքերի պատմության մասին թե՛ հայ, թե՛ օտար սկզբնաղբյուրները սակավաթիվ են, որի պատճառով մինչև այժմ շատ քիչ ուսումնասիրություններ են կատարվել, և մի շարք կարևոր հարցերի չեն տրվել սպառիչ պատասխաններ: Մասնավորապես շատ քիչ անդրադարձ է կատարվում հայոց իշխանապետ Մլեհի և հայ եկեղեցու նվիրապետների հարաբերությունների կամ Կիլիկիայի հայոց պետու-

[1] Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, Մի դրվագ Հռոմկլայի կաթողիկոսարանի հիմնադրման պատմությունից, Տարեգիրք աստվածաբանության ֆակուլտետի, Եր., 2013, Ը, էջ 124-132, **Վ. Վարդանյան**, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Եր., 2008, էջ 137, **Մ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 431:

թյան և Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի միջև հարաբերությունների պատմությանը, որն, անշուշտ, չափազանց կարևոր է: Դրա պատճառը հավանաբար այն հանգամանքն է, որ միջնադարյան պատմիչների ճնշող մեծամասնությունը իրենց երկերում գերադասել է հիմնականում տալ քաղաքական դեպքերի նկարագրությունը: Մեր աշխատության նշված գլուխը նվիրված է հենց այդ հետազոտությանը և մասամբ այդ բացը լրացնելուն:

Հայտնի իրողություն է, որ Մլեհ իշխանապետը ինքնատիպ անձնավորություն էր Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ: Ի տարբերություն մյուս հայ իշխանների՝ նա այլ քաղաքական տեսակետների հետևորդ է եղել:

Պատմագիտության տեսանկյունից շատ հետաքրքիր է պարզել, թե ինչպիսի հարաբերություններ են եղել Կիլիկիայի հայոց իշխանապետության և Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի միջև Մլեհ իշխանապետի կառավարման ժամանակաշրջանում, և ընդհանրապես ինչպիսի եկեղեցական քաղաքականություն է վարել հայոց իշխանապետը: Հռոմկլայի աթոռի առանձնահատուկ նշանակությունն այն էր, որ նա հայերին միավորող համազգային միակ կազմակերպությունն էր և «պետություն էր պետականությունը կորցրած ժողովրդի համար»: Նրա իշխանության մյուս առանձնահատկությունն էլ այն էր, որ այն տարածվում էր բոլոր հայ հավատացյալների վրա[1], որոնք բնակվում էին Մերձավոր Արևելքի և մի շարք այլ երկրներում:

[1] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Հայոց եկեղեցին և Բյուզանդական կայսրությունը ԺԱ դարի վերջին և ԺԲ դարի ընթացքում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 22, Եր., 2004, էջ 309, նույնի՝ Պետության և կաթողիկոսարանի փոխհարաբերությունները Կիլիկյան Հայաստանում (նախամոնղոլական շրջան), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 21, Եր., 2002, էջ 177:

3.1 Մլեհի ուրացյալ լինելու հարցը:

Կիլիկիայի հայոց իշխանապետի բավական խիստ և դաժան վերաբերմունքը տարբեր աշխարհիկ և հոգևոր գործիչների նկատմամբ, քրիստոնյաներին վաճառքի հանելը Հալեպի շուկայում, ինչպես նաև համագործակցությունը արաբական և թուրքական պետությունների հետ, մյուս կողմից էլ քրիստոնյա պետությունների դեմ պայքարը դրդել են որոշ հետազոտողների պնդել, որ Մլեհը քրիստոնեությունը ուրացել և իսլամի հետևորդ է դարձել[1]: Այս խնդրի վերաբերյալ միջնադարյան սկզբնաղբյուրներում կան որոշակի վկայություններ: Ցավոք, պատմիչների գերակշռող մասը, ովքեր տեղեկություններ են հաղորդում Մլեհ Ռուբինյանի կյանքի և գործունեության մասին, գրեթե ոչինչ չեն նշում հայոց իշխանապետի կրոնական պատկանելիության մասին: Նրանք միայն բավարարվում են՝ նշելով, որ Մլեհը ժամանակին ծառայության մեջ է եղել Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինի մոտ և եղբոր մահվանից հետո վերադարձել է Կիլիկիա և գրավել իշխանությունը[2]:

Ինչպես նկատում ենք, վերջիններիս տեղեկությունների

---

[1] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 273-274, **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, էջ 275, **Յ. Տէր-Ղազարեան,** նշվ. աշխ., էջ 267, **Մ. Յ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 505, **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 389. Հետազոտող Բակուրանի կարծիքով հայոց իշխանապետը գործում էր լոկ հակաքրիստոնեական ոգով, **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 15, ինչպես նաև **S. Dadoyan**, The Armenians in the Medieval Islamic World, Volume II, New Jersey, 2013, p. 163. Թերևս միակ աղբյուրը, որ Մլեհի մասին բարի խոսքերով է հիշում, 1214 թվականին գրված մի հիշատակարան է, որտեղ նա կոչվում է «բարեպաշտն Մեծ Մլեհ», **Գ. Հովսեփյան**, Յիշատակարանք, էջ 769-772:

[2] Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 210-211, Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 218, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Բ, էջ 103 և ուրիշներ:

մեջ չկա Մլեհի ուրացյալ լինելու մասին որևէ փաստարկ: Անդրադառնալով Մլեհի և հայոց եկեղեցու հարաբերություններին՝ մի փոքր այլ ենթատեքստով է խոսում Սմբատ Սպարապետը՝ նա մեղադրում է վերջինիս հակաեկեղեցական մի շարք ամոթալի արարքների մեջ[1], սակայն Սմբատը, այս արտահայտությունից բացի, այլ տեղեկություն չի տրամադրում և չի հստակեցնում, թե որոնք էին այդ ամոթալի արարքները: Եթե անգամ հավատանք Սմբատ Սպարապետի տեղեկությանը և ընդունենք, որ Մլեհը մի շարք հակաեկեղեցական արարքներ է գործել, դա դեռ չի նշանակում, որ հայոց իշխանապետը ուրացող է եղել և դավանել է մահմեդականություն:

Ինչ վերաբերում է մյուս հայ հեղինակներին, ապա նրանցից և ոչ մեկը չի հիշատակում Մլեհ իշխանապետի մահմեդականություն ընդունելու հանգամանքը, թեև նկատում ենք, որ հայ պատմիչների մեծ մասը շատ բացասական է խոսում հայոց իշխանապետի մասին: Նման պարագայում ինչն էր խանգարում մեր պատմիչներին նշելու, որ Մլեհ Ռուբինյանը ուրացել է քրիստոնեական կրոնը և ընդունել մահմեդականություն:

Հետազոտվող խնդրի վերաբերյալ որոշ տեղեկություններ են հաղորդում նաև եվրոպական և արևելյան սկզբնաղբյուրները: Մլեհի ուրացող լինելու մասին ժլատ տեղեկություններ են պահպանվել եվրոպական աղբյուրներում, որոնցում հիշատակություններ կան հայոց իշխանապետի վարած քաղաքականության մասին՝ ընդդեմ խաչակիրների և բյուզանդացիների: Հայտնի էր վերջինիս թշնամությունը Արևելքում հաստատված հոգևոր-ասպետական միաբանությունների դեմ, որոնց հետ մինչև Հալեպի աթաբեկություն մեկնելը մի կարճ ժամանակով համագործակցել էր Մլեհը:

---

[1] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 189-190, նույնի՝ Պատմութիւն, էջ 88-89:

Մլեհ Ռուբինյանի ուրացող լինելու հանգամանքի մասին ուղղակի վկայում է ժամանակակից պատմիչներից Վիլհելմ Տյուրացին: Նա իր հայտնի պատմության մեջ խոսում է նաև Կիլիկիայի հայոց իշխանապետությունում տեղի ունեցող մի շարք քաղաքական իրադարձությունների մասին և հավաստիացնում, որ «Մլեհը, ուրացող լինելով, մի կողմ դրեց Աստծո օրենքը և քրիստոնյաներին այնքան վնասներ պատճառեց, որքան որ կարողացավ»[1]: Սակայն իր աշխատության մեջ՝ մեկ այլ տեղ, հեղինակը, հավանաբար մոռանալով իր հաղորդած նախկին տեղեկությունը, նշում է, որ Մլեհը նույն հավատն էր դավանում և մեծ ատելություն էր տածում իր հավատակիցների նկատմամբ[2]:

Փաստորեն, հիշյալ հեղինակը հակասական տեղեկություններ է հաղորդում հայոց իշխանապետի կրոնական պատկանելիության մասին: Շատ բնական է, որ հեղինակի հաղորդած իրարամերժ տեղեկությունները չեն կարող էական դերակատարում ունենալ խնդրի լուսաբանման համար:

Մլեհի ուրացության մասին է վկայում նաև 13-րդ դարի լատին պատմագիր Առնոլդ Լյուբեկացին[3], որի վկայությունները դարձյալ հավատ չեն ներշնչում, քանի որ վերջինս չունի ոչ մի հիմնավորում: Եվ ընդհանրապես այս հարցում լատին պատմիչների հաղորդած տեղեկությունները անաչառ չեն և ամենայն հավանականությամբ չունեն օբյեկտիվություն, քանի որ վերջիններս տեղյակ էին, թե ինչ ատելություն էր տածում Մլեհը խաչակիրների և բյուզանդացիների նկատմամբ: Այլ աղբյուրների կողմից այդ փաստի վերաբերյալ վկայություններ չկան:

---

1 Տե՛ս Recueil des historiens des Croisades, Historiens occidentaux, tome 1, Paris, 1844, p. 991.

2 Տե՛ս Նույն տեղում:

3 Տե՛ս **Arnold**, Chronica Slavorum, ex recensione, I. M. Lappenbergil, Hannoverae, 1868, p. 23.

Պետք է նշել մի շատ կարևոր հանգամանք: Եթե իրականում Մլեհը ուրանար քրիստոնեությունը, ապա այդ փաստը դժվար թե վրիպեր ժամանակակից մահմեդական և մասնավորապես արաբ պատմիչների ուշադրությունից, որոնք, կարծում ենք, անպայման կարձանագրեին այդ իրողությունը: Սակայն նրանց թողած աշխատություններում որևէ հստակ հիշատակություն չկա այդ մասին: Իսկ սա մի դարաշրջան էր, երբ ասպարեզում գործել են բազմաթիվ հայտնի մահմեդական պատմիչներ, և որոնք, բավական հարուստ տեղեկություններ տալով Կիլիկյան Հայաստանի և հարևան երկրների պատմության, ինչպես նաև առանձին գործիչների մասին, դժվար թե անտեսեին այդ կարևոր հարցը: Դեռ ավելին, Մլեհ Ռուբինյանի դավանական պատկանելիության մասին խոսելիս արևելյան շատ հեղինակներ նշում են, որ նա քրիստոնյա էր: Որպես ապացույց բերենք մի քանի պատմիչների վկայությունները:

Մեզ հետաքրքրող խնդրին անդրադարձել է միջնադարյան պատմիչներից Իբն ալ-Ասիրը: Իր հայտնի աշխատության մեջ, անդրադառնալով Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինի գործունեությանը, նա նշում է, որ Հալեպի տիրակալը հպարտանում էր, որ Մլեհին օգտագործում է իր կրոնի մարդկանց դեմ պայքարելու համար[1]: Իսկ մեկ այլ տեղում էլ տեղեկացնում է, որ նա միակ քրիստոնյա իշխանավորն էր, որ երբևիցե արժանացավ նման պատվի[2]:

Իբն ալ-Ասիրը ստուգապատում հեղինակ է, հստակ արձանագրում է, որ Մլեհը դավանել է քրիստոնեական կրոնը: Ուրեմն՝ կասկածից վեր է, որ եթե Մլեհը ընդունած լիներ մահմեդականութուն, ապա այդ փաստը կարձանագրվեր պատմիչի կողմից: Նշենք նաև, որ Իբն ալ-Ասիրը միակ արևելյան հեղինակը չէ, ով անդրադարձել է այս խնդրին:

---

[1] Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 263:

[2] Տե՛ս Նույն տեղում:

Եվ վերջապես Մլեհ իշխանապետի քրիստոնյա լինելու մասին վկայում է նաև արաբ հեղինակ ալ-Դահաբին, ում տարեգրության մի հատված ներկայացված է Կ. Մութաֆյանի աշխատության մեջ: Այստեղ հեղինակը շեշտում է, որ Սսի թագավորության վրա հարձակվելու համար Նուր ադ-Դինը օգտվում է Լևոնի որդի Մլեհի ծառայություններից, որը հայ քրիստոնյա մի պարոն էր[1]:

Ինչպես նկատում ենք, մահմեդական հեղինակները, հակառակ կաթոլիկ պատմիչների տեղեկությունների, հստակ արձանագրում են, որ հայոց իշխանապետը քրիստոնյա է եղել, և կարծում ենք, որ նրանց բերած տեղեկությունը ավելի օբյեկտիվ է և արտացոլում է պատմական ճշմարտությունը Մլեհի քրիստոնյա լինելու վերաբերյալ:

Վերը նշված խնդրի շուրջ մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն նաև մի շարք այլ տեսակետներ: Հետազոտողների մի որոշակի խումբ խոսում է Մլեհի գործունեության մասին, սակայն որևէ խոսք չի նշում վերջինիս դավանանքային պատկանելության վերաբերյալ: Հետազոտողների երկրորդ խումբը կարծիք է հայտնում, որ Մլեհը ուրացող է եղել: Այդ ուսումնասիրողներից կարելի է առանձնացնել Ս. Պապիկյանին[2], Ռընե Գրուսեին[3], Յ. Տեր-Ղազարյանին[4], Յ. Յովհաննիսյանին[5], Ս. Ռենսիմանին[6], Ս. Դադոյանին[7] և ուրիշների: Ս. Դադոյանը նշում է, որ Մլեհը նախ միա-

---

[1] Տե՛ս **Al-Dahabi**, Les dynastes I Islam, extraits (1055-1258), Damas, 1979, p. 148, հղումը կատարված է **Կ. Մութաֆյանի** Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում աշխատությունից, էջ 396:

[2] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 273-274:

[3] Տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, էջ 275:

[4] Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 267:

[5] Տե՛ս **Մ**. **Յ. Յովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 505:

[6] Տե՛ս **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 389:

[7] Տե՛ս **S. Dadoyan**, նշվ. աշխ., էջ 163: Թերևս այստեղ մի անհասկանալի տեսակետ է հայտնում Բակուրանը, ով հստակ չի նշում, թե արդյոք Մլե-

ցավ Նուր ադ-Դինին, ապա ընդունեց իսլամ և միայն դրանից հետո նշանակվեց Կուրիս քաղաքի և նրա շրջակա տարածքների ղեկավար[1]: Այս հեղինակները հենվում են իսլամական դավանաբանության այն դրույթի վրա, որ իսլամ դավանող բնակչությանը կարող էր ղեկավարել միայն նույնադավան առաջնորդը: Պետք է նշել մի կարևոր հանգամանք ևս: Այս տեսակետի կողմնակից գրեթե բոլոր հետազոտողները, այդ թվում և Ս. Դադոյանը չեն նշում այն սկզբնաղբյուրները, որոնցից օգտվել են:

Եվ վերջապես հետազոտողների երրորդ խումբը գտնում է, որ Մլեհ Ռուբինյանի ուրացող լինելու մասին որոշ ուսումնասիրողների պնդումները սխալ են և չեն կարող արժանահավատ լինել: Այստեղ մենք կցանկանայինք կանգ առնել մի քանիսի առաջ քաշած տեսակետների վրա:

Քննվող հարցին առաջիններից մեկը՝ արձագանքել է հայտնի հայագետ Ղևոնդ Ալիշանն է արձագանքել, որն իր աշխատությունում նշում է, որ Մլեհը չի ուրացել քրիստոնեությունը և դարձել մահմեդական. «Վասն զի որքան ալ գործովք անկարգ և անկրօն էր՝ յայտնապէս ուրացած չէր զքրիստոնեութիւն»[2]: Որպես ապացույց անվանի հայագետը նշում է այն փաստը, որ հայոց իշխանապետը Նուր ադ-Դինի հետ դրամ է հատել, որի մի երեսին խաչի նշան է եղել. «Գտուած քանի մը դրամոց վրայ խաչի նշանն ալ այս բանիս հաւաստիքն կարծու»[3]: Սա հստակ ապացուցում է, որ Մլեհ Ռուբինյանը ուրացյալ չի եղել և դավանել է քրիստոնեությունը: Հաջորդ հետազոտողը, որը որոշակի անդրադարձ է կա-

---

իը ընդունել էր մահմեդականությունը, թե ոչ, սակայն կարծիք է հայտնում, որ հայոց իշխանապետը գործում էր լրկ հակաքրիստոնեական ոգով, Բակուրան, **(Վ. Քիւրճեան)** նշվ. աշխ., էջ 15:

1 Տե՛ս **S. Dadoyan**, նույն տեղում:

2 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ իւր, էջ 327:

3 Տե՛ս Նույն տեղում:

տարել ուսումնասիրվող հարցին, Լ. Տեր-Պետրոսյանն է: Նա անհիմն է համարում հայոց իշխանապետի ուրացյալ լինելու տեսակետը և իր աշխատությունում նշում է. «Նրա կողմից քրիստոնեության դեմ գործած դավաճանության կամ «հայ ժողովրդի զգացումները» վիրավորած լինելու մասին խոսք անգամ չի կարող լինել, քանի որ հայ իշխանի վարքագիծը թելադրված էր զուտ քաղաքական պրագմատիզմով»[1]: Եվ վերջապես Մլեհ Ռուբինյանի ուրացող լինելու հանգամանքի մասին խոսում է նաև ժամանակակից հետազոտողներից Կ. Մութաֆյանը: Պատասխանելով մի շարք հետազոտողների՝ նշում, որ նրա ուրացյալ լինելու վարկածը այդքան էլ միանշանակ չէ[2]: Այլ կերպ ասած՝ հետազոտողը հասկանում է, որ Մլեհի ուրացող լինելու հանգամանքի վերաբերյալ կողմնակիցները չունեն որևէ գիտական հիմնավորում:

Կարելի է միանշանակ համաձայնվել Մլեհի ուրացումը մերժող հետազոտողների կարծիքների հետ, քանզի վերջիններիս առաջ քաշած պնդումները շատ տրամաբանական են: Դրա օգտին են խոսում մի շարք այլ փաստեր, որոնցից մի քանիսին կցանկանայինք անդրադառնալ.

1. Մլեհը իր կառավարման ժամանակաշրջանում կառուցեց Մեծքարի նշանավոր վանքը, ընծաներ մատուցեց և հովանավորչություն ստանձնեց այդ նշանավոր կենտրոնի նկատմամբ, որի մասին ուղղակի վկայություն կա ԺԳ դարի հիշատակարաններից մեկում. « Բարեպաշտ մեծն Մլեհն շինեալ էր՝ զիռչակաւոր անապատս Մեծքար եւ զմեծ եկեղեցին յանունն Տիրամորն…»[3]: Այստեղ շատ բնական հարց կարող է առաջ գալ: Միթե Մլեհ Ռուբինյանի այդ գործունեությունը ուրացյալ անձնավորության գործելաոճ կարող էր լինել:

---

[1] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 146-147:

[2] Տե՛ս **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 395:

[3] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 88:

2. Դժվար է պատկերացնել, որ 12-րդ դարի 70-ական թվականների սկզբին Կիլիկիայի հայոց պետության վերնախավը կհամաձայնվեր հայոց իշխանապետության ղեկավարումը հանձնել մի անձնավորության, ով ուրացող էր, նույնիսկ այն պարագայում, երբ նրա թիկունքին կանգնած էր Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինը:
3. Հայոց իշխանապետը ամուսնացած է եղել Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի քրոջ՝ Սիրուհու, հետ: Դժվար է պատկերացնել, որ Մլեհը, լինելով մահմեդական, կկարողանար ամուսնանալ Պահլավունիների այդ նշանավոր գերդաստանին պատկանող կնոջ հետ:
4. Կիլիկիայի հայկական իշխանապետության և Հալեպի աթաբեկության կողմից հատված են եղել դրամներ, որոնց մի երեսին խաչի նշան է եղել, ինչը նույնպես հաստատում է մեր պաշտպանած վարկածը:
5. Մլեհ իշխանապետի սպանությունից հետո նրան թաղեցին հենց իր իսկ կառուցած Մեծքարի վանքի տարածքում[1]: Կասկածից վեր է այն հանգամանքը, որ ուրացողին չէին թաղի Կիլիկիայի տարածքում գտնվող վանական համալիրի բակում:

Այս, ինչպես նաև մի շարք հետազոտողների առաջադրած փաստարկները և աղբյուրագիտական տվյալները միանշանակ վկայում են, որ հայոց իշխանապետ Մլեհի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ եղած այն կարծիքները, թե իբր վերջինս ուրացող է, իրականությանը չեն համապատասխանում և որևէ կապ չունեն պատմական ճշմարտության հետ:

---

1 Տե՛ս **Հ. Ոսկյան**, նշվ. աշխ., էջ 246-247:

3.2 Մլեհի միջամտությունը 1173 թվականի հայոց կաթողիկոսի ընտրություններին:

Հայոց իշխանապետի պաշտոնավարման սկզբնական շրջանում հայոց կաթողիկոսն էր միջնադարի մեծ հոգևորական, քաղաքական և գրական գործիչ Ներսես Շնորհալին (1166-1173): Մի անձնավորություն, ով մեծ անուն թողեց Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեջ: Մաղաքիա Օրմանյանը փաստում է, որ Մլեհը իր կառավարման ժամանակաշրջանում չի միջամտել Ներսես Շնորհալու գործունեությանը. «Ներսէսի մնացեալ կեանքը Մլեհի իշխանապետութեան ժամանակակից եղաւ, բայց ոչ Մլեհէ դիւրութիւն մը ստացաւ, եւ ոչ Մլեհ Ներսէսի եկեղեցական գործերուն միջամտեց...»[1]: Հավանաբար դրա հիմքում կարող էր ընկած լինել այն հանգամանքը, որ Ներսես Շնորալին մեծ համբավ ունեցող հոգևորական էր, և հայոց իշխանապետը վստահում էր նրան: Մյուս կողմից էլ, անշուշտ, 1170-ական թվականների սկզբներին Մլեհը զբաղված էր ինչպես սեփական իշխանության ամրապնդմամբ, այնպես էլ Կիլիկիայի հայկական իշխանապետության ընդարձակման գործով և այդ պատճառով չէր միջամտում կաթողիկոսարանի գործերին:

Ցավոք, միջնադարյան սկզբնաղբյուրները, որոնք հիմնականում խոսում են քաղաքական անցուդարձերի մասին, գրեթե ոչինչ չեն նշում հայոց իշխանապետի և Ներսես Շնորհալու հարաբերությունների մասին, սակայն 12-րդ դարի 70-ական թվականների սկիզբը պատմական այն ժամանակաշրջանն է, երբ հայոց կաթողիկոսարանը ակտիվ գործունեություն է ծավալել միջեկեղեցական հարաբերություններում, և հնարավոր չէ, որ հայոց կաթողիկոսը և Մլեհ իշ-

[1] Տե՛ս **Մ. Օրմանյան**, հ. Ա, սյուն 1660:

խանապետը որոշ դեպքերում չհամաձայնեցնեին իրենց գործողությունները: Վերը նշված շրջանում Բյուզանդական կայսրությունը շարունակում էր եկեղեցիների միավորման շուրջ տարվող բանակցությունները և այդ նպատակին հասնելու համար նա պատվիրակություններ էր ուղարկում Հռոմկլայի կաթողիկոսարան՝ եկեղեցիների միավորման հարցի շուրջ բանակցելու: Ամենայն հավանականությամբ Մլեհ իշխանապետը նշված հարցում սատարել է մեր եկեղեցու նվիրապետների քաղաքականությանը և դեմ է եղել եկեղեցիների միավորմանը:

Հավանաբար կաթողիկոսի վարած քաղաքականությունից դժգոհ չի եղել հայոց իշխանապետը և չի խանգարել նրա գործունեությանը: Բնական է, որ թե՛ Մլեհ Ռուբինյանի և թե՛ Հալեպի աթաբեկության շահերից չէր բխում, որ հայոց եկեղեցին միավորվի բյուզանդական եկեղեցու հետ: Չի բացառվում, որ Հռոմկլայի կաթողիկոսարանի հարաբերությունները հարևան երկրների եկեղեցիների ղեկավարների հետ գտնվել են նաև հայոց իշխանապետի ուշադրության կենտրոնում, քանի որ բուն Հայաստանում պետականության բացակայության պայմաններում Ռուբինյանների իշխանությունը հայությանը համախմբող մի տիրույթ էր: Ավելացնենք նաև, որ Պահլավունիների դինաստիայի ներկայացուցիչների մի մասը Ռուբինյանների հետ կապված էր նաև խնամիական կապերով, իսկ Հռոմկլայի կաթողիկոսարանը համեմատաբար անկախ կառույց էր, չէր մտնում Ռուբինյանների հայկական իշխանության տարածքի մեջ և կարող էր որոշ հարցերում չենթարկվել նրան:

Ներսես Շնորհալին մահացավ 1173 թվականին՝ իր հաջորդներին թողնելով մի հարուստ ժառանգություն. «Ի թուին հայոց ՈԻԲ (1173) ի յաւգուստոս ժգ (13)ի հինգշաբթի փոխեցաւ առ Քրիստոս սրբազան կաթողիկոսն հայոց տէր Ներ-

սէս...»[1]: Ներսես հայրապետի մահը մեծ վիշտ էր մեր ժողովրդի և եկեղեցու համար, քանի որ նա մեծ անուն թողեց Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեջ: Եվ ընդհանրապես, ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում նրա նման հոգևորական շատ քիչ եղավ:

Նշենք, որ Ներսես Շնորհալու մահվանից առաջ հայոց կաթողիկոսը իրեն հաջորդ էր նշանակել իր եղբոր՝ Վասիլի որդուն՝ Գրիգոր Դ Տղային, որ մեծացել էր Հռոմկլայի կաթողիկոսարանում, կրթություն ստացել, եղել էր Շնորհալու օգնականը, մասնակցել հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին[2] և մի շարք այլ կարևոր իրադարձությունների: Այլ խոսքով՝ նա փորձառու հոգևորական էր: Այդ մասին մեզ տեղեկացնում է Սմբատ Սպարապետը. «Եւ գրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յաթոռ նորա զորդի եղբօրն իւր երիցագունի Վասլի զարքեպիսկոպոսն

[1] Տե՛ս Հեթում պատմիչի ժամանակագրություն, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, կազմեց Վ. Հակոբյանը, հ. Ա, Եր., 1951, էջ 76 հ. Բ, Եր., 1956, էջ 59, **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 190, **Կ. Մաթևոսյան**, Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Եր., 2011, էջ 48: Այդ մասին տես նաև՝ **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ժբ դարի 30-70-ական թվականներին, էջ 246, **նույնի** Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը 1165-1178 թթ., էջ 137, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 2002, էջ 787, Հայ մշակույթի նշանավոր գործիչները, 5-18-րդ դարեր, խմբագրությամբ Է. Աղայանի, Ա. Պիվազյանի, Հ. Ժամկոչյանի, Եր., 1976, էջ 244, **Գ. Հակոբյան,** Ներսես Լամբրոնացի, Եր., 1971, էջ 54, **Ե. Պետրոսյան**, Հայ եկեղեցու պատմություն, հնագույն ժամանակներից մինչև 1441 թվականը, Ս. Էջմիածին, 1995, էջ 145:

[2] Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 229-230, **Գ. Հակոբյան**, Գրիգոր Տղա, Էջմիածին ամսագիր, 1964, էջ 23-24, Հայ եկեղեցու հանրագիտարան, Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Պրակ Ա, Եր., 2008, էջ 56:

տէր Գրիգոր, մականուն Տղայ.»[1]: Նմանատիպ տեղեկություն հանդիպում ենք նաև 12-րդ դարի գրիչներից Գրիգորի մոտ: Նա ևս հաստատում է, որ հայոց հայրապետը մահվանից առաջ թողել էր կտակ. «Յետ որոյ բազում յուզմունք խռովութեանց ներքոյ եւ արտաքոյ յարեան սակս ոչ հանդիպելոյ ի միջի բարեհռչակեալն անուն տէր Գրիգոր՝ եղբաւրորդի կաթողիկոսին, որում անդարձ կտակն հաստատեալ պահիւր յաւագ կաթողիկոսէն Հայոց Տէր Գրիգորիսէ…»[2]:

Փաստորեն, եթե ճիշտ են պատմիչների տեղեկությունները, ապա Ներսես Շնորհալին իր իրավահաջորդ էր թողել եղբոր տղային, ով պատմության մեջ հայտնի է Գրիգոր Տղա անունով:

Այժմ քննենք այն խնդիրը, թե ինչպես տեղի ունեցավ հայոց կաթողիկոսի ընտրությունը: Վարդան Արևելցին նշում է, որ Գրիգոր Դ Տղան փոխարինում է Ներսես Շնորհալուն Նուր ադ-Դինի օգնությամբ. «Եւ առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտուութեամբ Նորադնին»[3]: Վարդան Արևելցու տեղեկությունները մեզ հետաքրքրող խնդրի մասին բավականին քիչ են, թեև հեղինակը հստակ նշում է, որ Ներսես Շնորհալու եղբորորդի Գրիգոր Տղան բազմել է հայոց կաթողիկոսի աթոռին Հալեպի տիրակալ Նուր-ադ-Դինի աջակցությամբ: Հետաքրքիր է նաև այն, որ ինչպես Կիլիկիայի հայոց իշխանապետության, այնպես էլ Հռոմկլայի կաթողիկոսարանի պատմության մեջ առաջին դեպքն է, երբ հայոց կաթողիկոսի ընտրությանը միջամտում է մահմեդական տիրակալը: Թեև պատմիչը այլ մանրամասներ չի հաղորդում վերը նշված դեպքի առնչությամբ, սակայն պարզ է մեկ հանգամանք, որ եթե նա նշում է Նուր ադ-Դինից աջակցություն

---

[1] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 191:

[2] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., էջ 212-213:

[3] Տե՛ս **Վարդան Արևելցի**, էջ 132:

ստանալու փաստը, ապա շատ հավանական է, որ Հալեպի տիրակալը այդ գործողություններն իրականացրել է հայոց իշխանապետի խնդրանքով, քանի որ Հռոմկլայի կաթողիկոսարանը գտնվում էր իր իշխանության ենթակայության ներքո: Մյուս կողմից էլ Հռոմկլայի կաթողիկոսարանում եթե խնդրահարույց իրավիճակ չստեղծվեր, ապա ինչու այդ գործին պետք է խառնվեր Հալեպի տիրակալը: Ամեն դեպքում պատմիչը, բացի վերը նշված տողերից մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ այլ հաղորդում չի տրամադրում:

Ուսումնասիրվող խնդրի շուրջ որոշակի տեղեկություններ է տրամադրում նաև Սմբատ Սպարապետը իր հայտնի «Տարեգիրք» աշխատությունում[1]: Հեղինակը նշում է, որ կաթողիկոս Ներսես Շնորհալին իրեն հաջորդ էր նշանակել Գրիգոր Դ Տղային, որին էլ որոշ ժամանակ անց օծում են որպես հայոց կաթողիկոս. «Ի թուին ՈԻԲ (622=1173) սուրբ լուսաւորիչ հայրապետն տէր Ներսէս փոխի մահուամբ առ Քրիստոս, ժգ-ն օգոստոսի, սուգ մեծ թողլով եկեղեցեաց Հայաստանեաց. և գրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յաթոռ նորա զորդի եղբօրն իւրոյ երիցագունի Վասլի. զարքեպիսկոպոսն տէր Գրիգոր, մականուն Տղայ»:[2]: Եթե ուշադիր հետևենք Սմբատ Սպարապետի հաղորդմանը, ապա կնկատենք, որ նրա տեղեկությունները, ի տարբերություն Վարդան Արևելցու, մի փոքր տարբեր են: Սմբատ Սպարապետը խոսում է Ներսես Շնորհալու մահվան և Գրիգոր Դ Տղայի կաթողիկոս դառնալու մասին, սակայն չի հիշատակում Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի անունը և ընդհանրապես վերջինիս միջամտությունը կամ աջակցությունը Գրիգոր Դ Տղային: Նմանատիպ տեղեկության հանդիպում ենք նաև 1174 թվականին Գրիչ Գրիգորի Հռոմկլայում արտագր-

---

1 Տե՛ս **Սմբատ Սպարապետ,** Տարեգիրք, էջ 191:

2 Տե՛ս **Նույն տեղում**:

ված Ավետարանի հիշատակարանում[1]:

Փաստորեն, Սմբատ Սպարապետն էլ Վարդան Արևելցու նման բավարարվում է կցկտուր տեղեկատվությամբ՝ հետազոտողներին դնելով բարդ իրավիճակի մեջ: Չի բացառվում այն հանգամանքը, որ պատմիչներ Սմբատ Սպարապետը և գրիչ Գրիգորը իմացել են այդ դեպքերի մասին, բայց չեն ցանկացել եղելությունը գրի առնել իրենց աշխատություններում:

Կարծում ենք, որ մինչ Գրիգոր Դ Տղայի կաթողիկոս դառնալը ամենայն հավանականությամբ տեղի են ունեցել մի շարք կարևոր դեպքեր և իրադարձություններ: Մեր հետազոտության համար եզակի կարևոր նշանակություն ունեն պատմիչ Միքայել Ասորու տեղեկությունները, որոնց համաձայն՝ Ներսես Շնորհալու մահվան պահին Գրիգոր Տղան Հռոմկլայի կաթողիկոսարանում չէր. նա հայրապետական հանձնարարականով գտնվում էր Կիլիկիայի հայոց իշխանապետությունում: Ուստի և Ներսես Շնորհալին ստիպված կաթողիկոսական մատանին հանձնեց իր ազգականներից մեկ ուրիշին՝ Գրիգոր Ապիրատին. «Իսկ տէր Ներսէս կայր երկու եղբօր որդի եպիսկոպոսունք. և աւագ եղբօր որդին չէր մերձ մահու հօրեղբօրն, և կրտսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ կաթողիկոս»[2]: Գրիգոր Ապիրատը կաթողիկոսի մյուս եղբոր՝ Շահանի որդին էր:

Ինչպես նկատում ենք, Միքայել Ասորի պատմիչը, ի տարբերություն Վարդան Արևելցու և Սմբատ Սպարապետի, ավելի շատ և հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ: Մ. Օրմանյանը կարծիք է հայտնում, որ Գրիգոր Դ Տղան այդ պահին հայրապետական հանձնարարականով գտնվում էր Կիլիկյան

---

[1] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 216:

[2] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 472:

Հռոմկլա

Հայաստանում և փորձում էր հաշտեցնել միմյանց դեմ պատերազմող Մլեհ Ռուբինյանին և Լամբրոնի Հեթումյան-ներին, որոնց պայքարն անշուշտ վնասում էր Կիլիկիայի հայկական պետության հեղինակությանը և հետագա զար-գացմանը: Միջնադարյան մյուս պատմիչների երկերում նշված դեպքի կապակցությամբ նոր և էական տեղեկութ-յուններ չենք հանդիպում:

Այսպիսով՝ Գրիգոր Տղայի բացակայության պայմաննե-րում կաթողիկոսի գործառույթները անցնում են Գրիգոր Ա-պիրատին: Այս հանգամանքը առաջ է բերում հորեղբոր որ-դու՝ Գրիգոր Տղայի դժգոհությունը, ում պատկերացմամբ ոտնահարվել էին իր օրինական իրավունքները: Երբ Գրիգոր Տղան վերադառնում է կաթողիկոսանիստ Հռոմկլա, Գրիգոր Ապիրատը հրաժարվում է ընդունել նրան: Միգուցե Գրիգոր Ապիրատին հաջողվեր ամուր նստել կաթողիկոսական աթո-ռին, եթե գործին չմիջամտեր հայոց իշխանապետ Մլեհը և Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինը:

Գրիգոր Տղան չի հաշտվում դեպքերի նման ընթացքին և իր ոտնահարված իրավունքները պաշտպանելու համար քայլեր է ձեռնարկում: Ում պետք է դիմեր Գրիգոր Դ Տղան, իր իրավունքները պաշտպանելու համար, եթե ոչ հայոց մեծ իշխանապետին: Մի կողմից նա ներկայացնում էր Կիլիկիայի հայոց իշխանապետությունը, մյուս կողմից էլ հայոց իշխա-նապետն ամուսնացած էր Գրիգոր Տղայի քրոջ հետ: Նշված շրջանում դժվար է պատկերացնել Կիլիկյան Հայաստանում և շրջակա տարածքներում հայությանը հուզող որևէ կարե-վոր հարց, որ լուծվեր առանց Մլեհ իշխանապետի համաձայ-նության: Այդ մասին Միքայել Ասորին հետևյալն է նշում. «Եւ յորժամ լուաւ զայն աւագն. եկն ի կլայն կաթողիկոսութեան, և ոչ թողին ըզնա ի բերդն. և նա գնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Մլեհն. և Մլեհն էառ զնա և տարաւ առ Նո-

րադինն, և նորին օգնութեամբ՝ եմոյծ զնա ի Հռոմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետութեան հօրեղբօրն՝ Գրիգոր ա-նուն»[1]: Միքայել Ասորու տեղեկությունը հաստատում է նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը, ով ևս հաս-տատում է, որ Գրիգոր Դ Տղան հայոց կաթողիկոսական ա-թոռին է բազմել Մլեհ իշխանապետի միջնորդությամբ և Նուր ադ-Դինի հրամանով. «Եկն Էրէց եղբաւր որդի վայելչա-գեղն Գրիգորիս եւ ի ձեռն Մլեհա իշխանին, հրամանաւ եւ ուժով Նորադին ամիրային եհան զնա եւ նստաւ ինքն»[2]:

Ինչպես երևում է, Գրիգոր Տղան դիմում է փեսային՝ Մլեհ իշխանապետին, որը իր աներորդու շահերից ելնելով, միջամտում է կաթողիկոսական աթոռի համար պայքարին և լուծում այդ խնդիրը հօգուտ Գրիգոր Տղայի:

Հայ առաքելական եկեղեցու գահակալի ընտրությունը կատարվում էր հայոց եկեղեցու եպիսկոպոսների և աշխար-հիկ անձանց կողմից: Եթե հավատալու լինենք միջնադար-յան պատմիչների տեղեկություններին, ապա պետք է կար-ծել, որ Գրիգոր Ապիրատը ապօրինի է բազմել կաթողիկոսա-կան գահին, քանի որ Ներսես Շնորհալին իրեն իրավահա-ջորդ էր հայտարարել Գրիգոր Տղային, և միայն հանգա-մանքների բերումով է կաթողիկոսը մատանին տվել Գրիգոր Ապիրատին: Հավանաբար նա չէր ստացել հայ իշխանների համաձայնությունը և ամենայն հավանականությամբ չէր ընտրվել: Միջնադարյան պատմիչների երկերում չեն պահ-պանվել տեղեկություններ այն մասին, թե Շնորհալու մահ-վանից հետո եղե՞լ է արդյոք հայ բարձրաստիճան հոգևորա-կանների մասնակցությամբ ժողով, որտեղ վերջինիս օծել են հայոց կաթողիկոս: Եվ նման պարագայում միայն հայոց իշ-խանապետության ղեկավարը՝ Մլեհը, իր ռազմական *ուժով*

---

[1] Տե՛ս **Նույն տեղում**:

[2] Տե՛ս **Սամվել Անեցի** և **Շարունակողներ**, էջ 231:

*կարող էր հարցը լուծել, քանի որ, ինչպես գիտենք, Հռոմկլան բավական*ին հզոր և ամուր բերդաքաղաք էր, և այն պաշտպանում էին որոշակի քանակությամբ զինվորներ: Բնականաբար, Գրիգոր Տղան իր ուժերով միայնակ չէր կարող օրինական ընթացք տալ խնդրին:

Եթե քննենք Կիլիկիայի հայկական պետության ողջ պատմությունը, ապա հստակորեն երևում է, որ գրեթե միշտ էլ պետական կառավարման համակարգը, այդ թվում հայոց իշխանները, իսկ թագավորության հռչակումից հետո՝ նաև արքաները, թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի կերպով միջամտել են հայոց կաթողիկոսի ընտրություններին, քանի որ դրանք ունեին չափազանց կարևոր նշանակություն ողջ հայության համար: Գրեթե միշտ էլ փորձ է արվել այդ պատասխանատու պաշտոնը տրամադրել այնպիսի մի անձնավորության, որ պետության և եկեղեցու հարաբերությունների հետագա համագործակցությունը մնա բարձր մակարդակի վրա: Ամենայն հավանականությամբ նման կերպ էր գործում նաև Ռուբինյան իշխաններից Մլեհը:

Այսպես՝ հայոց իշխանապետը կաթողիկոսական աթոռի համար առաջացած վեճի և Գրիգոր Ապիրատի բռնած դիրքի պատճառով Գրիգոր Տղային տանում է Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի մոտ և նրան տեղյակ պահում այդ մասին: Եվ միայն Նուր ադ-Դինից հավանություն ստանալուց հետո անցնում գործնական քայլերի: Նրանից օգնական զորք ստանալով՝ գալիս է Հռոմկլա բերդաքաղաք, գրավում այն և գահընկեց անում Գրիգոր Ապիրատին և կաթողիկոսական աթոռին բազմեցնում Գրիգոր Դ Տղային (1173-1193). «Եւ Մլեհն էառ զնա և տարաւ առ Նորադինն, և նորին օգնութեամբ եմոյծ զնա ի Հռոմկլայն և նստաւ յաթոռ հայրապետութեան հօրեղբօրն՝ Գրիգոր անուն»[1]: Նուր ադ-Դինի համաձայնությունը

---

1 Տե՛ս **Միքայէլ Ասորի**, էջ 472:

ստանալը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հռոմկլան գտնվում էր վերջինիս տիրույթներում:

Այժմ տեսնենք այս կապակցությամբ ինչպիսի տեսակետներ կան պատմագիտական գրականության մեջ: Առաջինն այդ խնդրին անդրադարձել է 18-րդ դարի հայտնի պատմաբան Միքայել Չամչյանը: Նա, խոսելով վերը նշված դեպքերի մասին, նշում է, որ Ներսես Շնորհալու թաղումից հետո բազմությունը և ժողովուրդը միաբերան սկսում են աղաղակել և խնդրել, որպեսզի կաթողիկոս օծեն Գրիգոր Տղային[1]: Եվ այդ ժամանակ եպիսկոպոսները, որոնք այնտեղ էին, արժանի համարեցին այդ թեկնածուին, տարան նրան եկեղեցի և օծեցին որպես հայոց կաթողիկոս[2]: Ինչպես նկատում ենք, Միքայել Չամչյանը որևէ տեսակետ Գրիգոր Տղայի և Գրիգոր Ապիրատի պայքարի և Մլեհ իշխանապետի՝ այդ գործում ներգրավված լինելու մասին չի արտահայտում: Հակառակ Մ. Չամչյանի տեսակետի՝ ժամանակակից հետազոտողներից Հ. Միրզոյանը անդրադառնալով այս խնդրին, նշում է, որ Գրիգոր Դ Տղան բավական մեծ դժվարություններով ընտրվեց կաթողիկոս[3]: Դեռ ավելին, Միրզոյանի պնդմամբ Շնորհալու կառավարման վերջին երեք տարիներին, վերջինս, հաշվի առնվելով իր ծերունական հասակն ու ա-

---

[1] Տե՛ս **Միքայել Չամչյանց,** նշվ. աշխ., էջ 111:

[2] Տե՛ս Նույն տեղում:

[3] Տե՛ս **Հ. Միրզոյան**, Նորահայտ փաստեր Գրիգոր Տղայի կյանքի և գործունեության մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1996, թիվ 3, էջ 84, Գրիգոր Դ Տղայի և Գրիգոր Ապիրատի միջև մղված պայքարի մասին տե՛ս նաև՝ **Ա. Հովհաննիսյան**, Մեծ իշխան Մլեհի եկեղեցական քաղաքականության շուրջ, Բազմավէպ հանդէս, Վենետիկ, Սուրբ Ղազար, 2013, թիվ 3-4, էջ 201-211: Վ. Թորոսյանն էլ կարծիք է հայտնում, որ Շնորհալին հետևելով եղբոր կտակին ևս վերահաստատել էր իր եղբորորդու հայրապետական աթոռի ժառանգման իրավունքը, **Վ. Թորոսյան**, Հայոց կաթողիկոսական իշխանությունը, (ԺԱ դարի կեսեր-ԺԲ դարի սկիզբ), Եր., 2018, էջ 103:

ռողջական տկար վիճակը, Գրիգոր Տղային նշանակել էր տեղապահ կամ փոխանորդ՝ օժտելով նրան ազատորեն գործելու լայն իրավունքներով[1]: Այդ տեսակետը պաշտպանում է նաև Գ. Հակոբյանը[2]: Նշյալ խնդրին ավելի մանրամասն անդրադարձել է Մաղաքիա Օրմանյանը: Հետազոտելով խնդիրը՝ նա կասկածանքով է վերաբերվում Միքայել Ասորու այն տեղեկություններին, թե իբր սկզբում Գրիգոր Ապիրատն է բազմել հայոց կաթողիկոսական աթոռին և միայն Մլեհ իշխանապետի, և Նուր ադ-Դինի միջամտությունից հետո է կաթողիկոս օծվել Գրիգոր Դ Տղան[3]: Շարունակելով իր տեսակետը՝ Օրմանյանը որպես ապացույց բերում է այն հանգամանքը, որ հայ ոչ մի պատմիչի աշխատությունում Նուր ադ-Դինի միջամտության մասին խոսք չկա[4]: Եվ վերջում հեղինակն առաջ է քաշում այն տեսակետը, որ մինչև Գրիգոր Դ Տղայի վերադարձը Գրիգոր Ապիրատը ժամանակավորապես զբաղեցրել է հայոց կաթողիկոսի պաշտոնը՝ իր մոտ պահելով կնիքը, և վարել Հռոմկլայի կաթողիկոսարանի գործերը[5]:

Պատմիչ Միքայել Ասորին բավականին արժանահավատ աղբյուր է, քանի որ չուներ որևէ շահագրգռվածություն՝ խեղաթյուրելու փաստերը: Բացի այդ՝ Օրմանյանի պնդումը, որ հայկական աղբյուրներից և ոչ մեկը չի խոսում Նուր ադ-Դինի և Մլեհի միջամտության մասին, իրականությանը չի համապատասխանում, քանի որ Վարդան Արևելցու մոտ կա մի փոքրիկ վկայություն այդ մասին, որ Նուր ադ-Դինը ունեցել է մասնակցություն նշյալ խնդրի հանգուցալուծմանը. «Եւ առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտուութեամբ Նո-

---

1 Տե՛ս Նույն տեղում:

2 Տե՛ս **Գ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 56:

3 Տե՛ս **Մ. Օրմանյան,** հ. Ա, սյուն 1694:

4 Տե՛ս Նույն տեղում:

5 Տե՛ս Նույն տեղում, սյուն 1695:

ռադնին»[1]: Հավանաբար Վարդան Արևելցին ծանոթ է եղել Միքայել Ասորու երկին: Բացի այդ՝ Մլեհի և Նուր ադ-Դինի միջամտության մասին է վկայում նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը[2], ինչպես նաև 12-րդ դարի գրիչներից Գրիգորը, ով ևս հաստատում է այդ իրողությունը»[3]: Եվ վերջապես եթե Գրիգոր Ապիրատը ժամանակավոր զբաղեցրել է հայոց կաթողիկոսի պաշտոնը մինչև Գրիգոր Դ Տղայի վերադարձը, ապա ինչու նա պետք է թույլ չտար Գրիգոր Դ Տղային մտնելու Հռոմկլա, կամ ինչու պետք է Հալեպի աթաբեկությունը միջամտեր այդ գործընթացին:

Եթե նույնիսկ ընդունենք, որ հայկական աղբյուրներում չեն պահպանվել նման տեղեկություններ, դեռ չի նշանակում, որ պայքար չի եղել: Դրա մասին է վկայում այն փաստը, որ պատմական տարբեր իրադարձությունների ժամանակ հայ պատմիչները լռում են, սակայն դրանք լրացվում են օտար հեղինակների հաղորդած տեղեկություններով և լույս սփռում ողջ պատմական իրականությանը:

Ամենայն հավանականությամբ Օրմանյանը չի ցանկացել ցույց տալ, որ կաթողիկոսական աթոռի համար վեճ է առաջացել Պահլավունիների գերդաստանի ներկայացուցիչների միջև, որը և այն աստիճանի է սրվել, որ այդ գործին միջամտել են հայոց իշխանապետ Մլեհը և Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինը: Վերոհիշյալ հիմնահարցի շուրջ իրենց տեսակետներն են հայտնում նաև մի շարք ժամանակակից հետազոտողներ: Այդ մասին խոսում է Վ. Տեր-Ղևոնդյանը, որը, հիմք ընդունելով պատմիչ Միքայել Ասորու տեղեկությունը, կարծում է, որ Գրիգոր Դ Տղան դիմել էր Մլեհ իշխանապետին, որի օգնությամբ կարողացել էր բազմել հայոց կաթողի-

---

[1] Տե՛ս **Վարդան Արևելցի**, էջ 132:

[2] Տե՛ս **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 231:

[3] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., էջ 212:

կոսական գահին[1]: Նույն տեսակետին հարում են նաև Վ. Վարդանյանը[2] և Յ. Քյուրտյանը[3] :

Հետազոտելով միջնադարյան պատմիչների հաղորդած տեղեկությունները, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ գալիս ենք այն եզրակացության, որ կաթողիկոս Ներսես Շնորհալու մահից հետո հայրապետական գահի թափուր տեղի համար պայքար են մղել կաթողիկոսի եղբոր երկու որդիները՝ Գրիգոր Ապիրատը և Գրիգոր Դ Տղան: Ի վերջո Կիլիկյան հայոց իշխանապետ Մլեհի և Նուր ադ-Դինի միջամտությամբ կաթողիկոսական աթոռին բազմել է Գրիգոր Դ Տղան, որը պատմիչների վկայություններով շուրջ 20 տարի ղեկավարել է Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը՝ աչքի ընկնելով մի շարք բնագավառներում: Պատմիչ Միքայել Ասորին Գրիգոր Դ Տղային անվանում է «այր գովելի և գիտնական»[4]: Համաձայն լինելով Միքայել Ասորու տեղեկության հետ՝ ավելացնենք, որ ինչպիսի միջամտություն էլ արած լիներ Մլեհ Ռուբինյանը, փաստ է մեկ հանգամանք, որ նա հովանավորել է ոչ միայն իր տիկնոջ

---

[1] **Վ. Տեր-Ղևոնդյան,** Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 68:

[2] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Գրիգոր Դ Տղա հայրապետը ժամանակի դավանական և քաղաքական խաչուղիներում, Էջմիածին ամսագիր, 2005, թիվ Է-Ը, էջ 85, **Վ. Վարդանյան,** Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Եր., 2008, էջ 156: Ըստ Վ. Վարդանյանի, հնարավոր է, որ Գրիգոր Դ Տղայի և Հալեպի սուլթանի միջև առկա էր որոշակի մերձակցություն, առանց որի հնարավոր չէր վերջինիս կողմից Գրիգոր Դ-ին սատարելը: Դրանում հավանաբար որոշակի նշանակություն ունեցավ նաև Գրիգոր Դ Տղայի քրոջ ամուսնու՝ Մլեհ իշխանապետի և Նուր ադ-Դինի միջև կնքված զինադաշինքը, նույն տեղում:

[3] Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Գրիգոր Տղայ և Սալահ էդ-Դին, Բազմավէպ հանդէս, Վենետիկ, Ս. Ղազար, 1975, թիվ 1-2, էջ 162-164:

[4] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 472-473:

եղբորը, այլև մի արժանի և խելացի հոգևորականի, ով իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրեց հայ ժողովրդին և Հայ Առաքելական եկեղեցուն: Այս կապակցությամբ Հ. Միրզոյանն էլ ավելացնում է, որ Գրիգոր Դ Տղան միջնադարի այն սակավ գործիչներից է, որոնց համբավը իրենց կենդանության ժամանակ դուրս է եկել տեղական շրջանակներից՝ ձեռք բերելով միջազգային ճանաչում[1]: Հանգամանք, որ պատիվ կբերեր տվյալ ժամանակաշրջանում ցանկացած հոգևոր գործչի[2]:

Ինչ վերաբերում է Գրիգոր Ապիրատի ճակատագրին, ապա պետք է նշել, որ ամենայն հավանականությամբ Մլեհի և Գրիգոր Դ Տղայի համաձայնությամբ որոշվեց նրան էլ մասնակից դարձնել հայոց եկեղեցու կառավարմանը և վստահվեց Կիլիկիայի Տարսոնի և Լամբրոնի, ինչպես նաև Կեսարիայի և Անտիոքի թեմերի առաջնորդությունը.«Եւ միւս եղբօրորդին Գրիգորէս, որ և Ապիրատ կոչէր, չոգաւ ի Լամբրօնն և խնամէր զՏարսոնի վիճակն»[3]: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Միքայել Ասորին նշում է, թե միայն իր

---

1 Տե՛ս **Հ. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 77, նույն հետազոտողի համոզմամբ Գրիգոր Դ Տղան կաթողիկոսական աթոռին է բազմել ոչ թե 1173 թվականին, ինչպես նշված է մեր ավանդական գրականության մեջ, այլ ավելի ուշ՝ 1174-1175 թվականների ընթացքում, նույն տեղում, էջ 56:

2 Բացի եկեղեցական խնդիրներին նվիրված նամակներից (թվով 7) գրել է նաև չափածո երկեր, այդ թվում՝ պոեմներ՝ «Յիսուս Քրիստոս Որդի և Բան», «Ողբն վասն առմանն Երուսաղեմի» պոեմները, մանկավարժական գրվածքներ: Հավաքել է արժեքավոր ձեռագրեր Կիլիկիայի վարդապետարանների և դպրատների գրադարանները հարստացնելու համար: Նրա հովանավորությամբ են ստեղծվել Մխիթար Հերացու «Ջերմաց Մխիթարությունը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Ներսես Լամբրոնացու և ուրիշների մի շարք ստեղծագործություններ, տե՛ս Փ. Մեյթիխանյան, նշվ. աշխ., էջ 330, Հ. Քյոսեյան, Ներածություն Հայ Եկեղեցական մատենագրության, Եր., 2018, էջ 375:

3 Տե՛ս **Վարդան Արևելցի**, էջ 132:

միջնորդության շնորհիվ է, որ Գրիգոր Ապիրատը նշանակվել է այդ պաշտոնին: Այս բանակցության արդյունքի մասին մի տեսակետ է հայտնում նաև Ալիշանը, համաձայն որի՝ Մլեհը խոստացավ Գրիգոր Ապիրատին, որ Գրիգոր Դ Տղայից հետո ինքն է լինելու հայոց հայրապետը. «և Ապիրատին խոստացեալ եղև ըստ նախ սահմաններոյն՝ յաջորդել նմա...»[1]: Գրիգոր Ապիրատը երկար ժամանակ առաջնորդեց վերը նշյալ թեմը, իսկ կյանքի վերջին տարիներին (1194-1203) նրան վստահվեց հայոց կաթողիկոսի նվիրապետական աստիճանը: 1198 թվականին Տարսոն քաղաքում հենց նրան վիճակվեց թագավոր օծելու Լևոն Մեծագործին, ինչը կարևոր պատմական իրադարձություն էր թե՛ Կիլիկիայի հայկական պետության, թե՛ հայ առաքելական եկեղեցու և թե՛ ողջ հայության համար: Ավելացնենք նաև, որ Գրիգոր Զ Ապիրատի մահով էլ ավարտվեց Պահլավունի կաթողիկոսների դինաստիան:

Անդրադառնալով Գրիգոր Դ Տղայի կաթողիկոսական գործունեությանը (1173-1193)՝ պետք է նշել, որ վերջինս բարիդրացիական հարաբերություններ էր պահպանում թե՛ Մլեհ իշխանապետի և թե՛ հետագայում Կիլիկյան Հայաստանի մյուս նշանավոր քաղաքական գործիչների՝ Ռուբեն Գ-ի և Լևոն Մեծագործի հետ: Գրիգոր Դ Տղայի աթոռակալման տարիներին գոյություն ուներ սերտ համագործակցություն Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայոց պետության միջև, ինչը կարևոր երևույթ էր: Գրիգոր Դ Տղայի օրոք ձեռնադրվեցին մի շարք եպիսկոպոսներ, որոնցից կարելի է առանձնացնել Ներսես Լամբրոնացուն, ով հետագայում դարձավ Կիլիկյան Հայաստանի ամենահայտնի հոգևորականներից մեկը և բավականին լուրջ մասնակցություն բե-

---

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 57:

րեց նաև Կիլիկիայի հայկական թագավորության կառավարմանը:

Խոսելով Մլեհ իշխանապետի վարած եկեղեցական քաղաքականության մասին՝ պետք է նշել, որ միջնադարյան սկզբնաղբյուրների հաղորդած սակավաթիվ տեղեկություններից իմանում ենք, որ վերջինս իր կառավարման ժամանակաշրջանում զբաղվել է նաև շինարարական աշխատանքներով, բարեկարգել է Հռոմկլայի կաթողիկոսարանի տարածքը: Եվ հենց Մլեհ Ռուբինյանին է վերագրվում նաև Մեծքարի նշանավոր վանքի հիմնումը[1], որը ժամանակի ընթացքում դարձավ Կիլիկիայի հայկական թագավորության անվանի հոգևոր վայրերից մեկը և հետագայում էլ մեծ զարգացում ունեցավ: Այս փաստը վկայում է նրա մասին, որ վերջինս հարգանք էր տածում նաև Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ: Առանձին դեպքերում իր բնավորությանը համապատասխան՝ շատ դաժան է վարվել նաև Կիլիկիայի ներսում գտնվող հոգևորականների նկատմամբ, որն էլ միգուցե առիթ է տվել որոշ հետազոտողների, որ հայոց իշխանապետին բնորոշեն ուրացյալ անունով: Այդ մասին մեզ որոշակի տեղեկություններ են տրամադրում միջնադարյան պատմիչները:

Առաջինը այդ մասին խոսում է Սմբատ Սպարապետը: Նա, իր աշխատության մեջ անդրադառնալով Մլեհ Ռուբինյանին, նշում է, որ հայոց իշխանապետը շատ դաժան է վարվել որոշ հոգևորականների նկատմամբ՝ հանելով վերջիններիս ատամները. «Եւ ձեռնարկեալ յեպիսկոպոսունս՝ ատամնաթափ անէր»[2]: Ցավոք, պատմիչը այս խոսքերից դուրս

[1] Մեծքարի վանքը գտնվում է Սսից ոչ հեռու, Մանուտ գավառում, Բերդուսից արևմուտք, այդ մասին տես **Հ. Ոսկյան,** նշվ. աշխ., էջ 246: Հոր սպանությունից հետո Գևորգ իշխանը վանքը նոր ճոխություններով զարդարեց, **Յ. Տեր-Ղազարեան**, նշվ. աշխ., էջ 55:

[2] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 189-190:

որևէ այլ մեկնաբանություն չի անում: Այն, որ հայոց իշխանապետի քայլը շատ դաժան էր, դա միանշանակ է, սակայն մյուս կողմից էլ միգուցե նրա այս քաղաքականությունը վերաբերել է սոսկ առանձին դեպքերի: Շարունակելով վերը նշված խնդրի մասին քննարկումը՝ նշենք, որ Սմբատը միակ պատմիչը չէ, որ անդրադառնում է Մլեհ իշխանապետի դաժանություններին: Այդ մասին խոսում են նաև օտարազգի պատմիչները: Միքայել Ասորին և Աբուլ Ֆարաջը ավելացնում են, որ նա էլ ավելի դաժան արարքներ է կատարել. փորել էր տալիս եպիսկոպոսների և մեծամեծների աչքերը, կտրում ընդդիմախոսների ձեռքերն ու ոտքերը[1]:

Փաստորեն՝ կարելի է եզրակացնել, որ վերջինս դաժան է եղել ոչ միայն աշխարհիկ գործիչների, այլև հոգևորականության նկատմամբ: Իսկ ինչով կարելի է բացատրել հայոց իշխանապետի նման գործելաոճը: Ամենայն հավանականությամբ նա փորձում էր նման քայլերով վախ ներշնչել թե՛ իշխանների, թե՛ մանր ազնվականների և թե՛ Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ, որպեսզի չհանդգնեն դեմ դուրս գալ իր կենտրոնաձիգ քաղաքականութանը, եկեղեցին դարձնել իրեն հնազանդ կառույց: Մլեհ իշխանապետի նման քաղաքականությունն իր դեմ տրամադրեց ոչ միայն Կիլիկյան Հայաստանի հոգևորականներից շատերին, այլև աշխարհիկ ավատատերերին:

Դժբախտաբար Մլեհ իշխանապետի կառավարման վերջին մեկուկես տարիներին իր և Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի հարաբերությունների պատմության մասին միջնադարյան պատմիչների երկերում տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ Հռոմկլայի կաթողիկոսարանը և անձամբ Գրիգոր Դ Տղան ակտիվ կերպով շարունակել են այն որդեգրած քաղաքականությունը, ինչը սկսվել էր

---

[1] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ, 454, **Bar Habraeus**, էջ 305.

դեռևս Ներսես Շնորհալու կաթողիկոսության տարիներից[1]: Ինչ վերաբերում է անձամբ Մլեհ իշխանապետի և կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի հետագա հարաբերություններին, ապա պետք է նշել, որ, ամենայն հավանականությամբ, նրանց միջև էական խնդիրներ կամ էլ տարաձայնություններ չեն ծագել, և հարկ եղած դեպքում վերջիններս համագործակցել են միմյանց հետ՝ հանուն Կիլիկիայի հայկական պետության զորեղացման, այլապես դրանք դժվար թե, վրիպեին ժամանակակից հայ և օտարազգի պատմիչների ուշադրությունից: Եվ վերջապես Մլեհի կառավարման տարիներին մենք չենք նկատում բյուզանդական կայսրության կրոնական ճնշումները Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայոց պետության նկատմամբ: Կարծում ենք, որ դա պայմանավորված էր հայոց իշխանապետի հզոր պետական գործիչ լինելու հանգամանքով, և հստակ կարող ենք փաստել, որ Մլեհի կառավարման ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունը հրաժարվեց ոչ միայն Կիլիկիայի ինքնուրույնության վերացման քաղաքականությունից, այլև ժամանակավորապես նախանձեց եկեղեցիների միավորման գաղափարից:

[1] Տե՛ս **Ն. Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2001, էջ 360:

Գլուխ չորրորդ

ՄԼԵՀ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

4.1 Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականության շրջադարձը:

Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականության պատմությունը խիստ կարևորվում է և առանձնահատուկ տեղ է գրավում հատկապես 12-րդ դարի երկրորդ կեսերից: Այս ժամանակաշրջանում հայկական պետությունը միջազգային բարդ իրավիճակում էր: Մի կողմից Կիլիկիայի հայոց պետության զորեղացմանը դեմ էր Բյուզանդական կայսրությունը, որի տիրապետության տակ էր Կիլիկիայի հայոց իշխանապետությունը, մյուս կողմից էլ Արևելքում ակտիվացել էին խաչակրաց իշխանությունները: Չափազանց կարևոր էին նաև Կիլիկիային սահմանակից մահմեդական պետությունների հետ հարաբերությունները, քանզի տարածաշրջանում դեռևս բավական ազդեցիկ էին թե՛ Իկոնիայի սելջուկյան և թե՛ հատկապես Եգիպտոսի սուլթանությունները:

Քաղաքական նման խառը պայմաններում 1170 թ. սկըսած՝ հայկական պետությունը ղեկավարում էր իշխանա-

պետ Մլեհը (1170-1175)՝[1], Ռուբինյան դինաստիայի աչքի ընկնող ներկայացուցիչը, որն առանձնանում էր պետական գործչին հատուկ հատկանիշներով: Վերջինս իր գործունեության ընթացքում լուրջ ձեռքբերումներ ունեցավ Կիլիկիայի պետության արտաքին քաղաքականության մեջ:

Նշենք, նաև որ միջնադարյան մի շարք պատմիչներ, որոնց ճնշող մեծամասնությունը հոգևորականներ են, բացասական կարծիք են հայտնում Մլեհ իշխանապետի վարած արտաքին քաղաքականության մասին: Այս խնդրի վերաբերյալ իր տեսակետն է հայտնում հետազոտողներից Ժ. դը Մորգանը, ում կարծիքով Մլեհ Ռուբինյանն այն քաղաքական գործիչն էր, որ հասկացավ, թե խաչակիրների «բարեկամությունը» մեկուսացնում է Ռուբինյանների պետությունը, վիհ փորում նրա և հարևանների միջև[2]: Եվ դրա համար էլ որոշեց փոխել Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականության ուղղությունը և համագործակցեց տարածաշրջանի մահմեդական պետությունների հետ: Գ. Հակոբյանը կարծիք է հայտնում, որ Մլեհը ստիպված էր բարեկամական հարաբերությունների մեջ մտնել հարևան, նույնիսկ ոչ քրիստոնյա պետությունների հետ՝ երկրի անկախությունը փրկելու համար[3], որը կարծում ենք ճիշտ տեսակետ է:

Ամեն դեպքում փաստ է՝ Մլեհը, որ մինչև հայոց իշխանապետ դառնալը ծառայության մեջ էր գտնվում Հալեպի ա-

---

[1] Տե՛ս **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 135, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Բ, էջ 102-103, **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 189: Այդ մասին տես նաև՝ **C. Mutafyan**, The Brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisyan and S. Payaslian, California, 2008, p. 97, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 683:

[2] Տե՛ս **J. de Morgan**, Histoire de peuple arménienne, Paris, 1919, p. 171.

[3] Տե՛ս **Գ. Հակոբյան**, Գրիգոր Տղա, Էջմիածին հանդես, 1964, ԺԲ, էջ 23-27:

թաբեկությունում, վերադառնալով Կիլիկիա, սկսում է վարել լիովին նոր արտաքին քաղաքականություն, ինչը հաջողություններ է բերում Կիլիկիայի հայկական իշխանապետությանը: Անշուշտ, շատ հետաքրքիր է պարզել, թե ինչպիսի կարգավիճակ ուներ Մլեհը Կիլիկիայի իշխանապետության ղեկավարի աթոռին բազմելուց հետո: Կարծում ենք, որ նա ժամանակին եղել էր Նուր ադ-Դինի վասալը, գալով Կիլիկիա՝ դարձել է նրա դաշնակիցը:

Բազմելով հայոց իշխանապետի աթոռին՝ Մլեհը երբեք չդարձավ Նուր ադ-Դինի կույր գործիքը: Ճիշտ է, հայոց իշխանապետը շարունակում էր համագործակցությունը Հալեպի տիրակալի հետ, սակայն նա խելամտորեն օգտագործեց վերջինիս հնարավորությունները՝ սեփական նպատակներին հասնելու համար: Մլեհը արեց այն, ինչը շատ քչերին էր հաջողվել. ուժեղ հարևանի մեջ նա տեսավ ոչ թե հովանավորի, այլ դաշնակցի և վերջինիս ուժը խելացի կերպով ծառայեցրեց իր շահերին:

Թեև Մլեհի վարած նոր արտաքին քաղաքականությունը որոշ առումով ցնցող բացառություն էր իր դինաստիայի պատմության մեջ, սակայն բխում էր ժամանակի հայոց պետության շահերից: Ինչպես նշում է Լ. Տեր-Պետրոսյանը, Կիլիկիայի հայ իշխանների գոնե կեսը նշյալ ժամանակահատվածում չէր կարող չհասկանալ հայոց պետության շուրջ ստեղծված միջազգային բարդ իրավիճակը, երբ հատկապես ակտիվացել էին Բյուզանդական կայսրությունը, Իկոնիայի սուլթանությունը, Դանիշմանյան էմիրությունը, Հալեպի աթաբեկությունը, Անտիոքի իշխանապետությունը և այլ պետություններ[1]: Եվ նրանք լավ էին պատկերացնում, թե ինչպիսի վտանգներ էր պարունակում երկրի կառավարումը մանուկ գահակալի և անտիոքցի օտարազգի խնամակալի ձեռքում

---

[1] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 142:

թողնելը, մանավանդ որ հայտնի էին Անտիոքի չդադարող նկրտումները Կիլիկիայի հայկական պետության նկատմամբ[1]: Այնուամենայնիվ հայոց իշխանապետի վարած նոր արտաքին քաղաքականությունը պսակվեց հաջողությամբ:

Փաստ է, որ թեև Մլեհի կառավարման ժամանակաշրջանում Կիլիկիայի հայոց իշխանապետությունը շարունակում էր մնալ Բյուզանդական կայսրության ազդեցության գոտում, սակայն հայոց իշխանապետության արտաքին քաղաքականության գրեթե բոլոր ուղղությունները փոխվեցին, և հայկական պետությունը սկսեց համագործակցել Հալեպի աթաբեկության հետ: Դա տվյալ պահին ճշգրիտ և արդարացված որոշում էր: Լ. Մկրտումյանը, անդրադառնալով Մլեհ իշխանապետի գործունեությանը, նկատում է, որ Մլեհին նախորդած իշխանները պայքար էին մղում միայն բյուզանդացիների դեմ՝ փորձելով դաշնակցել խաչակիրների հետ՝ դրանով թույլ տալով Կիլիկիայում լատին իշխանությունների ամրապնդմանը:

Ի տարբերություն այս քաղաքականության՝ Մլեհը զուրկ չլինելով դիվանագիտական և ռազմական տաղանդից, ավելի ճկուն գտնվեց և միաժամանակ ռազմական գործողություններ ծավալեց ինչպես բյուզանդացիների, այնպես էլ խաչակիրների դեմ[2]: Մինչև այս պահը Կիլիկիայի պետության համար գլխավոր վտանգը գալիս էր Բյուզանդական կայսրությունից. հասկանալի է, սակայն, որ նախորդ տասնամյակների ընթացքում հայոց պետությունը արդեն հասցրել էր բախվել նաև Արևելքում ստեղծված խաչակրաց իշխանությունների հետ ևս, որոնցից ամենաագրեսիվը Անտիոքի իշխանապետությունն էր, որը երբեք չէր թաքցնում իր հավակնությունները Կիլիկիայի նկատմամբ:

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս **Լ. Մկրտումյան**, Հայոց պատմություն, Եր., 2016, էջ 147-148:

Մլեհը, գալով Կիլիկիա, դադարեց Հալեպի տիրակալի վասալը լինելուց: Նա դարձավ դաշնակից, ինչը շահեկան էր երկու կողմերին էլ: Խնդիրն այն էր, որ հայոց իշխանապետը բազմաթիվ բարդություններ կստեղծեր խաչակիրների համար տարածաշրջանում, որն անշուշտ ձեռնտու էր Հալեպի տիրակալին: Մլեհը ցանկանում էր Նուր ադ-Դինի օգնությամբ հզորացնել Կիլիկյան Հայաստանը և այնտեղից դուրս քշել ինչպես բյուզանդացիներին, այնպես էլ խաչակիրներին և հասնել բացարձակ անկախության:

Շատ հետաքրքիր մի տեսակետ է հայտնում ժամանակակից հետազոտողներից Վ. Տեր-Ղևոնդյանը, ըստ որի՝ Մլեհի, իշխանության գալով, վերջնականապես խզվեց հայ խաչակիրներ դաշինքը[1]: Այն, որ նշված ժամանակաշրջանում որոշակի հարաբերություններ կային Կիլիկյան Հայաստանի և խաչակիրների միջև, դա փաստ է: Սակայն այստեղ հարց է առաջանում, թե արդյոք խաչակիրները երբևիցե եղել են Կիլիկյան Հայաստանի իրական դաշնակիցները: Կարծում ենք՝ ոչ, քանի որ պատմությունը ցույց է տվել, որ վերջիններս հիմնականում փորձել են օգտագործել Կիլիկիայի հայոց պետության հարմար աշխարհագրական դիրքը և ռազմական ուժերը ծառայեցնել հանուն իրենց նպատակների իրականացման: Մ. Զուլալյանը նշում է, որ խաչակիր ասպետները Արևելքում գտնվելու հարյուրամյակների ընթացքում ոչ միայն ոչնչով չնպաստեցին Կիլիկիայի հայկական պետության ամրապնդմանը, այլև ընդհակառակը՝ ամեն կերպ նպաստեցին նրա թուլացմանն ու քաղաքական անկմանը[2]: Այս տեսակետին մենք համաձայն ենք որոշ վերապահությամբ, քանի որ

[1] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի վերջերին, Պատմա-բանասիրական հանդես, 2010, թիվ 1, էջ 124:

[2] Տե՛ս **Մ. Զուլալյան**, նշվ. աշխ., էջ 9-10:

խաչակիրների մուտքը նշյալ տարածաշրջան թուլացրեց թե՛ Բյուզանդական կայսրությունը և թե՛ Իկոնիայի սուլթանությունը, ինչը խիստ դրական նշանակություն ունեցավ Կիլիկիայի հայոց պետության ամրապնդման համար:

Ա. Բոզոյանն ու Բակուրանը կարծիք են հայտնում, որ Մլեհը իշխանության եկավ Նուր ադ-Դինի օգնությամբ և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց Հալեպի աթաբեկությանը[1]: Դրա վկայությունն է հետագա տարիների պատմությունը, երբ Նուր ադ-Դին-Մլեհ դաշինքը անխափան գործեց մինչև 1174 թվականը՝ մինչ Նուր ադ-Դինի մահը: Թերևս կարելի է համաձայնվել հեղինակի վերը նշյալ տեսակետին, քանզի Մլեհը դեռևս երիտասարդ տարիներից վկան էր դարձել Բյուզանդական կայսրության թշնամական քաղաքականությանը՝ Կիլիկիայի հայկական պետության և իր ընտանիքի անդամների հանդեպ և չէր կարող երբևիցե մոռացության տալ այն: Չի բացառվում նաև, որ հայոց իշխանապետը չէր հավատում հույներին և նախընտրում էր դաշնակցել Հալեպի աթաբեկության հետ: Ս. Պապիկյանն էլ կարծիք է հայտնում, որ Մլեհ Ռուբինյանը ֆրանկների հետ թշնամացավ, որովհետև նրանք դաշնակից էին հույներին, իսկ հայոց իշխանապետի քաղաքականությունը առաջին հերթին հույների դեմ էր[2]: Դժվար է համաձայնել հեղինակի այս մոտեցմանը, քանզի Կիլիկիայի հայոց իշխանապետությունը ուներ մի շարք վիճելի խնդիրներ նաև խաչակիրների հետ, որոնք շարունակվում էին մի քանի տասնամյակ: Ընդհանրապես Կիլիկիայի հայկական պետության ստեղծումից ի վեր խա-

---

[1] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Կիլիկիայի բյուզանդական կառավարիչները և Ռուբինյան իշխանությունը XII դարի 40-70-ական թվականներին, Պատմաբանասիրական հանդես, 1984, թիվ 3, էջ 84, **Բակուրան (Վ. Քիւրճեան),** նշվ. աշխ., էջ 15:

[2] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 272:

չակրաց պետությունները միշտ վտանգ են ներկայացրել հայկական պետության համար և ցանկացած հարմար պահի կարող էին նոր հարված հասցնել նորաստեղծ հայկական պետությանը: Շատ բնական է, որ վաղ թե ուշ Կիլիկիայի հայկական պետությունը բախվելու էր նաև արևելքում հաստատված խաչակրաց իշխանությունների հետ: Իսկ Զանգիների պետության հետ համագործակցությունը Կիլիկյան Հայաստանի հետ պայմանավորված էր շահերի համընկնումով:

Մլեհը Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ բացառիկ և յուրօրինակ անձնավորություն էր: Հայոց իշխանապետի ֆենոմենը այն էր, որ լինելով քրիստոնյա, կիլիկյան իրականության մեջ առաջին քաղաքական և ռազմական գործիչն էր, որ քաղաքական այլ ուղենիշներ է ունեցել: Խաչակիրների մշտական դավաճանությունից և Բյուզանդական կայսրության բացահայտ թշնամանքից դասեր քաղելով՝ հայոց իշխանապետը դաշնակիցներ ընտրելիս իրականացրեց մի շատ համարձակ քայլ: Վերջինս ամբողջովին փոխեց Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքական ընթացքը՝ թեքվելով դեպի մահմեդական աշխարհ: Նմանատիպ քաղաքականությունը իհարկե չէր կարող դուր գալ քրիստոնյա հոգևորականներին և երկրում գտնվող մի շարք իշխանների, որոնք հակված էին ավելի սերտ կապեր հաստատելու քրիստոնյա պետությունների՝ Բյուզանդական կայսրության, խաչակիրների և քրիստոնյա Արևմուտքի հետ:

Իհարկե, շատերը Մլեհի մասին բացասական էին խոսում՝ հիմնվելով այն փաստի վրա, որ նա համագործակցում էր մահմեդական պետությունների հետ: Պատմության ընթացքում նմանատիպ քաղաքականության հիմքում կանգնած էր եղել նաև Թեոդորոս Ռշտունին, հայ Բագրատունիներից ոմանք և ուրիշներ: Մյուս կողմից էլ բազմաթիվ անգամ ականատես ենք եղել, որ քրիստոնյա շատ երկրների

միապետներ ևս՝ Անտիոքի տիրակալները, Կիպրոսի և Երուսաղեմի արքաները, հարկ եղած դեպքում համագործակցում էին մահմեդական պետությունների հետ՝ հանուն իրենց երկրների շահերի: Բացի այդ՝ երիտասարդի մեջ արթնանում էր նաև վրեժխնդրությունը, քանզի Մլեհ Ռուբինյանը դեռևս երիտասարդ տարիներից տեսել էր, թե ինչպես է իր հայրը պայքարում Բյուզանդական կայսրության դեմ: Բյուզանդական արքունիքի տմարդի վերաբերմունքը Լևոն Ա-ի և նրա որդիների նկատմամբ պետք է կայսրության հանդեպ Մլեհի մոտ խիստ բացասական վերաբերմունք առաջացներ:

Իշխանության գալով՝ հայոց իշխանապետը միանձնյա կառավարեց Կիլիկիայի պետությունը, վարեց ակտիվ արտաքին քաղաքականություն՝ ընդարձակելով իշխանապետության սահմանները: Չորեղանալով մահմեդականների հետ դաշնակցությունից՝ Մլեհը շարունակում էր ամուր հաստատված մնալ Լեռնային Կիլիկիայում: Իբն ալ-Ասիրը նշում է հետևյալը.«Ֆրանկների հետ ունեցած հարաբերությունների ընթացքում նա (Նուր ադ-Դինը) հաճախ գործադրում էր հնարամտություն, խորամանկություն ու խաբեություն, և մեծ մասամբ այս միջոցներով էր նա տիրացել նրանց հողերին: Որպես խելամտության մի օրինակ հիշենք նրա վերաբերմունքը Հայոց թագավոր (մալիք ալ-Արման), կիրճերի տեր՝ (սահիբ ալ դուրուբ), Լևոնի որդի Մլեհի (Մալիհ իբն Լայուն) հետ: Նա խորամանկում էր և սիրաշահում նրան, մինչև որ կարողացավ իր ծառայության մեջ վերցնել թե՛ կռիվների, թե՛ դադարի ժամանակ և միասին կռվում էին Ֆրանկների դեմ: Նա ասում էր. ես նրան սիրաշահեցի, քանզի նրա երկիրը ամուր պաշտպանված է դժվարամատչելի կիրճերով ու անմատչելի ամրոցներով և մենք ոչ մի ճանապարհով չենք կարող ներթափանցել, մինչդեռ նա երբ կամենա, կարող է դուրս գալ և ասպատակել մահմեդական երկրները: Եթե որևէ մեկը նրա դեմ հարձակվի, նա (Մլեհը)

կարող է փակվել իր սահմաններում, որպես անմատչելի որջ: Տեսնելով այս վիճակը նրան որոշ տիրույթներ տվեցի վստահություն շահելու համար և նա ենթարկվեց ու մտավ իմ ծառայության մեջ և օգնեց ֆրանկների դեմ»[1]:

Մլեհի և Նուր ադ-Դինի դաշինքի, ինչպես նաև բյուզանդացիների և խաչակիրների դեմ մղած հաջող կռիվների և ողջ Կիլիկիան իրեն ենթարկելու մասին է խոսում նաև այլ պատմիչներ ևս: Նշենք նաև, որ սա պատմական մի ժամանակաշրջան է, երբ հայոց պետության հետագա զարգացման համար կենսական նշանակություն ուներ Կիլիկիայի դաշտային տարածքների նվաճման խնդիրը, որը բավական բարդ էր, և հազիվ թե հայոց պետությունը առանց զորեղ դաշնակիցների կարողանար այն կարգավորել: Այդ տարածքների գրավմամբ շահագրգիռ էին նաև Արևելքում ստեղծված խաչակրաց իշխանությունները, հատկապես Անտիոքի իշխանապետությունը, Երուսաղեմի թագավորությունը և Եդեսիայի կոմսությունը, որոնք մշտապես պայքարի մեջ էին մտնում Կիլիկիայի պետության հետ:

Մլեհի իշխանության սկզբում Դաշտային Կիլիկիայի մի քանի շրջաններ դեռևս գտնվում էին խաչակիրների, իսկ արևմտյան որոշ գավառներ՝ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Եվ երկրի պաշտպանության ու հետագա ամրապնդման և զարգացման համար անհրաժեշտություն էր ծովեզրյա բոլոր շրջանների ազատագրումը: Այդ գործի նախաձեռնողը դարձավ հայոց իշխանապետ Մլեհը: Վերջինս դիմեց ակտիվ ռազմական գործողությունների, տիրեց որոշ ծովային նավահանգիստների՝ Կիլիկիայի հայոց պետության հսկողության տակ դնելով արևելք-արևմուտք առևտրական ճանապարհները: Սա նպաստեց տնտեսական առաջընթացին, որն իր հերթին զարգացրեց քաղաքական,

---

[1] **Իբն ալ-Ասիր**, էջ 362:

ռազմական, մշակութային և իրավական համակարգերը: Ֆրանսիացի հայտնի հետազոտող Ռընե Գրուսեի կարծիքով՝ այս կիսաուրացողն[1] ընդհանուր առմամբ դարձավ իր երկրի ազատագրողը[2]:

Փաստորեն Եվրոպացի հետազոտողը նույնպես հաստատում է, որ Մլեհի վարած արտաքին քաղաքականությունը հաջողություն է բերել Կիլիկիայի հայկական պետությանը: Վերը նշված հարցին անդրադարձել է նաև Կ. Մութաֆյանը: Նա ավելացնում է, որ Կիլիկիան բյուզանդական խնամակալությունից ազատելու գործն ավարտում է Թորոս Բ-ի եղբայրն՝ անսովոր և հայկական Կիլիկիայի պատմության համար ինքնատիպ քաղաքականության միջոցով[3]:

Իր իշխանության տարիներին հայոց իշխանապետը արտաքին քաղաքականության բնագավառում վարում էր բացահայտ հակաբյուզանդական և հակալատին քաղաքականություն: Ընդհանրապես նրա նպատակն է եղել Հայկական Կիլիկիայի ինքնիշխանության ձեռքբերումը: Իր արտաքին քաղաքականության մեջ Մլեհը հենվում էր ոչ միայն Հալեպի աթաբեկության, այլև որոշ դեպքերում մահմեդական պետությունների վրա՝ նրանց հետ ռազմական դաշինքի մեջ մտնելով:

Այսինքն՝ Մլեհը իր նպատակներին հասնելու համար ցանկացած պահի կարող էր համագործակցել նաև այլ ուժերի հետ, որոնց հետ Կիլիկիան երբևէ չէր համագործակցել: Մլեհ Ռուբինյանի դաշնակցությունը մահմեդական աշխարհի հետ անհանգստացրեց Կիլիկիայի քրիստոնյա հարևան-

---

[1] Մլեհ Ռուբինյանի դավանանքի հետ կապված խնդիրների վերլուծությունը տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, Մլեհ իշխանապետի կրոնական պատկանելության հարցի շուրջ, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Գ, 2020, էջ 125-134:

[2] Տե՛ս **Ռընե Գրուսե**, նշվ. աշխ., էջ 391:

[3] Տե՛ս **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 394:

ներին՝ մասնավորապես Անտիոքի իշխանապետությանը և Բյուզանդական կայսրությանը, որոնք սահմանակից էին Կիլիկիայի հայկական պետությանը:

Մեզ հայտնի առաջին նման դաշինքը կնքվեց դեռևս 1171 թ.[1], երբ Կիլիկյան Հայաստանը դաշնակցեց Իկոնիայի սուլթանության և Դանշիմանյան ամիրայության հետ՝ ընդդեմ բյուզանդացիների և խաչակիրների: Բնականաբար նման պետությունների հետ դաշնակցությունը Կիլիկիայի հայկական պետությանը բավականին կհզորացներ, կամրապնդեր երկրի սահմանների անվտանգությունը և նախադրյալներ կստեղծեր տարածքների ընդլայնման համար: Նման արտաքին քաղաքականություն վարելը ամբողջովին բխում էր հայոց իշխանապետության շահերից, և էական չէ, թե Կիլիկիայի պետության դաշնակիցը որ դավանանքին էր պատկանում: Այս կարևոր հանգամանքը ժամանակին առաջինը գիտակցեց Կիլիկիայի հմուտ դիվանագետը՝ Մլեհը:

Հովհան Կինամոսը նշում է, որ հայոց իշխանապետի դաշինքը Հալեպի տիրակալի հետ բացասական հետևանքներ ունեցավ Արևելքում, հատկապես Բյուզանդական կայսրության համար: 1171 թ. վենետիկցիների ունեցվածքի բռնագրավումը նկարագրելով՝ նա շարունակում է. «Սրա հետ միաժամանակ բարդացան գործերը Կիլիկիայում, որտեղ Թորոսի մահից հետո իշխանությունը անցել էր նրա եղբայր Մլեհին, որն սկսեց հոռոմներին ոչ պակաս վնաս հասցնել, քան Թորոսը»[2]: Իսկ Անանուն Եդեսացին վկայում է, որ Մլեհը իր ամբարշտությամբ գերազանցեց ոչ միայն քրիստոնյա անօրեն իշխաններին, այլև նույնիսկ մահմեդական և հեթա-

---

[1] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, էջ 62, Հայոց պատմություն, միջին դարեր, (IV դար- XVII դարի առաջին կես), h. 2, էջ 344:

[2] Recueil des Historiens des Croisades, Historiens grecs, t. I, p. 312.

նոս բռնակալներին[1]: Թեև պատմիչը նման բնութագրումներ է անում հայոց իշխանապետի հասցեին, սակայն փաստացի որևէ դեպք չի մատնանշում: Նշենք, որ Բյուզանդիան վերջնականապես կորցրեց Կիլիկիան հետ գրավելու հույսը Մլեհի օրոք: Կիլիկյան Հայաստանը, դաշնակցելով Հալեպի աթաբեկության հետ, ոչնչացրեց Կիլիկիայի հայոց պետության վասալական կախումը բյուզանդացիներից, ինչը չափազանց կարևոր էր:

Փաստենք, որ հայոց իշխանապետության համագործակցությունը մահմեդական պետությունների հետ ամբողջովին արդարացված էր և ապահով էր դարձնում Ռուբինյան իշխանության սահմանները, միևնույն ժամանակ հզոր հենարան էր Բյուզանդիայի և Կիլիկիայի պետության մյուս թշնամիների դեմ պայքարում:

4.2 Կիլիկիայի պետության տարածքային ընդլայնման քաղաքականությունը:

12-րդ դարի 70-ական թվականների սկզբներից Մլեհը սկսում է ակտիվ հարձակողական գործողություններ ձեռնարկել տարբեր ուղղություններով՝ նպատակ ունենալով ընդլայնել երկրի սահմանները և գրավել Դաշտային Կիլիկիայի բարեբեր հողերը: Ընդհանրապես լատինները, որոնք արդեն 70 տարի հաստատվել էին Կիլիկիայի հայկական պետության հարևանությամբ, ոչ հաճելի հարևաններ էին: Մլեհից առաջ Կիլիկիայի և ոչ մի հայ իշխան չկարողացավ այդքան նրանց դեմ պայքարում հաջողությունների հասնել, որքան նա:

Առաջին կարևոր ձեռնարկումներից մեկը, որ իրականացրեց հայոց իշխանապետը, կապված էր Կիլիկիայի սահ-

---

[1] Տե՛ս **Անանուն Եդեսացի**, էջ 135:

մանագլխում գտնվող Գաստոն ամրոցի նվաճման հետ: Այն կարևոր ռազմավարական նշանակություն ուներ թե՛ Կիլիկիայի հայոց պետության և թե՛ Անտիոքի իշխանապետության համար: Ղևոնդ Ալիշանի բնորոշմամբ՝ Հայոց տերության պահպանության ամրոցն էր[1]: Իսկ Ռընե Գրուսեն նշում է, որ տաճարականները, որոնց պատկանում էր Գաստոն ամրոցը, այնտեղ հաստատվել էին Անտիոքի իշխանապետության կողմից որպես Սիրիա-Կիլիկյան սահմանի պաշտպաններ[2]:

Հայտնի է, որ 12-րդ դարի նախորդ տասնամյակների ընթացքում վերը նշված ամրոցը կռվախնձոր էր դարձել Կիլիկյան Հայաստանի, հոգևոր ասպետական միաբանությունների, Բյուզանդական կայսրության և խաչակիրների միջև: Այս կարևոր ստրատեգիական կենտրոնին տիրանալու համար պայքար մղեց նաև Մլեհի եղբայր Թորոս Բ-ն, բայց ի վերջո որոշեց զիջել այն տաճարականներին, որոնք էլ խոստացան հարկ եղած դեպքում օգնել հայերին: Սակայն Մլեհ Ռուբինյանը չէր վստահում վերջիններիս, քանի որ մեկ անգամ արդեն նրանք չէին կատարել իրենց խոստումը, հետևաբար և գործնական քայլերի գնաց՝ այն գրավելու համար:

Օգտվելով խաչակիրների ժամանակավոր թուլությունից և Նուր ադ-Դինի հետ համագործակցությունից՝ 1171 թվականին Մլեհը գրավեց Գաստոնի անառիկ ամրոցը[3]: Այն գտնվում էր Ամանոսյան լեռներում և ուներ եռաշերտ պարիսպներ և շատ մոտ էր Անտիոքին: Դրանով իսկ Ամանոսյան լեռների տաճարականների տիրույթները հայոց իշխանապետը

---

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 455:

[2] Տե՛ս **Ռընե Գրուսե**, նշվ. աշխ., էջ 275:

[3] Տե՛ս **Ս. Բոռնազյան**, նշվ. աշխ., էջ 153, **Յ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 396:

միացրեց Կիլիկիայի հայկական իշխանապետությանը[1], որով հայոց իշխանությունը ավելի ուժեղացավ: Ժամանակակից հետազոտողներից Մ. Շևալիեն կարծիք է հայտնում, որ հայոց իշխանապետը արտաքսեց տաճարականներին, ինչը հանգեցրեց Կիլիկիայի հայկական իշխանապետության և տաճարականների միջև դաշինքի վերջնական խզմանը [2]:

Փաստորեն, մի կողմից Մլեհը, գրավելով վերը նշյալ տարածքները, ընդարձակեց հայոց իշխանապետության սահմանները և ձեռք բերեց կարևոր ռազմավարական ամրոցներ, մյուս կողմից էլ փորձեց Կիլիկիայի սահմանակից տարածքներից դուրս քշել տաճարականներին, որոնց հանդեպ չուներ ոչ մի վստահություն: Հաջողություններ գրանցելուց բացի՝ Մլեհը միևնույն ժամանակ ավելացնում էր նաև իր թշնամիներին: Ղևոնդ Ալիշանի վկայմամբ՝ «Մլեհը սկսեց մեծ գազանություններ անել իր կրոնակիցների նկատմամբ և արդեն 1171 թվականին նա Մամեստիայի մոտակայքում ձերբակալեց մի բարձրաստիճան ֆրանկ բարոնի՝ Ստեփան Բլուացուն: Նա Անտիոքից վերադառնում էր Կոստանդնուպոլիս, երբ հասավ Կիլիկիայի Մամեստիա քաղաքի մոտակայքը, Մլեհը հարձակվեց նրա և իր պահակախմբի վրա, լրիվ կողոպտեց ֆրանկ ֆեոդալին՝ խլելով բազմաթիվ թանկագին զարդեր, որ նա իր երկիրն էր տանում: Շատ խնդրելուց հետո նրան հազիվ մի խղճուկ գրաստ վերադարձրին»[3]: Իսկ Ստեպանենկոն ավելացնում է, որ Ստեփան Բլուացու փրկագինը տվեց Մանուել Կոմնենոսը[4]: Ղ. Ալիշանը վերը

---

1 Տե՛ս **Մ. Ճեվահիրճյան**, Կիլիկյան Գաստոն բնակավայրը, Պատմա-բանասիրական հանդես, 1975, թիվ 4, էջ 144:

2 Տե՛ս **Մ. Ա. Շևալիե**, նշվ. աշխ., էջ 11:

3 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 326:

4 Տե՛ս **В. Степаненко**, Киликийский вопрос в международных отношениях, с. 132.

նշված դեպքերի մասին խոսելիս ավելացնում է նաև, որ հաջորդ տարի էլ հայոց իշխանապետը ասպատակեց Պաղեստինի կողմերը, սակայն խաչակիր ասպետները թույլ չտվեցին նրան առավել խորանալու և նոր նվաճումներ իրականացնելու. «Ու քիչ անգամ էլ Պաղեստինոյ կողմերը ասպատակեց (1172), բայց ասպետք չթողուցին աւելի անգգամելու»[1]: Ավաղ Ալիշանը չի նշում իր այս հաղորդման աղբյուրը, որից օգտվել է: Մյուս հետազոտողների մոտ վերը նշված խնդրի մասին տեղեկություններ չկան: Պաղեստինի տարածքում գտնվում էր Երուսաղեմի թագավորությունը: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Մլեհը բախվել է ոչ միայն տաճարականների, Անտիոքի իշխանապետության, այլև Երուսաղեմի թագավորության հետ: Քանի որ խաչակրաց այս պետությունը սահմանակից չէր Կիլիկիային, ապա պետք է եզրակացնել, որ Մլեհն իր զորաշարժն իրականացրել է Նուր ադ-Դինի ենթակա տարածքներից:

Բնականաբար քաղաքական նման փոփոխությունները չափազանց վտանգավոր էին հայկական պետության մի շարք հարևանների համար: Եվ նրանք լավ էին հասկանում, որ այս հաջողություններով Մլեհը կանգ չի առնելու, առջևում նրանց սպասվում էր նոր փորձություններ: Մլեհի հաջողություններից խիստ անհանգստացած Բյուզանդական կայսրությունը փորձեց կասեցնել հայկական պետության առաջխաղացումը, սակայն հայոց իշխանապետը 1173 թ. հունվարին վճռական հաղթանակ տարավ բյուզանդական զորավարների՝ Միքայել Վռանասի, Կոստանդին Եվփոպեի, Կոստանտին Կալոմանի և այլ ճանաչված զորավարների նկատմամբ և ազատագրեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը, որը բյուզանդական գերիշխանության տակ էր՝ սկսած

---

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 326:

1158 թ.[1]: Ճակատամարտի ընթացքում Մլեհը ձերբակալեց Կոստանդին Կալոմանին և այլ նշանավոր անձանց և մի շարք գերիների հետ ուղարկեց Նուր ադ-Դինի մոտ: Այս ժամանակ է, որ առաջանում է Կիլիկյան Հայաստանի նշանավոր քաղաքների ազատագրման գործընթացը, որը նույնպես մեծ հաջողությամբ իրականացրեց Մլեհը: Այս կարևոր իրադարձությունների մասին հայ պատմիչները գրեթե ոչինչ չեն հայտնում: Փոխարենը մենք որոշակի հաղորդումների ենք հանդիպում արևելյան հեղինակների մոտ: Պատմիչ Իբն ալ-Ասիրը գրում է այդ մասին.«Ադանա, Մամեստիա (Մասիսա) և Տարսոն (Թարսուա) քաղաքները Կ. Պոլսի տիրոջ՝ Ռումի թագավորի ձեռքում էին, իսկ Մլեհը վերցրեց նրանից, որովհետև դրանք իր երկրին հարևան էին»[2]: Նմանատիպ տեղեկություն հանդիպում ենք նաև Քամալ ադ-Դին իբն ալ-Ադիմի աշխատության մեջ[3]:

Դրանց միացումով Կիլիկիայի հայկական պետությունը ավելի է հզորանում: Պատմիչը, շարունակելով իր տեղեկությունները, նշում է, որ բյուզանդական Մանուիլ Ա կայսրը (1143-1180), տեղեկանալով Մլեհի հարձակողական գործողությունների մասին, մի մեծ բանակ ուղարկեց նրա դեմ՝ հրամանատարներ նշանակելով իրեն ազգական մի քանի հայտնի պատրիկների: Մլեհը Նուր ադ-Դինի զորքի հետ նրանց դեմ դուրս եկավ պատերազմի և համառ կռվից հետո հոռոմները պարտվեցին, շատերն սպանվեցին ու գերի ընկան[4]:

---

1 Տե՛ս **В. Степаненко**, Торос II Рубенид и Византийская администрация Равнинной Киликии 1158-1160 гг., с. 56.

2 **Իբն ալ-Ասիր**, էջ 263:

3 Տե՛ս **Камал ад-дин Ибн ал-Адим**, Сливки истории Халеба, օգտվել ենք www vostlit. info կայքից.

4 Տե՛ս Նույն տեղում:

Այաս

Եվ իրոք, հստակ կարող ենք նշել, որ այս քաղաքների գրավումը կարելի է համարել Մլեհ Ռուբինյանի կառավարման ժամանակաշրջանի ամենամեծ հաջողություններից մեկը: Իսկ ո՞ր թվականին է տեղի ունեցել այս երեք քաղաքների ազատագրումը Մլեհի կողմից: Այդ մասին պատմիչների մոտ շատ սակավ տեղեկություններ կան: Ու թերևս միակ հեղինակը ով խոսում է դրանց մասին և անգնահատելի արժեք է ներկայացնում Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտման համար Իբն ալ-Ասիրն է, որի աշխատության մեջ այն հիշատակվում է 1172-1173 թվականների միջև ընկած ժամանակաշրջանով[1]:

Ինչ վերաբերում է գիտական գրականությանը, ապա նշենք, որ Գ. Միքայելյանը[2], Կ. Մութաֆյանը[3] և Ս. Առաքելյանը[4] անդրադարձել են Կիլիկյան Հայաստանի այդ երեք քաղաքների գրավմանը, սակայն չեն նշել գրավման հստակ թվականը:

Իսկ Ե. Քասունին, անդրադառնալով հայոց իշխանապետի կողմից այդ երեք նշանավոր քաղաքների նվաճմանը, կարծիք է հայտնում, որ դրանք գրավվել են հայոց պետության կողմից 1172 թվականի վերջին կամ էլ 1173 թվականի սկզբին[5]: Ամենայն հավանականությամբ վերջինս օգտվել է հենց Իբն ալ-Ասիրի երկից:

Ռընե Գրուսեն, խոսելով վերը նշված դեպքերի մասին, այն համարում է 1173 թվականի իրողություն[6]: Վերջինիս տեսակետին համամիտ են նաև Ս. Տեր-Ներսիսյանը[7] և Վ.

---

1 **Իբն ալ-Ասիր**, էջ 263:

2 Տե՛ս **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 130:

3 Տե՛ս **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 395:

4 Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 6:

5 Տե՛ս **Ե. Քասունի**, նշվ. աշխ., էջ 67:

6 Տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց էջ 278:

7 Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան**, հ. Ա, էջ 394:

Տեր-Ղևոնդյանը[1]: Մենք նույնպես այդ տեսակետին համակարծիք ենք:

Այս հաղթանակներից հետո Բյուզանդական կայսրությունը Ռուբինյաններին զիջեց Դաշտային Կիլիկիայի զգալի մասը, որը մեծ հաջողություն էր հայկական պետության համար: Եվ, իրոք, Բյուզանդիայի հրաժարումը Կիլիկյան Հայաստանի նկատմամբ հավակնություններից թվագրվում է Մլեհի իշխանապետության ժամանակաշրջանով: Ինչպես նշում է Ս. Տեր-Ներսիսյանը, Մլեհի տիրապետությունը Ամանոսի բերդերի վրա ուղղակի սպառնալիք էր Անտիոքի իշխանապետության համար[2], հանգամանք, որը ոչ մի կերպ չէր կարող անտեսվել խաչակրաց իշխանությունների կողմից, և այդ պատճառով էլ սկսվեց արշավանք հայկական պետության դեմ:

Ստեղծված պայմաններում Անտիոքի տիրոջ Բոհեմոնդ Գ-ի և Դաշտային Կիլիկիայի բյուզանդացի իշխանների խնդրանքով Մլեհի դեմ դուրս եկավ Երուսաղեմի թագավորը[3]: Այս արշավանքի պատճառների մասին խոսում է Բար

---

1 Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 69:

2 Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան,** նշվ. աշխ., էջ 393:

3 Երուսաղեմի արքան, կառավարել է մոտավորապես 1162-1174 թվականներին: Մասնագիտական գրականության մեջ հայտնի է տարբեր անուններով: **Գ. Միքայելյանը** նրան անվանում է Ամարլիխ, **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 129, **Ս. Առաքելյանը**, **Ս. Պապիկյանը, Լ. Տեր-Պետրոսյանը, Ս. Տեր-Ներսիսյանը, Ռընե Գրուսեն՝** Ամորի: Ժամանակակից հետազոտողներից **Վ. Տեր-Ղևոնդյանը** նրան անվանում է Ամարլիկ, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 69, Կիլիկյան Հայաստանը և Սիրիան 12-րդ դարի 40-70-ական թվականներին, էջ 127: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտողների ճնշող մեծամասնությունը Երուսաղեմի արքային անվանում է Ամորի, մենք էլ կառաջնորդվենք նույն սկզբունքով:

Հեբրաուսը, համաձայն որի՝ Երուսաղեմի արքան, լսելով Կիլիկիայի տիրակալ Մլեհի կողմից քրիստոնյաների նկատմամբ չարագործությունների մասին, հարձակվեց նրա վրա[1]: Իսկ Վիլհելմ Տյուրացին ավելացնում է. «Կիլիկյան Հայաստանը, որ մինչ այդ մարտկոց էր հանդիսանում ֆրանկների համար, շրջվում է վերջիններիս դեմ: Եվ Մլեհը, քրիստոնյա լինելով հանդերձ, մեծ ատելություն էր տածում մեր հավատակիցների հանդեպ: Եվ երբ մարտի ժամանակ բերդում հաջողվում էր նրանց գերի վերցնել, շատ դաժանորեն էր նրանց հետ վարվում, հաճախ ուղարկում էր հեթանոսների երկիր՝ մուսուլմաններին վաճառելու: Եվ այս աստիճան ներքաշված լինելով թուրքական քաղաքականության մեջ՝ հասկանալի է, որ Մլեհը թշնամաբար էր տրամադրված նաև բյուզանդացիների նկատմամբ, որոնցից նա ձգտում էր խլել Դաշտային Կիլիկիայի մեծ քաղաքները»[2]: Անշուշտ, Մլեհի գրաված դիրքը և վարած արտաքին քաղաքականությունը խաչակիրների կողմից գնահատվեց որպես դավաճանություն: Դա էր պատճառը, որ վերջիններս՝ Երուսաղեմի թագավորը, Անտիոքի դուքսը և նրանց դաշնակցած Բյուզանդական կայսրությունը, որոշեցին անհապաղ քայլեր ձեռնարկել ու պատժել հայոց տիրակալին, սակայն նրանց ջանքերը ապարդյուն անցան:

Վիլհելմ Տյուրացին այն եզակի հեղինակներից է, ով բավականին կարևոր մանրամասներ է հաղորդում այս դեպքերի մասին:

Հեղինակը, անդրադառնալով Կիլիկիայի և Երուսաղեմի թագավորության միջև հարաբերությունների բարդացմանը, նշում է, որ Ամորի թագավորը մի քանի անգամ դեսպանություն ուղարկեց Կիլիկիա՝ առաջարկելով Մլեհին հանդիպել և

---

1 Տե՛ս **Bar Habraeus**, էջ 295:

2 Տե՛ս **Guillaume de Tyr, էջ 291**:

հաշտություն կնքել, բայց հայոց իշխանապետը նրան ընդառաջ չգնաց[1]: Այսինքն՝ Երուսաղեմի արքան, քաջ գիտակցելով, որ դժվար թե կարողանա ռազմական ուժով հաղթել նրան՝ ցանկանում է բանակցություն սկսել և ծուղակը գցել հայոց իշխանապետին: Մլեհն էլ իր հերթին իրավացիորեն կասկածում էր, որ Երուսաղեմի Ամորի թագավորը իր դեմ կարող էր ծուղակ լարել: Ս. Պապիկյանը, անդրադառնալով այս միջադեպին, կարծիք է հայտնում, որ հայոց իշխանապետը չգնաց, քանի որ Հայկական Կիլիկիան արդեն անկախ էր և ոչ մի թագավորի վեհապետությունը չէր ճանաչում[2]: Միգուցե Պապիկյանը մի փոքր գերագնահատում է իրավիճակը, բայց մյուս կողմից էլ պարզ է մեկ հանգամանք, որ Մլեհի այս քաղաքականությունը հող էր նախապատրաստում հետագայում Կիլիկիայի հայկական իշխանապետությունը թագավորություն հռչակելու համար:

Քննենք այն հարցը, թե ո՞ր թվականին է տեղի ունեցել Երուսաղեմի արքայի արշավանքը դեպի Կիլիկիայի հայոց պետություն:

Նշված արշավանքի մասին հայկական աղբյուրներից և ոչ մեկը տեղեկություններ չի հաղորդում՝ բարդ իրավիճակի մեջ դնելով հետազոտողներին: Ինչ վերաբերում է օտարազգի պատմիչներին, ապա դրա մասին անդրադարձ է կատարվել որոշ հեղինակների կողմից, սակայն նրանց տեղեկությունների մեջ էլ կան էական տարբերություններ:

Երուսաղեմի թագավոր Ամորիի՝ Կիլիկիայի հայկական պետություն արշավանքին անդրադարձել է ասորի պատմիչ Բար Հեբրաուսը և այն համարում է 1170 թվականը[3]:

Ի տարբերություն նրա՝ ժամանակակից ականատես Վիլ-

---

1 Տե՛ս Նույն տեղում, էջ 276:

2 Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 274:

3 Տե՛ս **Bar Habraeus**, էջ 295:

հելմ Տյուրացին վերը նշյալ արշավանքը կապում է 1173 թվականին[1]։ Մյուս պատմիչների մոտ նշված արշավանքի թվականի մասին չկան տվյալներ։

Վերը նշված հարցի շուրջ որոշակի տեսակետներ կան նաև մասնագիտական գրականության մեջ։ Այսպես՝ Ս. Պապիկյանը բավական մանրամասնորեն խոսում է հիշյալ խնդրի մասին, սակայն չի հստակեցնում արշավանքի թվականը[2]։ Ռընե Գրուսեն դեպի Կիլիկիայի հայոց պետություն արշավանքը թվագրում է 1170 թվականով[3]։ Վերը նշյալ խնդրին անդրադարձել են նաև Ս. Տեր-Ներսիսյանը և Վ. Տեր-Ղևոնդյանը, որոնք կարծում են, որ Կիլիկիայի հայկական պետության դեմ արշավանքը տեղի է ունեցել 1173 թվականին[4]։

Առավել հավանական կարող է լինել 1173 թվականի վարկածը, քանզի 1170 թվականին Երուսաղեմի արքան չուներ հստակ պատճառ Կիլիկյան Հայաստանի դեմ արշավելու համար, և բացի այդ՝ հիշյալ թվականին նոր միայն Մլեհը գրավեց իշխանությունը երկրում և ներքին պայքար սկսեց իր իշխանության ամրապնդման համար։ Բացի այդ, ըստ միջնադարյան պատմիչների տեղեկությունների, Մլեհը 1170 թվականին որևէ տարածքային ձեռքբերում չի ունեցել ո՛չ բյուզանդացիներից և ո՛չ էլ խաչակիրներից։ Իսկ 1173 թվականը ավելի հավանական է, քանզի այդ ժամանակ արդեն հայոց իշխանապետը մեծ հաջողությունների էր հասել արտաքին քաղաքականության բնագավառում, և նրա համբավը տարածվել էր Կիլիկիայի սահմաններից դուրս։ Մլեհը

---

1 Տե՛ս **Guillaume de Tyr**, p. 291.

2 Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 274։

3 Տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, էջ 276։

4 Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 393, **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 69։

ստեղծել էր բավական ուժեղ պետություն, մարտունակ բանակ, դաշնակցում էր Արևելքում մահմեդական մի շարք պետությունների հետ, տարածքներ էր գրավել թե՛ Բյուզանդական կայսրությունից և թե՛ խաչակիրներից, և չէր բացառվում, որ մոտ ապագայում խաչակիրներին սպասում էին նոր կորուստներ: Եվ դա էր հնարավոր պատճառը, որ 1173 թվականին տեղի ունենար Երուսաղեմի արքա Ամորիի արշավանքը: Չի բացառվում նաև՝ դեպի Կիլիկիայի հայկական իշխանապետություն տեղի են ունեցել երկու առանձին արշավանքներ, որոնց մասին, սակայն, միջնադարյան պատմիչների երկերում էական տեղեկություններ չկան:

Ռընե Գրուսեն, անդրադառնալով այս դեպքերին, հետևյալ կարծիքն է հայտնում.«Ամորին սկզբում փորձեց ազդել հայոց իշխանապետի քրիստոնեական համերաշխության զգացմունքների վրա: Մի քանի անգամ նա պատգամավորներ ուղարկեց անօրեն հային՝ խնդրելով, որ նա իր նշանակած օրը և իր ուզած վայրում, գար և զրուցեր «ամենայն ապահովությամբ»: Մլեհը ձևացրեց, թե թագավոր ասածը իրեն շատ է դուր եկել և հայտնեց նրան, որ մեծ հաճույքով կգա, բայց նման ցանկություն բոլորովին չունի: Ընդհակառակը սկսեց հորինել իր խոստումը կատարելուն խանգարող պատրվակներ ու պատճառաբանություններ: Այնպես որ Ամորի արքան նկատեց, որ նրա մեջ խաբեությունից, ստից ու նենգությունից բացի այլ բան չէր կարող գտնել: Ուրեմն մնում էր միայն պատերազմը»[1]:

Այսպես՝ 1173 թ. իշխան Բոհեմոնդ Գ-ի խնդրանքով Երուսաղեմի թագավոր Ամորին, հավաքելով մեծաքանակ զորք, արշավանք ձեռնարկեց Կիլիկիայի հայոց իշխանապետության դեմ՝ նպատակ ունենալով պատժել հայոց իշխանապետին: Շրջանցելով դժվարանցելի լեռնային տեղանքը՝

[1] **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, էջ 278:

արքան առաջացավ դաշտավայրերով՝ ճանապարհին ավերելով գյուղերն ու հրկիզելով բերքը: Մինչ Մլեհը ամրացել էր իր զորքերով լեռնային շրջաններում, Նուր ադ-Դինը՝ որպես Մլեհի դաշնակից, ռազմարշավ կազմակերպեց և ստիպեց Երուսաղեմի արքային ընդհատել արշավանքը և վերադառնալ Երուսաղեմ[1]: Պապիկյանը, անդրադառնալով այս դեպքերին, նշում է, որ աթաբեկ Նուր ադ-Դինը նման քայլ կատարեց, քանի որ Մլեհից մեծ շահ ուներ[2]: Հավելենք, որ Հալեպի աթաբեկության համար չէր կարող ընդունելի լինել Կիլիկիայի հայոց պետության պարտությունը, և դա այն դեպքում, երբ հայոց իշխանապետը ջանասիրաբար պայքարում էր նաև Նուր ադ-Դինի թշնամիների դեմ:

Ինչ վերաբերում է Անտիոքի իշխանապետությանը, ապա նրա իրականացրած քայլերը Կիլիկիայի հայոց պետության դեմ պայքարում հաջողությամբ չպսակվեցին:

Փաստորեն, 12-րդ դարի 70-ական թվականների առաջին կեսերին Մլեհ-Նուր ադ-Դին դաշնակցությունը կարողանում էր հաջողությամբ դիմագրավել հակակիլիկյան կոալիցիայի երկրներին:

Հարց է առաջ գալիս նաև՝ ինչու Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինը համակերպվեց Կիլիկիայի հայկական իշխանապետության հզորացման ձգտումներին և ավելի՝ օժանդակեց նրան: Ս. Առաքելյանի պնդմամբ՝ Հալեպի տիրակալին ավելի շատ ձեռնտու էր որպես հարևան ունենալ հայկական հզոր

---

1 Տե՛ս **Bar Habraeus,** էջ 298. Այդ մասին տես նաև **C. Cahen**, La Syrie du Nord a , p. 414. Տե՛ս նաև Հայոց պատմություն, ակադեմիական հրատարակություն, էջ 345: Ըստ **Ս. Տեր Ներսիսյանի** 1173 թվականի գարնանը Բոհեմոնդ Գ-ն և հարևան բարոններից մի քանիսը շարժվեցին Մլեհի դեմ, բայց սկզբում հաջողություն չունեցան, և միայն դրանից հետո գործին միջամտեց Երուսաղեմի արքան, տե՛ս նույն տեղում, էջ 394:

2 Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 274-275:

պետություն, որը համենայն դեպս չէր սպառնա իրենց գոյությանը, քան դավադիր խաչակիրներին և Բյուզանդիային, որոնք անում էին ճիշտ հակառակը[1]: Շարունակելով իր միտքը՝ հետազոտողը նշում է, որ ամենևին էլ պատահական չէր Մլեհի դրամ կտրելու փաստը, որին հաջորդելու էր նրան թագավոր ճանաչելը[2]: Դա իրոք կարող էր իրականություն լինել, քանզի նշյալ ժամանակաշրջանում հայոց իշխանապետի թագադրմանը չէին կարողանա խանգարել ո՛չ Բյուզանդական կայսրությունը, ո՛չ էլ խաչակրաց պետությունները: Ս. Առաքելյանի տեսակետը պաշտպանում է նաև Ս. Պապիկյանը՝ կարծիք հայտնելով, որ Մլեհի նպատակը Հայկական Կիլիկիայի անկախության ձեռքբերումն էր, և որին հասնելու պայմանը իսլամական քաղաքականություն էր[3]: Շատ հավանական է, որ եթե Կիլիկիայի պետությունը նման քայլերով գնար, չէր բացառվում, որ Մլեհը մոտ ապագայում հռչակվեր թագավոր:

Մլեհի իշխանապետության իրադարձություններով ու հաղթանակներով հարուստ տարիները կարելի է համարել 1172-1173 թվականները, երբ նա պատերազմներ վարեց Բյուզանդական կայսրության, խաչակրաց պետությունների և Արևելքում հաստատված մի շարք այլ ուժերի դեմ և մեծ հաջողություններ գրանցեց: Մլեհի դաշնակցությունը Հալեպի սուլթանության հետ դրսևորվեց ոչ միայն Կիլիկիայից հարավ ընկած տարածքներում, այլև հյուսիսում:

Կան որոշակի փաստեր այն մասին, որ Մլեհ Ռուբինյանը՝ որպես Զանգիների պետության դաշնակից, ակտիվ մասնակցություն է բերել Փոքր Ասիայում տեղի ունեցող ռազմաքաղաքական անցուդարձերին, ինչպես նաև աջակցել է Հա-

---

1 Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 7:

2 Տե՛ս Նույն տեղում:

3 Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 273:

լեպի տիրակալին՝ նվաճելու Սեբաստիան:

Հայոց իշխանապետը ակտիվորեն միջամտեց Դանիշմանյանների պետության գահակալական ներքին կռիվներին: Այդ միջամտությունը լինում էր հիմնականում Հալեպի սուլթանի ցանկալի թեկնածուի օգտին: Այս փաստը վկայում է այն մասին, որ հայոց իշխանապետի համբավը դուրս էր եկել Կիլիկիայի հայկական պետության սահմաններից: Վ. Տեր-Ղևոնդյանը կարծիք է հայտնում, որ Մլեհի այս գործողությունների դիմաց էլ Նուր ադ-Դինը իր հերթին աջակցեց, որպեսզի հայոց կաթողիկոսի երկու թեկնածուներից հաղթի Մլեհի աջակցությունը վայելող Գրիգոր Դ Տղան[1]: Համաձայնելով Վ. Տեր-Ղևոնդյանի կարծիքին՝ կցանկանայինք նաև ավելացնել, որ եթե կաթողիկոսական ընտրության խնդիրն էլ չլիներ, Մլեհ Ռուբինյանը՝ որպես Նուր ադ-Դինի դաշնակից, կմասնակցեր վերոնշյալ արշավանքին:

Հայոց իշխանապետի համագործակցությունը Հալեպի աթաբեկության հետ չի սահմանափակվել միայն ռազմական դաշինքով: Նշվեց, որ Մլեհը Նուր ադ-Դինի հետ համատեղ դրամ է հատել[2], ինչն անշուշտ նպաստելու էր երկկողմ առևտրատնտեսական գործունեությանը:

Ժամանակակից հետազոտողներից Ս. Պապիկյանը Մլեհի վարած արտաքին քաղաքականությունը համարում է կարճատես, որն ազգին դեպի կործանում էր տանում[3]: Իսկ ահա Բակուրանը շատ անհասկանալի կարծիք է հայտնում,

---

[1] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Իշխանապետությունը և արաբական աշխարհը, Հայոց պատմություն, հ. Բ, միջին դարեր, գիրք երկրորդ, էջ 344-345:

[2] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 57, **նույնի՝** Շնորհալի և պարագայ, էջ 326, **Ա. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 49, **Ս. Առաքելյան,** նշվ. աշխ., էջ 7, Հայ ժողովրդի պատմություն, սկզբից մինչև 18-րդ դարի վերջը, խմբագրությամբ **Ս. Մելիք-Բախշյանի**, Եր., 1975, էջ 518:

[3] Տե՛ս **Ս. Պապիկյան**,նշվ. աշխ., էջ 273:

համաձայն որի՝ Մլեհ Ռուբինյանը պատմության մեջ տխուր համբավ թողեց[1]: Թեև մի քանի տող ներքև, հերքելով իր նախկին ասածը, նշում է, որ խաչակիրների դեմ իր տարած հաղթանակները նշանավոր են[2]: Սակայն գիտնականների ճնշող մեծամասնությունը, հայոց իշխանապետի վարած արտաքին քաղաքականությունը ճիշտ է համարում[3]: Թեև Մլեհ իշխանապետի հաջորդներից և ոչ մեկը չէր վարում նման ընդգծված հակալատին և հակաբյուզանդական քաղաքականություն, սակայն Կիլիկիայի գրեթե բոլոր հայ իշխանապետերը ու արքաները ձգտում էին ազատվել խաչակիրների և բյուզանդացիների կեղծ բարեկամությունից: Այն, որ պատմության առանձին դրվագներում Մլեհ իշխանապետը եղել է շատ դաժան, դա փաստ է, սակայն սխալ կլինի չգնահատել այն մեծ ու կարևոր նվաճումները, որոնց հայոց իշխանապետը հասավ Կիլիկիայի արտաքին քաղաքականության բնագավառում: Պարզ է մեկ հանգամանք, որ Կիլիկյան Հայաստանի հզորացումը, դաշտային տարածքների միացումը Կիլիկիայի հայոց պետությանը հնարավոր եղավ իրականացնել հակաբյուզանդական և հակալատին քաղաքականության շնորհիվ:

Ս. Առաքելյանը նշում է, որ Մլեհի հաղթանակների շնորհիվ Կիլիկիայի հայկական պետության մեջ մտան խոշոր նավահանգստային քաղաքներ: Նա ելք ունեցավ դեպի Միջերկրական ծով, որ նշանակում էր մաքսատուրքը ծովային

---

[1] Տե՛ս **Բակուրան (Վ. Քիւրճեան),** նշվ. աշխ., էջ 14:

[2] Տե՛ս Նույն տեղում:

[3] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, էջ 71, **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 130, **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 394-395, ***Ս. Առաքելյան,*** նշվ. աշխ., էջ 7, **Ա. Հովհաննիսյան**, Մլեհ իշխանապետի արտաքին քաղաքականության պատմությունից, էջ 27-36 և ուրիշներ:

առևտրից անցնելու էր Կիլիկիայի հայկական իշխանապետությանը՝ նպաստելով նրա տնտեսական հզորությանը[1]: Մլեհի ճիշտ արտաքին քաղաքականության շնորհիվ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը վերածվեց ծովային պետության[2]:

4.3 Մոսուլի աթաբեկության հետ դաշինքի վերացումը:

Նուր ադ-Դինը մահացավ 1174 թ. մայիսին, ինչը մեծ կորուստ էր նաև Մլեհի համար: Նրա մահից հետո Կիլիկիայի հայոց իշխանապետությունը զրկվեց ուժեղ դաշնակցից: Ինչպես նշում է Ս. Տեր-Ներսիսյանը, Հալեպի աթաբեկի մահով էլ ավարտվում է հայոց իշխանապետի հաջողությունների ժամանակաշրջանը[3]: Նուր ադ-Դինի մահից հետո Մլեհը կառավարեց մոտավորապես մեկ տարի: Կարևոր հարցադրում է նաև, թե ինչու Մլեհը Նուր ադ-Դինի մահից հետո չհամագործակցեց նրա հաջորդների հետ: Թվում է, որ կային բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի Կիլիկյան Հայաստանը շարունակեր իր համագործակցությունը Զանգիների պետության հետ: Բայց, ցավոք, այդ համագործակցությունը չշարունակվեց, և նույնն է վկայում նաև Իբն ալ-Ասիրը.«Նուր ադ-Դինի մահից հետո նրա հաջորդները դադարեցին հետևել այսպիսի քաղաքականության…»[4]: Իսկ ինչն էր պատճառը, որ այդ համագործակցությունը չշարունակվեց:

---

[1] Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 7:

[2] Տե՛ս Նույն տեղում:

[3] Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան**, էջ 394: Պատմիչ Քամալ ադ-դին ալ-Ադիմի վկայմամբ Նուր ադ-Դինը մահացավ շնչահեղձությունից 1174 թվականի մայիսի 14-ին, **Камал ад-Дин Ибн ал-Адим**, Сливки истории халеба, перевод Л. А. Семенова, М., 1990, օգտվել ենք www. Vostlit. Info կայքից, վերցված է 2020 թվականի փետրվարի 27-ին:

[4] **Իբն Ալ-Ասիր**, էջ 362:

Պետք է նշել, որ Նուր ադ-Դինի մահից հետո Հալեպի աթաբեկությունը թուլացավ: Իշխանությունը հանձնվեց Նուր ադ-Դինի անչափահաս որդուն, ասպարեզ եկան գահի շատ հավակնորդներ և զանազան էմիրներ, որոնք պայքարում էին իշխանության համար[1]: Նման պայմաններում հավանաբար երկկողմ հարաբերությունները վատթարացան: Համենայն դեպս, միջնադարյան պատմիչների երկերում չեն պահպանվել տեղեկություններ այն մասին, թե արդյոք եղել են որոշակի հարաբերություններ Մլեհ Ռուբինյանի և Նուր ադ-Դինի հաջորդների միջև: Ամենայն հավանականությամբ այդ մեկ տարում լուրջ իրադարձություններ չեն կատարվել, այլապես դրանք դժվար թե վրիպեին ժամանակակից պատմիչների ուշադրությունից:

Ի վերջո մահմեդական պետությունների հետ դաշնակցելը, կենտրոնացման խիստ քաղաքականությունը Մլեհ Ռուբինյանի դեմ տրամադրեցին Կիլիկիայի ավատատերերի մի մասին, հոգևորականությանը և, իհարկե, որոշ արտաքին ուժերի՝ մասնավորապես բյուզանդացիներին:

1175 թ. վերջին Սիս քաղաքում կազմակերպվեց մի դավադրություն, որը հանգեցրեց Մլեհի սպանությանը[2]: Անժխտելի է այն փաստը, որ Մլեհ իշխանապետի սպանության հիմնական պատճառը վերջինիս վարած արտաքին քաղաքականությունն էր:

---

[1] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան,** Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները, էջ 61-62, Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, խմբ. Լ. Սիմոնովսկայայի և Ֆ. Ացամբայի, Եր., 1973, էջ 338-339:

[2] Տե՛ս **Bar Habraeus**, էջ 305, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, էջ 112, **Սամվել Անեցի**, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 138, **Վահրամ Րաբունի**, էջ 211, **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, էջ 90: Մլեհ իշխանապետի սպանության մանրամասները տես աշխատության հինգերորդ գլխում:

Կարևոր է նաև ընդգծել, որ Մլեհ իշխանապետը պատմության մեջ մնաց որպես ուժեղ և խելացի դիվանագետ, ով կարողացավ ժամանակին ճիշտ կողմնորոշվել, մեծ օգուտ բերել Կիլիկիայի հայոց իշխանապետությանը և հիմքեր ստեղծել, որ այն հետագայում իշխանապետությունից վերածվի թագավորության:

Ժամանակակից հետազոտողներից Ե. Քասունին այն տեսակետն է արտահայտում, որ Մլեհ Ռուբինյանը կմնա որպես Կիլիկիայի հայկական իշխանապետության ամենահանդուգն քաղաքագետներից մեկը[1], իսկ Յ. Տեր-Ղազարյանը կարծիք է հայտնում, որ Մլեհի արևելյան քաղաքականությունը իր մահից ութ դար անց ընդունվեց իբրև ողջամիտ, փորձառու աշխարհայացք, և ինչը ձեռք բերվեց դառը փորձությունների գնով[2]:

[1] Տե՛ս **Ե. Քասունի**, Ռուբէն Գ իշխանապետ, (1175-1187), էջ 16:
[2] Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 171:

Գլուխ հինգերորդ

ՄԼԵՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5.1 Մլեհի սպանության տարեթվի խնդիրը:

12-րդ դարի 70-ական թվականների կեսերին Կիլիկիայի հայոց իշխանապետությունում դժգոհությունը Մլեհ իշխանապետի ներքին ու արտաքին քաղաքականության նկատմամբ հասնում է իր գագաթնակետին: Հայոց իշխանապետի խիստ կենտրոնացման քաղաքականությունը երկրի ներսում, նրա դաժան վերաբերմունքը տարբեր աշխարհիկ ու հոգևորական իշխողների նկատմամբ և համագործակցությունը շրջակա մահմեդական պետությունների հետ հանգեցրին նրան, որ երկրում Մլեհի դեմ ստեղծվեց ընդդիմություն, և մայրաքաղաք Սսում կազմակերպվեց դավադրություն, ինչի հետևանքով Կիլիկիայի հայոց պետությունը զրկվեց ուժեղ ղեկավարից:

Պարզենք, թե որ թվականին է տեղի ունեցել հայոց իշխանապետի սպանությունը:

Հայ պատմիչներից Մլեհի սպանությանն անդրադարձել են Վահրամ Րաբունին և Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը, սակայն վերջիններս չեն նշում որևէ թվական, այլ պարզապես միայն փաստում են, որ նա սպանվել է՝ դրանով բարդացնելով հետազոտողների աշխատանքը[1]: Այս

[1] Տե՛ս **Վահրամ Րաբունի**, էջ 211, **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 218:

խնդրի վերաբերյալ որոշակի տեղեկություններ կան նաև Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրության մեջ, որտեղ վերոնշյալ դեպքը թվագրվում է 1164 թվականով, ինչը սխալ է. «Ի թվին ՈԺԳ (1164) Մլեհ եղբայր Թորոսի սպանաւ ի Սիս...»[1], քանզի անվիճելի փաստ է, որ Մլեհը այդ թվականին չի կառավարել Կիլիկյան Հայաստանում և ոչ էլ կարող էր սպանվել: Պետք է նաև նշել, որ Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունը միակ աղբյուրը չէ, որ նման տեղեկություն է հայտնում Մլեհի սպանության մասին: Նմանատիպ տեղեկություն հանդիպում ենք նաև 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրներից մեկի մոտ. «ՈԺԳ (1164) Մլեհ եղբայրն Թորոսի սպանաւ ի Սիս»[2] և Միքայել Ասորու ժամանակագրության մեջ[3]: Ինչ խոսք, հավատ չեն ընծայում այս աղբյուրները, քանի որ նշված թվականին Մլեհը չի կառավարել Կիլիկյան Հայաստանում: Ամենայն հավանականությամբ այս հեղինակներն օգտվել են մեկը մյուսից և իրենց աշխատություններում գրանցել են նույն սխալ թվականը և հավանաբար նրանց օգտագործած աղբյուրում շփոթմունք կա՝ կապված վեց թվի հետ, այսինքն՝ 1174 թվականի փոխարեն արձանագրվել է 1164 թվականը:

Ի տարբերություն վերոնշյալ հեղինակների՝ այս խնդրին անդրադարձել են նաև այլ պատմիչներ: Անանուն Եդեսացին բավականին հանգամանորեն անդրադառնում է հայոց իշխանապետի սպանության մանրամասներին՝ նշելով 1175

---

[1] Տե՛ս **Ա. Մաթևոսյան**, Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1964, թիվ 4, էջ 189:

[2] Տե՛ս Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Ա, էջ 76:

[3] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 476:

թվականը[1]: Նույնանման տեղեկություն կա նաև Սմբատի աշխատությունում. «Իսկ յետ եւ ամի տերութեան Մլեհին, ի թուին Հայոց ՈԻԴ (624=1175), իշխանքն Մլեհին խորհեցան խորհուրդս անօրէնութեան և միաբանեալ սպանին ի քաղաք Սիս…»[2]: Անանուն Եդեսացու և Սմբատ Սպարապետի տեղեկությունը հաստատում է նաև ժամանակակից պատմիչներից Բար Հեբրաուսը իր ժամանակագրության մեջ[3]: Ինչպես նկատում ենք, միջնադարյան պատմիչների մոտ Մլեհի սպանության վերաբերյալ կան իրարամերժ տեղեկություններ:

Փաստորեն նախորդ տեղեկությունների համեմատ՝ Սմբատ Սպարապետի և նրա համախոհ պատմիչների հաղորդած տեղեկությունները ավելի ճշգրիտ են և կարող են մոտ լինել իրականությանը:

Վերը նշված վիճահարույց թվականի մասին որոշակի տեսակետներ են արտահայտվել նաև ժամանակակից մասնագիտական գրականության մեջ: Դրանք կարելի է բաժանել մի քանի խմբի.

1. Հետազոտողներ, որոնք խոսում են Մլեհ իշխանապետի սպանության մասին, սակայն չեն նշում թվականը: Դրանց թվին կարելի է դասել Յ. Տեր-Ղազարյանին[4], Ս. Տեր-Ներսիսյանին[5], Բակուրանին[6] , Ե. Քասունուն[7] և ուրիշների:
2. Հետազոտողների երկրորդ խումբը ՝ Ռ. Գրուսեն, Գ. Մի-

[1] Տե՛ս **Անանուն Եդեսացի**, էջ 135 (տե՛ս ծանոթագրություն 416, նույն տեղում, էջ 230):
[2] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 191-192:
[3] Տե՛ս **Bar Habraeus**, p. 305.
[4] Տե՛ս **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 268:
[5] Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 394:
[6] Տե՛ս **Բակուրան (Վ. Քիւրճեան)**, նշվ. աշխ., էջ 15:
[7] Տե՛ս **Ե. Քասունի**, Ռուբէն Գ իշխանապետ (1175-1187 թթ.) եւ իր կտակը, էջ 16-18:

քայելյանը, Մ. Զուլալյանը և ուրիշներ նշում են սպանության տարեթիվը:

Ռ. Գրուսեի դիտարկմամբ Մլեհին սպանել են 1174 թվականին[1]: Ի տարբերություն Գրուսեի՝ Կիլիկյան Հայաստանի հայտնի հետազոտող Գ. Միքայելյանը, ով բավական խորը ուսումնասիրել է Կիլիկիայի հայոց պետության պատմությունը, կարծիք է հայտնում, որ վերջինիս սպանությունը տեղի է ունեցել 1175 թվականի վերջին կամ էլ 1176 թվականի սկզբին[2]: Սակայն պետք է նշել մեկ կարևոր հանգամանք, որ թե՛ Ռընե Գրուսեն և թե՛ Գ. Միքայելյանը չեն նշում այն սկզբնաղբյուրը, որից օգտվել են: Գ. Միքայելյանի տեսակետը պաշտպանում է նաև Մ. Զուլալյանը[3]: Այս տեսակետը կիսում են նաև մի շարք այլ հետազոտողներ, որոնցից կարելի է առանձնացնել Ղ. Ալիշանին[4], Վ. Տեր-Ղևոնդյանին[5], Ս. Պապիկյանին[6], Ա. Բոզոյանին[7], Ս. Առաքելյանին[8], Վ. Ստեպանենկոյին[9], Կ. Մութաֆյանին[10], Լ. Տեր-Պետրոսյանին[11] և շատ ուրիշ հեղինակների:

Այսպիսով՝ հաշվի առնելով միջնադարյան պատմիչների ընձեռած տեղեկությունները, ինչպես նաև մասնագիտական

---

[1] Տե՛ս **Ռ. Գրուսե**, Լևանտի պատմություն, էջ 337:

[2] Տե՛ս **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 133:

[3] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, էջ 684:

[4] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ, էջ 326, **նույնի**, Սիսուան, էջ 57:

[5] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 71:

[6] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 274-275:

[7] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Կիլիկիայի հայկական պետությունը իշխանապետությունից թագավորություն, էջ 88:

[8] Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 8:

[9] Տե՛ս **В. Степаненко**, Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., с. 134.

[10] Տե՛ս **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 396:

[11] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 143:

գրականության մեջ առկա տեսակետները՝ կարող ենք արձանագրել, որ Մլեհ իշխանապետի սպանության առավել հավանական տարեթիվը 1175-ն է:

5.2 Մլեհ իշխանապետի սպանության վայրը:

Վահրամ Րաբունին անդրադարձել է հայոց իշխանապետի սպանությանը, սակայն չի նշել, թե որտեղ նա սպանվեց[1]: Միքայել Ասորին էլ որոշակիորեն խոսում է Մլեհի սպանության մասին և հիշատակում, որ հայոց իշխանապետը սպանվեց բերդում՝ առանց անունը նշելու. «…սպանաւ իշխանն Կիլիկեցւոյ կամօք իշխանաց իւրոյ ի բերդն…»[2]: Այն, որ հայոց իշխանապետը սպանվել է իր պետության ներսում գտնվող բերդերից մեկում, վկայում են նաև Անանուն Եդեսացին[3] և Բար Հեբրաուսը[4]: Պետք է նշել մի կարևոր հանգամանք՝ պատմիչների երկերում գրեթե անդրադարձ չի կատարվում: Շատ հետաքրքիր է, որ նրանցից և ոչ մեկն էլ չի խոսում հայոց իշխանապետի սպանության արտաքին գործոնի մասին: Չի բացառվում, որ դավադիրներին աջակցած լինեին բյուզանդացիները, ինչպես նաև Արևելքում հաստատված քրիստոնյա պետությունները, որոնք տուժել էին հայոց իշխանապետի քաղաքականությունից: Դրա մասին է վկայում Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանված եզակի ձեռագիրը. «Ի մեռանել Նորըտնին, որ բարեկամ էր Մլեհին, իշխանքն նորա խորհեցան ըսպանել զնայ, ըստ տիրայըսպան բարուց ազգիս եւ ըմբռնեալ կապեցին զնա և խնդրեցին բանալին եւ զմատանին գանձուն…որժամ ետես ըսպանեն, առ զմատանին ի բերանն, իսկ ոմն ներգնի ի զօրաց

---

1 Տե՛ս **Վահրամ Րաբունի, էջ 211:**

2 **Միքայել Ասորի, էջ 476:**

3 Տե՛ս **Անանուն Եդեսացի, էջ 135:**

4 Տե՛ս **Bar Habraeus, էջ 305**:

Հռօմոց փողոտեաց զնա, ածել զձեռն ի զենել տեղն հան զմատանին ի կոկորդէն եւ ըսպանել ընգեցին զնա…»[1]:

Նշված խնդրի վերաբերյալ Սմբատ Սպարապետը գրում է, որ հայոց իշխանապետը սպանվեց Կիլիկիայի մայրաքաղաք Սսում. «Իշխանքն Մլեհին խորհեցան խորհուրդս անօրէնութեան և միաբանեալ սպանին զնա ի քաղաքան Սիս»[2]: Մլեհի սպանությունը Սսում տեղի ունենալու մասին է վկայում նաև 13-րդ դարի մանր ժամանակագիրներից մեկը «Պատմութիւն ազգին Ռովբինեանց թէ որպէս տիրեցին Կիլիկիա» աշխատության մեջ. «Այս Մլեհ էր այդ չարասիրտ յոյժ և բազում աղտեղի գործաւք լցեալ, վասն որոյ սպանաւ ի զաւրաց ի մեծ քաղաքին Սիսոյ…[3], ինչպես նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը. «Սպանաւ ի զօրաց իւրոյ ի քաղաքն Սիս»[4]: Այս կարծիքի հետևորդն է նաև Ղևոնդ Ալիշանը[5]:

Միջնադարյան պատմիչների մի մասը վկայում է, որ Կիլիկիայի հայոց իշխանապետը սպանվել է մայրաքաղաք Սսի բերդում:

Ժամանակակից պատմագրության մեջ նույնպես իրարամերժ կարծիքներ են տիրում: Յ. Տեր-Ղազարյանը գտնում է, որ հայոց իշխանապետին սպանել են ոչ թե մայրաքաղաք Սսում, այլ Մեծքարի բերդում. «իր աւագանիին ձեռքով սպաննուեցաւ Մեծքար բերդին մեջ, ուր եւ թաղեցին զինք զրահովն ու թուրովը»[6]. սակայն հեղինակը ցույց չի տալիս այն սկզբնաղբյուրը, որից օգտվել է:

---

[1] Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 7620 ձեռագիր, հատոր Բ, Եր., 1970, սյուն 572, էջ 18:

[2] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 191-192:

[3] Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 103:

[4] **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 218:

[5] **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 347:

[6] **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 268:

Փաստորեն այս հեղինակը գտնում է, որ Մլեհը իր վերջին հանգրվանն է գտել այնտեղ, որտեղ սպանվել է: Ի տարբերություն Յ. Տեր Ղազարյանի՝ կան մի խումբ հետազոտողներ, որոնք կարծիք են հայտնում, թե Մլեհ իշխանապետի սպանությունը տեղի է ունեցել Կիլիկիայի մայրաքաղաք Սսում: Դրանց մեջ կարելի է նշել Ս. Տեր-Ներսիսյանին[1], Ռընե Գրուսեին[2], Վ. Տեր-Ղևոնդյանին[3], Ս. Առաքելյանին[4], Ղ. Ալիշանին[5]:

Կարելի է ենթադրել, որ Մլեհ իշխանապետի դեմ դավադրությունը նախապատրաստվել և սկսվել է Սիս քաղաքում, սակայն Մլեհը կարողացել է դուրս գալ մայրաքաղաքից և ապաստանել է իր բերդերից մեկում, սակայն հենց այնտեղ էլ կնքել է իր մահկանացուն: Այդ մասին են հայտնում պատմիչներ Անանուն Եդեսացին, Բար Հեբրաուսը և Միքայել Ասորին, որոնց կարծիքով հայոց իշխանապետը սպանվեց երկրի բերդերից մեկում:

5.3 Մլեհ իշխանապետի սպանության շարժառիթները:

Այժմ անդրադառնանք Մլեհ իշխանապետի սպանության շարժառիթներին: Դրանց վերաբերյալ բավական տեղեկություններ կան թե՛ միջնադարյան պատմիչների երկերում և թե՛ մասնագիտական գրականության մեջ: Միջնադարյան պատմիչներից առաջինը այդ հարցին անդրադարձել է Սմբատ Սպարապետը, ում տեղեկությունների համաձայն՝ Մլեհին

---

1 Տե՛ս **Ս. Տեր-Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 394:

2 Տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, հ. Ա, էջ 279:

3 Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, էջ 71:

4 Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 8:

5 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 326:

սպանել են դժնի արարքների համար[1]: Ըստ Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկի՝ նրան սպանեցին «վասն խստասրտութեան ոչ կարացեալ յերկարել...»[2]:

Ինչպես նկատում ենք, պատմիչների հաղորդած տեղեկություններում կան էական տարբերություններ՝ Մլեհի սպանության հանգամանքների վերաբերյալ: Այն, որ Մլեհը շատ խստասիրտ է եղել, դա ճշմարիտ է, սակայն դժվար է համաձայնել, որ նրա սպանության հիմքում կարող էր ընկած լինել միայն այդ գործոնը: Չէ՞ որ հենց այդ խստասրտության շնորհիվ էր, որ Կիլիկիայի հայոց իշխանապետությունը Մլեհի կառավարման ժամանակաշրջանում արտաքին քաղաքականության բնագավառում ունեցավ մեծ հաջողություններ և դուրս եկավ Միջերկրական ծովի ափ, տիրեց մի շարք կարևոր նավահանգիստներ, որով հայոց պետությունը ավելի ուժեղացավ և հարստացավ: Բացի այդ՝ նրա խստասրտության շնորհիվ էր, որ մի կողմից նա կարողացավ սանձել կենտրոնախույս ձգտումներ դրսևորող իշխաններին, մյուս կողմից էլ Բյուզանդական կայսրությունը և Արևելքում հիմնված խաչակրաց պետությունները դադարեցին միջամտել Կիլիկիայի հայոց պետության ներքին գործերին, և հայկական իշխանապետությունը ներքին և արտաքին ասպարեզում զգալիորեն հզորացավ:

Մլեհ իշխանապետի սպանության պատճառներին անդրադարձել են նաև օտար պատմիչները:

Վիլհելմ Տյուրացին տեղեկացնում է, որ սպանության պատճառը Մլեհի կողմից հայ ժողովրդի զգացումների վիրավորումն էր[3]: Դժվար է համաձայնել այս պատմիչի տեղեկությանը: Թեև իր կառավարման ժամանակ Մլեհը շատ դաժան

---

[1] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, էջ 90:

[2] **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 218:

[3] Տե՛ս **Guillaume de Tyr**, էջ 352-353:

է վարվել առանձին անձանց նկատմամբ, այնուամենայնիվ անվտանգ է դարձրել երկրի սահմանները, հզորացրել է Կիլիկիայի հայոց պետությունը և հիմքեր ստեղծել թագավորության ստեղծման համար: Այլ հարց է, թե արդյոք խաչակրաց պետությունները և կաթոլիկ հոգևորականները համաձայն եղել են նրա քաղաքական գծին, թե ոչ: Կարծում ենք, որ Մլեհի գործողությունների մեջ չկա հայ ժողովրդի զգացումները վիրավորելու որևէ գործողություն:

Պատմիչ Միքայել Ասորին էլ, անդրադառնալով վերը նշված դեպքին, ավելացնում է, որ հայոց իշխանապետը սպանվել է հայ իշխանների կամքով[1]:

Այն, որ Մլեհի սպանության մեջ շահագրգռված կլինեին նաև Կիլիկիայի պետության որոշ իշխաններ, կարծում ենք նույնիսկ մեկնաբանման կարիք չունի, քանզի հայոց իշխանապետը իր կառավարման ժամանակաշրջանում հասցրել էր թշնամանալ շատերի հետ, և դրանց մի մասը կցանկանար հարմար առիթի դեպքում վրեժխնդիր լիներ:

Խնդրին անդրադարձել են նաև ժամանակակից հետազոտողները: Մասնավորապես հարցի կապակցությամբ հետաքրքիր տեսակետ է արտահայտել Ս. Ռենսիմանը, ինչը նույնպես արժանի է ուշադրության: Հետազոտողը կարծում է, որ Մլեհը Նուր ադ-Դինի մահվանից անմիջապես հետո տապալվեց իր եղբորորդու՝ Ռուբեն Գ-ի կողմից[2]:

Փաստորեն Ս. Ռենսիմանը բավական լուրջ մեղադրանք է ներկայացնում Մլեհի եղբորորդուն, թեև հետազոտողը որևէ այլ մանրամասն չի տալիս: Պետք է նշել մի կարևոր հանգամանք. վերոնշյալ խնդրի կապակցությամբ միջնադարյան պատմիչների աշխատանքներում գրեթե չեն պահպանվել տեղեկություններ Ռուբենի դերակատարման մասին,

---

[1] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 476:

[2] Տե՛ս **S. Runciman**, A history of the Crusades, vol. II, p. 218-219.

թեև հանուն արդարության պետք է ասել, որ Ռուբենը՝ որպես Ռուբինյան դինաստիայի ներկայացուցիչ, կարող էր մասնակից լինել այդ ոճիրին: Մանավանդ այն պարագայում, որ հայոց իշխանապետի քաղաքականությունից դժգոհ էին Կիլիկիայի որոշ իշխաններ, հոգևորականներ և հարակից քրիստոնյա պետություններ, մասնավորապես Բյուզանդական կայսրությունը և Արևելքում հաստատված խաչակրաց իշխանությունները: Միակ տեղեկությունը, որ հասել է մեզ, Սմբատ Սպարապետի աշխատությունից է, ում վկայմամբ Ռուբենը Մլեհի սպանությունից հետո իր շնորհակալությունն է հայտնում իշխաններին և մեծարում նրանց Մլեհի սպանության, ինչպես նաև իրեն իշխանապետի աթոռին բազմեցնելու համար.«Եւ օր մի արար Ռուբէն պատիւ իշխանացն եւ շնորհակալեցաւ ամենեցուն վասն երախտեացն զոր արարին նմա, եւ սպանին զհօրեղբայրն իւր եւ դրին զնա ի տեղ նորա»[1]: Շարունակելով իր միտքը՝ պատմիչը նշում է, որ որոշ ժամանակ անց Ռուբենը պարզեց, թե ովքեր են եղել իր հորեղբոր սպանությունն իրականացնողներն և հրամայեց նրանց խեղդամահ անել գետում. «և ապա հրամայէ կապել վէմս ի պարանոց նոցա և ձգել ծածկաբար ի գետն, որուց էին անուանքն միոյն Ջահան և միւսոյն Ապլղարիպ, որ էր ներքինի»[2]:

Ինչպես նկատում ենք, Սմբատ Սպարապետը չափազանց կարևոր տեղեկություն է հաղորդում Մլեհ իշխանապետի սպանության վերաբերյալ, սակայն այս տեղեկությունը չի հաստատվում միջնադարյան որևէ այլ հեղինակի կողմից:

Կարծում ենք, որ Ռենսիմանի տեսակետը կարող է մոտ

---

[1] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 192: Յ. Տեր-Ղազարյանի պնդմամբ Ռուբենը իշխանության գալու պահին 30 տարեկան էր, **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 268:

[2] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 192:

լինել իրականությանը, քանզի շատ հավանական է, որ Հալեպի աթաբեկի մահից հետո Մլեհի հակառակորդները համոզել են Ռուբենին, որպեսզի վերջինս մասնակցի իրենց դավադրությանը և իշխանությունը վերցնի իր ձեռքը: Այդ է վկայում նաև Լ. Տեր-Պետրոսյանը: Նա, անդրադառնալով նշյալ հարցին, կարծիք է հայտնում, որ միգուցե վերջինս փորձել է, Ջահանին և Ապլղարիբին սպանելով, վերացնել վկաներին[1]:

Ղևոնդ Ալիշանը մի տեսակետ է առաջ քաշում, համաձայն որի՝ իշխանները այլևս չհանդուրժեցին Մլեհին և դավաճանելով նրան՝ սպանեցին մայրաքաղաք Սսում[2]: Խնդրին անդրադարձել է նաև Ե. Քասունին և կարծում է, որ Մլեհը զոհն էր իր վարած քաղաքականության[3]: Բնական է, որ Բյուզանդիան չէր համակերպվելու հայ-իսլամական դաշնակցության հետ և անշուշտ սպասելու էր հարմար առիթի՝ նշյալ զինակցությունը չեզոքացնելու և իր խախտված դիրքերը Կիլիկիայում վերականգնելու համար: Այդ հնարավորությունը ստեղծվեց Նուր ադ-Դինի մահից հետո: Մ. Օրմանյանը տեսակետ է առաջ քաշում, համաձայն որի՝ Մլեհը անտանելի էր դարձել իր բռնապետական գործելակերպով, և դրա համար էլ սպանվեց Սսում[4]:

Քասունին հայոց իշխանապետի սպանության հետևում բյուզանդական դավ է տեսնում, որը կարծում ենք շատ մոտ է իրականությանը: Մի շարք այլ հետազոտողներ անդրադարձել են խնդրին: Ըստ Բակուրանի՝ հայոց իշխանապետին սպանեցին հավանաբար կուսակցական վրեժխնդրութ-

---

1 Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 151-152:

2 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 57:

3 Տե՛ս **Ե. Քասունի**, նշվ. աշխ., էջ 16:

4 Տե՛ս **Մ. Օրմանյան**, նշվ. աշխ., հ. Ա, սյուն 1700:

յան հետևանքով[1], իսկ Լ. Տեր-Պետրոսյանի պնդմամբ Մլեհ իշխանապետի սպանության պատճառը այն էր, որ նա «ուզուրպատոր» էր, քանի որ խախտվել էր գահաժառանգման կարգը, իշխանությունը բռնազավթվել էր, ինչն էլ ուղեկցվել էր մանկահասակ Ռուբեն Բ-ի սպանությամբ[2]:

Չի բացառվում, որ հայոց իշխանապետի սպանության մասնակիցներն ավելի շատ էին, և որոշ այլ իշխաններ նույնպես մասնակից էին դավադրությանը: Եվ Ռուբենը, խեղդամահ անելով այդ երկուսին, փորձեց իր կողմը քաշել Մլեհի կողմնակիցներին և ցանկացավ ցույց տալ, որ նա մասնակցություն չունի հորեղբոր սպանությանը, և դա նույնիսկ այն պարագայում, որ Մլեհը ժամանակին խնդիրներ էր ունեցել նաև Ստեփանեի հետ[3]:

Հավանական ենք համարում, որ Կիլիկիայի իշխանները նույնիսկ կհանդուրժեին այդ բռնազավթումը, եթե չլինեին Մլեհի վայրագությունները և դաժանությունները: Այս պարագայում նրանց մոտ մշտապես կարող էր լինել ահ սեփական անձի, ընտանիքի և ունեցվածքի ապահովության համար:

Այժմ փորձենք ներկայացնել սպանության մանրամասները: Առաջիններից մեկը այդ մասին խոսում է Ավետիք Տիգրանակերտցին և նշում, որ նա սպանվեց զինվորականների ձեռքով. «Եւ վասն չարասիրտ գոլոյն սպանաւ ի զօրացն»[4]: Ցավոք, այլ մանրամասներ հեղինակը չի հայտնում: Այս մասին խոսում է նաև Անանուն Եդեսացին և նշում.«Զինվորականներն ու ժողովուրդը չհանդուրժեցին նրա անիրավութ-

---

[1] Տե՛ս **Բակուրան (Վ. Քիւրճեան),** նշվ. աշխ., էջ 15:

[2] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 148:

[3] Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Գրիգոր Տղայ եւ Սալահ էդ-Դին, Բազմավէպ հանդէս, Վենետիկ, Ս. Ղազար, 1975, թիվ 1-2, էջ 164:

[4] **Ավետիք Տիգրանակերտցի**, Խաչակիրները և հայերը, հատոր Բ, էջ 566:

յունները և զորքերն ապստամբեցին նրա դեմ: Մլեհը, իմանալով, որ ցանկանում են իրեն սպանել՝ փախավ և փորձեց մտնել իր երկրում գտնվող մի անառիկ բերդ, սակայն երբ հասավ բերդի դարպասին, բերդում եղող զինվորները դուրս գալով բռնեցին և չարաչար սպանությամբ պատառոտեցին նրան: Դա մի սահմռկեցուցիչ և դաժան արարք էր: Այնուհետև Տարսոնից հրավիրեցին Մլեհի պատանի եղբորորդուն՝ Ռուբենին, որն այնտեղ էր փախել Մլեհի չարագործությունների պատճառով»[1]:

Ինչպես նկատում ենք, Անանուն Եդեսացին բավականին տեղեկություններ է հաղորդում հիշյալ խնդրի վերաբերյալ: Այս մասին որոշակի տեղեկություններ է հայտնում նաև Բար Հեբրաուսը, համաձայն որի՝ հայ իշխանները ապստամբեցին Մլեհի դեմ: Նա այդ ժամանակ Կիլիկիայի կառավարիչն էր: Երբ իշխանը գլխի ընկավ, որ իրեն ցանկանում են սպանել, փախավ իր ամրոցներից մեկը, որի կայազորը դավաճանեց իրեն, ինչի հետևանքով հայոց իշխանապետը սպանվեց, իսկ մարմինը մասնատվեց[2]:

Սպանությանն անդրադարձած բոլոր պատմիչները վկայում են, որ այն հստակ ծրագրավորված է եղել, և Կիլիկիայի հայ իշխանները մասնակցություն են ունեցել այդ ոճիրին: Այդ մասին է վկայում Սամվել Անեցու շարունակողի վկայությունը. «Իշխանքն սպանին զչարասիրտն Մլեհ ի Սիս և բերեալ զ Ռուբէն զորդի Ստեֆանէի»[3], ինչպես նաև Սմբատ Սպարապետը. «Իշխանքն Մլեհին խորհեցան խորհուրդս անօրէնութեան և միաբանեալ սպանին զնա…»[4]: Մլեհի դեմ կազմակերպած դավադրության մասին իշխանների մասնակցությանը խոսում է նաև Միքայել Ասորի պատմիչը իր

---

[1] **Անանուն Եդեսացի**, էջ 135:

[2] **Bar Habraeus**, էջ 305:

[3] **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 138:

[4] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 191-192:

ժամանակագրության մեջ.«Սպանաւ իշխանն կիլիկիեցւոց կամօք իշխանաց իւրոյ ի բերդն և բերին զՌուբէն որդի պարոն Ստեփանէի»[1]: Թեև այստեղ պատմիչը չի նշում Մլեհի անունը, սակայն պարզ է, որ խոսքը վերաբերում է հենց նրան, որին էլ հետագայում հաջորդեց իր եղբորորդին՝ Ռուբեն Գ-ն:

Փաստորեն պատմիչների տեղեկություններից հստակ երևում է, որ բացի արտաքին աջակցությունից, Մլեհի դավադրությանը ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև Կիլիկիայի հայ իշխանները, առանց որոնց դժվար թե հնարավոր լիներ իրականացնելու այդ սպանությունը:

Այսպիսով՝ հետազոտելով միջնադարյան պատմիչների տեղեկությունները, ինչպես նաև ժամանակակից գրականության մեջ առկա տեսակետները, կարող ենք հանգել նրան, որ Կիլիկյան Հայաստանի իշխանապետ Մլեհ Ռուբինյանի սպանության պատճառներն էին.

1. Մլեհի վարած արտաքին քաղաքականությունը. համագործակցությունը Հալեպի աթաբեկության և շրջակա մահմեդական տերությունների հետ, ինչը նրա դեմ հանեց Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր տերերի մի մասին[2], ինչպես նաև արևելքում հաստատված խաչակրաց պետություններին և Բյուզանդական կայսրությանը:
2. Հայոց իշխանապետի վարած ներքին խիստ կենտրոնացման քաղաքականությունը:

---

[1] **Միքայէլ Ասորի**, էջ 476:

[2] Բայց մյուս կողմից էլ, Մլեհ իշխանապետի հաջորդը՝ Ռուբեն Գ-ն, շարունակեց դաշնակցությունը Արևելքի որոշ մահմեդական տերությունների հետ և Բյուզանդական կայսրության դեմ պայքարում դաշնակցեց Իկոնիայի սուլթանության հետ: Հանգամանք, ինչը վկայում է, որ նշյալ պատմական ժամանակաշրջանում Կիլիկիայի հայոց պետության շահերից բխել է համագործակցությունը տարածաշրջանի մահմեդական պետությունների հետ, ինչը, կարծում ենք, նորմալ երևույթ էր և տրամաբանական:

Չմոռանանք նաև նշել, որ Մլեհ իշխանապետի սպանութ-յունից հետո, երբ առաջ եկավ Կիլիկիայում նոր իշխանապե-տի թեկնածության հարցը, Ռուբինյանների դինաստիայից կային Ստեփանեի որդիներ Ռուբենը և Լևոնը, ինչպես նաև Մլեհի որդին՝ Գևորգը, սակայն Կիլիկիայի իշխանները չցան-կացան հայոց իշխանապետի աթոռին բազմեցնել Մլեհի որ-դուն: Եվ շուտով նրանց որոշմամբ Կիլիկիայի հայոց իշխա-նապետի աթոռը վստահվեց Մլեհի եղբոր՝ Ստեփանեի ա-վագ որդուն՝ Ռուբեն Գ-ին. «Եւ առաքեն ի Պապեռանն եւ կո-չեն զաւագ որդին Ստեֆանէի զՌուբէն՝ դնել յաթոռ նախնե-աց իւրոյ»[1]:

Ինչ վերաբերում է Մլեհի թաղմանը, ապա պետք է նշել, որ այն իրականացրեց նրա եղբորորդին՝ Ռուբեն Գ-ն, և հայոց իշխանապետի աճյունը ամփոփեց իր իսկ կողմից կա-ռուցված Մեծքարի վանքի տարածքում. «Եւ թաղեցաւ ի վանքն Մեծքար կոչեցեալ, զոր իւր իսկ շինեալ էր»[2]: Ինչպես նշում է Ս. Առաքելյանը՝ նա պատմությանը թողեց հակասա-կան գնահատականներ իր անձի և գործունեության մասին[3]:

Չի բացառվում, որ հայոց իշխանապետի սպանության մասնակիցներն ավելի շատ էին, և որոշ այլ իշխաններ նույնպես մասնակից էին այդ դավադրությանը: Եվ Ռուբե-նը, խեղդամահ անելով այդ երկուսին, փորձեց իր կողմը քաշել Մլեհի կողմնակիցներին և ցանկացավ ցույց տալ, որ նա մասնակցություն չունի հորեղբոր սպանությանը, և դա նույնիսկ այն պարագայում, որ Մլեհը ժամանակին խնդիր-

---

1 **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 192:

2 **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 347, **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 218, **Վահրամ Րաբունի**, էջ 211: Այդ մասին տես նաև **Հ. Ոսկյան,** Կիլիկիայի վանքերը, էջ 246-247, էջ 352, **Յ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 172, **Ե. Քասունի**, նշվ. աշխ., էջ 17:

3 Տե՛ս **Ս. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 8:

ներ էր ունեցել նաև Ստեփանեի հետ[1]:

Ռուբենը շատ հարգալից վերաբերմունք է ցուցաբերում իր հորեղբոր տիկնոջ նկատմամբ: Դրա մասին որոշակի տեղեկություններ ենք հանդիպում Անանուն Եդեսացու ժամանակագրության մեջ. «Մլեհի կինը հայոց Գրիգոր կաթողիկոսի քույրն էր: Երբ Մլեհը սպանվեց և իշխանության գլուխ անցավ Ռուբենը, կաթողիկոսը գնաց այնտեղ և վերցնելով քրոջը՝ բերեց Հռոմկլա: Ռուբենը վերջինիս երեք բերդ տվեց Կիլիկիո երկրում՝ Սարվանդիքարը, Սիմանկլան և Վանավեըը »[2]:

Ամեն դեպքում պետք է փաստել հետևյալ իրողությունը. թեև Մլեհի քաղաքականությունից Կիլիկիայում դժգոհ էին որոշ իշխաններ, հոգևորականներ և այլ գործիչներ, և նա սպանվեց դաժանորեն, այնուամենայնիվ Մլեհի կառավարման շնորհիվ գրանցվեցին մի շարք հաջողություններ, որոնցից պետք է առանձնացնել հետևյալները.

1. Բավականին հզորացավ Կիլիկիայի հայոց իշխանապետությունը և ամրապնդեց իր դիրքերը տարածաշրջանում՝ ի հաշիվ նաև Մլեհի ստեղծած հզոր և մարտունակ բանակի:
2. Բյուզանդական կայսրությունը և Արևելքում հիմնված խաչակրաց իշխանությունները դուրս մղվեցին Կիլիկյան Հայաստանից և դադարեցին միջամտել հայոց պետության ներքին գործերին:
3. Կիլիկիայի հայկական պետության սահմանները հասան Միջերկրական ծովի ափերին, և հայոց պետությունը սկսեց ակտիվորեն մասնակցել միջազգային առևտրին, ինչը հարստացնում էր պետական գանձարանը:

---

[1] Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Գրիգոր Տղայ եւ Սալահ էդ-Դին, Բազմավէպ հանդէս, Վենետիկ, Ս. Ղազար, 1975, թիվ 1-2, էջ 164:

[2] **Անանուն Եդեսացի**, էջ 135:

4. Զարկ տրվեց շինարարական աշխատանքներին, որոնց մեջ կարելի է առանձնացնել նոր մայրաքաղաքի՝ Սսի կառուցումը. Սիսը այդ կարգավիճակում մնաց մինչև 1375 թվականը՝ Կիլիկիայի հայոց թագավորության անկումը:
5. Իրականացվեցին մի շարք քայլեր, որոնք ապագայում հանգեցրին Կիլիկիայի հայկական պետության միջազգային կարգավիճակի բարձրացմանը՝ թագավորության հռչակմանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մլեհ իշխանապետը Կիլիկյան Հայաստանում կառավարեց շուրջ վեց տարի և մեծ անուն թողեց ոչ միայն Կիլիկիայի հայոց իշխանապետության, այլև ողջ մերձավորարևելյան տարածաշրջանի պատմության մեջ: Նրա գործունեության պատմությունը հիմնականում բաժանվեց երեք մասի:

Առաջին մասը ներառում է 1137 թվականից մինչև 1160-ական թվականների առաջին կեսերը: Այդ ժամանակահատվածում Մլեհը մուտք գործեց քաղաքական ասպարեզ: 1140-ական թվականների կեսերին վերադառնալով Կիլիկիա իր եղբոր՝ Ստեփանեի հետ՝ գլխավորեց Կիլիկիայի հայկական պետության ռազմական ուժերը: Այդ տարիներին և՛ Մլեհը, և՛ Ստեփանեն մեծ ներդրում ունեցան թե՛ Կիլիկիայի հայկական պետության անկախության վերականգնման և թե՛ հայոց իշխանապետության սահմանների ընդարձակման հարցում:

Երկրորդ մասը ներառում է Մլեհ Ռուբինյանի Կիլիկյան Հայաստանից արտաքսման ժամանակաշրջանը: Եղբոր հանդեպ իրականացրած անհաջող դավադրությունից հետո վերջինս անդամակցեց տաճարականների միաբանությանը: Կարճ ժամանակ անց՝ հեռանալով նրանց միաբանությունից՝ Մլեհը ծառայության անցավ Հալեպի աթաբեկությունում՝ Նուր ադ-Դինի մոտ և այդ տարիներին կարողացավ իրեն դրսևորել դրական կողմերով և վայելել Հալեպի տիրակալի հարգանքը և վստահությունը:

Երրորդ մասը վերաբերում է Մլեհի իշխանապետության ժամանակաշրջանին, երբ իրականացվեցին մի շարք բախտորոշ քայլեր թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականութ-

յան բնագավառում: Այս ժամանակաշրջանում էականորեն փոխվեց Կիլիկյան Հայաստանի պետական քաղաքական կառավարման համակարգը:

Քննության առնելով միջնադարյան սկզբնաղբյուրների վկայությունները, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ հանգում ենք նրան, որ Մլեհ Ռուբինյանը պատմական ասպարեզ իջավ քաղաքական այնպիսի բարդ պայմաններում, երբ մերձավորարևելյան տարածաշրջանում իրավիճակը շարունակում էր մնալ խիստ լարված: Տվյալ պատմաշրջանում գործում էին բավական հզոր պետություններ և Կիլիկիայի հայոց իշխանապետությունը կանգնած էր թե՛ ներքին և թե՛ արտաքին մարտահրավերների առաջ: Մլեհը դեռևս երիտասարդ տարիներից տեսավ թե՛ իր ընտանիքի անդամների և թե՛ Կիլիկիայի հայկական պետության նկատմամբ հարևան երկրների թշնամական քաղաքականությունը, որոնցից հատկապես առանձնանում էին Բյուզանդական կայսրությունը և Արևելքում հիմնված խաչակիրների պետությունները: Նա բավական երիտասարդ տարիներից զրկվեց ծնողներից և հարազատներից: Վերջինիս կյանքում համար մեկ թշնամին դարձավ Բյուզանդական կայսրությունը, ում դեմ էլ իշխանության գալուց հետո ուղղվեց նրա դիվանագիտական և ռազմական եռանդը:

Մլեհ Ռուբինյանի քաղաքական ասպարեզ իջնելը սկսվեց 1137 թվականի Բյուզանդական կայսրության կողմից դեպի Կիլիկիա արշավանքից հետո, երբ վերջինս եղբոր՝ Ստեփանեի, հետ կարողացավ խույս տալ գերությունից և ապաստանեց Եդեսիայում իր ազգականի մոտ: Հոր և եղբոր՝ Ռուբենի, սպանությունից հետո միանալով Ստեփանե և Թորոս եղբայրներին՝ Մլեհը մասնակցեց Կիլիկիայում սկսված ազատագրական պայքարին, կառավարեց Կիլիկիայի հայոց բանակը, և այդ տարիներին հայոց պետության ռազմական ուժերը տարան մի շարք հաղթանակներ, բարձրացվեց

